

Ո.ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՖՐԱՍԻԱՅԻ ԵՎ
ՍԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ
ՆՈՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական
համալսարան

Ո.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երևան
Լինգվա
2006թ.

ԴՏԴ 944 (44): 942(410)
ԳՄԴ 63.3 (4ֆր) + 63.3(4Մբ)
Գ 479

Նրատարակվել է Երևանի Վ.Բյուլուսովի անվան պետական լեզ-
վաբանական համալսարանի գիտխորհրդի Երաշխավորությամբ:

Գ 479 Գևորգյան Ռ. Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի
նորագույն պատմություն. -Եր.: Լինգվա, 2006, 135էջ:

Գրախոս՝ ՀՀԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ
գիտաշխատող պ.գ.թ. **Երվանդ Մարգարյան**
Խմբագիրներ՝ ՀՀԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական
խմբի ղեկավար, պ.գ.դ. **Է. Ղանիելյան**,
ԵՊԼՀ –ի հայագիտության ամբիոնի դասախոս,
բ.գ.թ., դրույնատար **L. Փարեմուզյան**.

Գ 0503000000 2006թ. ԳՄԴ 63.3 (4ֆր)+63.3(4Մբ)
0134(01) - 2006

Զեռնարկում համառոտ շարադրված է Ֆրանսիայի և Մեծ
Բրիտանիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական նորագույն
պատմությունը: Այն համապատասխանում է ուսումնական պլանով
նախատեսված համապատասխան դասընթացին ներկայացվող
պահանջներին և օգտակար կլինի բոլոր նրանց համար, ովքեր
հետաքրքրվում են Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի նորագույն
պատմությամբ:

ՖՐԱՆՍԻԱ



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՖՐԱՆՍԻԱՆ 2-ՐԴ ՀԱՍԱԾԻԱՐՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ: 4-ՐԴ ՀԱՍՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. Ժամանակավոր վարչակարգ: 4-րդ Հանրապետության սահմանադրա-իրավական ծևակորումը

Իշխանության նարմինների կազմավորումը ազատագրված ֆրանսիայում գտնվում էր Դիմադրության 2 մեծ կուսակցությունների հսկողության ներքո՝ դրզոյան, որը կոչվում էր Ֆրանսիայի ազգային ազատագրական կոմիտե /ՖԱԱԿ/ և Դիմադրության ազգային խորհրդի, որը գլխավորում էր Լուի Սայանը: 1944թ.-ի հունիսի 2-ին ՖԱԱԿ-ը հայտարարեց իրեն ժամանակավոր կառավարություն: Նրա գլխավորությամբ Ալժիրում սկսեց գործել Կոնսուլտատիվ ասամբլեա, որը միավորեց Դիմադրությանը պատկանող խմբեր որ ներկայացուցիչների մեծամասնությունը: Խոկ Ֆրանսիայի տարածքում ռազմական գործողությունների ավարտից հետո իշխանությունը անցավ ազգային ազատագրա կան դեպարտամենտների կոմիտեներին: Նրանք լուծարեցին վիշիստական վարչությունը և ստեղծեցին ազգային տրիբունալ և ոստիկանություն: Փարիզի ազատագրումից հետո դը Գոլը սկսեց ծևակորել պետական իշխանությունը: Ժամանակավոր կառավարության ստեղծման հետ մեկտեղ 1944թ. օգոստոսի 21-ից դեպարտամենտներում նշանակված պրեֆեկտները անցան գերագույն և մոլոնիցիպալ խորհուրդների վերականգնման գործընթացին: Խոչոր քաղաքներում ժամանակավոր կառավարության ներկայացուցիչները դարձան, այդպես կոչված, «հանրապետության կոմիսարներ»: Օգոստոսի 28-ին դը Գոլը լուծարեց Ֆրանսիայի ներքին ուժերը /ՖՆՈՒ/, խոկ հոկտեմբերի 28-ին՝ ոստիկանությունը: 1944թ.-ի հոկտեմբերին Ավինյոնում հավաք վեց ազգային ազատագրական կոմիտեների համագումարը /Գերագույն օնահանգներ/: Նրա պատգամավորները ճանաչեցին ժամանակավոր կառավարության գերագույն իշխանությունը, սակայն մեկ պայմանով՝ նրա կազմի մեջ պետք է նտոնեին «ներքին Դիմադրության» խմբերի ներկայացուցիչները, ներառյալ կոմունիստները: Բացի տնտեսական և սոցիալ ինֆրակառուցվածքի վերականգնմանը, ժամանակավոր կառավարության կարևորագույն խնդիրը սահմանադրա-իրավական բարեփոխումների նախապատրաստումն էր:

Քաղաքական դրությունը երկրում մնում էր ծայրահեղ ծանր: Պատերազմը պառակտեց ֆրանսիական ազգը: Պետենի կառավարության հետ համագործակցում էին պետական բյուրոկրատիայի մեծանասնությունը և ծեռարկատերերի գգալի մասը: Վիշխտների ագրարային քաղաքականությանը աջակցում էին գյուղացիները, իսկ շատ զիվորական ներ հրաժարվեցին հետևել դը Գոլի կոչին և դուրս գալ վիշխտների դեմ: Ֆրանսիայի ազատագրումից հետո ավելի քան 190.000 ֆրանսիացիներ մեղադրվեցին կոլաբորացիոնիզմի մեջ, նրանցից 100.000 դատապարտվեցին ազատազրկմանը: Երկրի համար, որտեղ դեռևս պահպանվել էր միջին դասակարգը, որտեղ անուր էին նահապետական ավանդությունները գյուղում, կարողիկ հոգևոր մշակույթի ազդեցությունը, այդպիսի փոփոխությունները ծայրահեղ հիվանդագին էին: Նրանք անկայունացրին էլեկտրատական դաշտը և ձևավորեցին նախադրյալներ կուսակցաքարաքական սպեկտրի արմատա կան հեղափոխման համար, անկայուն բազմակուսակցական նորելի ստեղծմանը: Դիմադրության մեջ ավելի քան 170.000 ֆրանսիացիների մասնակցությունը դարձավ կարևոր գործոններից մեկը, որը փոխեց երկրի քաղաքական կյանքը: Շարժումը մեծ քափ ստացավ ոչ միայն 1940թ. ռազմական աղետի հետևանքով: Հասարակական տրամադրությունը Ֆրանսիայում սկսվեց կտրուկ փոխվել դեռևս 30ական թվականներին: 3-րդ Հանրապետությանը մարտահրավեր նետեցին այն մասսաները, որոնք հակված էին գաղափարախոսական էկզալտացիայի: Նրանք պատրաստ էին ամենա ռադիկալ գործողությունների Հանրապետությունում բարեփոխումներ անցկացնելու համար: «Ազգային ճակատը» ցուցաբերեց, այսպես կոչված, «մասսայական քաղաքականության» պոտենցիալ, իսկ պատերազմի տարիներին այն ռեալ դարձավ:

Հետպատերազմյան Ֆրանսիայի կուսակցությունների մեծամասնությունը կապված էր Դիմադրության ավանդույթների հետ: Բայց դրանց գաղափարախոսական կողմնորոշիչ ները, ծրագրային դիրքորոշումները բազմազան էին: Այստեղ հատուկ տեղ էին գրադեց նույն գոլականները: Գեներալ դը Գոլը, որը փորձում էր պահպանել համագօյային առաջնորդի իմշջը, չէր շտապում ինչ որ կազմակերպված ձև ավելացնել իր կողմնակիցների գործողություններին: Գոլականները քննադատում էին բոլոր փորձերը վերաստեղծելու «կուսակցությունների ռեժիմներ», ինչը, նրանց համոզմանը, ֆրանսիացիներին աղետի բերեց: Դը Գոլը նախընտրում էր նաև առաջ չքաշել սոցիալ-տնտեսական վերափոխման լայնածավալ ծրագիր: Նրա գլխավոր նպատակը ֆրանսիական պետության վերածնունդը, սահմանադրա-իրավական բարեփոխումներն էին ո-

րոնց արդյունքում կծկավորվի համակենտրոնացված իշխանություն: Դը Գոլին աջակցում էին բավականին տարբեր սոցիալական խնբերին պատկանող ներկայացուցիչներ, որոնք գնահատում էին «ազգի փրկիչի» հեղինակությունը և կիսում «Ֆրանսիայի վեհության» գաղափարը: Պարադոքսային ձևով գոլիզմը իր սոցիալական բազայով մոտիկ էր վիշիստական վարչակարգին: Բայց նրա համախոհների համախմբման համար ժամանակ էր պահանջվում: Կոլաբորացիոնիզմը՝ որպես ազգային դավաճանության խորհրդանիշ պետք է անցներ պատմության գիրկը՝ ազգային գաղափարախոսությանը տալով Վերածնվելու հմարավորություն: Այն պետք է համախմբեր հասարակությանը այլ ոչ թե առաջ բերեր քաղաքացիական թշնամություն:

2-րդ հանաշխարհային պատերազմը բարենպաստ պայմաններ ստեղծեց ֆրանսիական կոմունիստական շարժման ծաղկման համար: Կոմունիստները հանդիսանում էին «ներքին» Դիմադրության առաջատար ուժերից մեկը: Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը /ՖԿԿ/ ժողովրդականություն էր վայելում: 1945թ. սկզբին ՖԿԿ-ի կազմում կար հինգ հար յուր հազար մարդ, 1946թ-ին՝ արդեն ինը հարյուր հազար մարդ: Կոմունիստական կուսակցության համար, որը պահպանել էր գործնեության ակտիվ մոդելը, այս ցուցանիշը շատ կարևոր էր: Երկար ժամանակ «ձախ ֆրանսիան» մնում էր ոչ միայն գաղափարաքաղաքական, այլև մենտալիտետական հասկացություն: Միևնույն ժամանակ կոմունիստական կուսակցության առաջնորդները՝ կուսակցության գլխավոր քարտուղար Մորիս Թորեզը և պատգամավորական խմբի ղեկավար Ժակ Շյուկլոն հրաժարվեցին քաղաքական պայքարի ծայրահեղ մերոդներից և հանդես եկան որպես պառլամենտական ժողովրդավարության ամրապնդման կողմնակիցներ: Անգամ «սառը պատերազմ» ընթացքում ՖԿԿ-ը մնում էր պառլամենտական կյանքի ակտիվ մասնակիցներից մեկը: Կոմունիստները հանդես էին գալիս որպես պետական կառավարման դեմոկրատացման կողմնակիցներ և դուրս եկան «ատլանտիկ համերաշխության» և գաղութարարական քաղաքականության դեմ:

Բավականին ամուր էին շարունակում մնալ սոցիալիստական կուսակցության /ՄՖԻՕ/ դիրքերը: Չնայած սոցիալիստները թվաքանակով համարյա երեք անգամ զիջում էին կոմունիստներին, միևնույն ժամանակ նրանց «դեմոկրատական սոցիալզմի» բազային կոնցեպցիան շատ քիչ էր տարբերվում կոմունիստների նորացված ծրագրից: Սոցիալիստների նախկին ղեկավարությունը կուսակցության նախագահ L.Բյուլմի գլխավորությամբ պատրաստ էր կոմունիստների հետ սերտ համագործակցությանը: Այլընտրանքա-

յին կուրսը ներկայացնում էր Գի Մոլի գլխավորած խումբը: 1946թ-ին Գի Մոլը, դառնալով կուսակցության նոր ղեկավար, ուժեղացրեց հակակոմունիստական պրոպագանդան: Սոցիալիստական կուսակցության նոր ղեկավարությունը հանդես եկավ որպես «ատլանտիկ համերաշխության» և գաղութների տարածքում ռազմաքաղաքական առկայության կողմնակից: 1946թ.-ին, ընդունելով «սկզբունքների ղեկարացիան», որը, փաստորեն, դառնում է կուսակցության ծրագիրը, սոցիալիստական կուսակցությունը բնութագրվում էր որպես «դասային պայքարի» և «սոցիալիզմին կողմնակից» կուսակցություն: Բայց «ուժնոկատական սոցիալիզմ» հասկացությունը ընդունվում էր որպես «չեզոք գաղափարախոսություն», որը պետք է ծառայեր ամբողջ հասարակության համախմբման, այլ ոչ թե պառակտման համար: Սոցիալիստական կուսակցության հանագործակցությունը կենտրոնանետների հետ դժգոհություն առաջացրեց նրա շատ կողմնակիցների մոտ, իիմնականում նրանց, ովքեր կուսակցության անդամներ էին դարձել Դիմադրության շարժման ընթացքում: Միայն 1945-1946թթ.-ի ընթացքում կուսակցության կազմը կրճատվեց 40%-ով: Մասսայական քաղաքական կուսակցություններից էր նաև ժողովրդական հանրապետական շարժումը /ՄՌՊ/, որը նույնպես սերտ կապեր ուներ Դիմադրության շարժման հետ: Կուսակցության կազմակերպչական կորիգը կազմեցին 1944թ-ին միավորված Դիմադրության մեջ մտնող ոչ կոնունիստական խմբերը /«Լիբերտե», «Ռեզիզթանս», «Կոմբա»/: Կուսակցությունը գլխավորեց «Ազատ Ֆրանսիա» ռադիոյի տնօրեն Մ.Շումանը: Կուսակցության ստեղծման մեջ կարևոր դեր խաղաց Դիմադրության ազգային շարժման նախագահ Ժ.Քիդոն: Կազմակերպչական ժողովի ժամանակ, որը տեղի ունեցավ 1944թ-ին, հայտարարվեց, որ կուսակցության նպատակն է հանդիսանում «քաղաքական, տնտեսական և սոցիալական դեմոկրատիայի, անհատների և քաղաքացիների ազատության իրավունքների հաստատումը»: ՄՈՊ-ն պետական համակարգում ռադիկալ փոփոխություններ անցկացնելու կողմնակից էր, և դա պետք է արվեր «օրենքի հեղափոխության» ճանապարհով: Յետպատերազմյան Ֆրանսիայում այդպիսի դրույթները ՄՈՊ-ին վերածեցին ավելի ռադիկալ-դեմոկրատական գաղափարախոսություն ունեցող կուսակցություն, քան, օրինակ, կոնունիստական կուսակցությունը: Ընդունելով քաղաքական գործներության ակտիվ մողելը ՄՈՊ-ն շեշտը դրեց նաև այսպիսի անդամակցության ապա հովման, տարածաշրջանային կառուցվածքների ընդարձակման վրա: Կուսակցությունը կողմն էր նաև հասարակական և արհմիության կազմակերպությունների հետ սերտ կապեր հաստատելուն: Արդեն 1945թ-ին

Կուսակցության կազմի մեջ էին ավելի քան 235.000 մարդ: Կուսակցության գերակշռող մասն էին կազմում քաղաքային միջին դասի, զյուղացիության, ինչպես նաև բանվոր դասակարգի ներկայացուցիչները: Քաղաքական կյանքում ակտիվ մասնակցություն էին ունենում նաև փոքր խմբեր, որոնք դուրս էին եկել Դիմադրությունից: Այդ խմբերից մի քանիսի հիմքի վրա 1945թ-ին ձևավորվեց Դիմադրության դեմոկրատական և սոցիալական Միություն/ՅՈՒԴՍԴ/ կուսակցությունը: Ի տարբերություն ՖԿԿ-ի և ՄՌՊ-ի՝ նա չուներ մշտական անդամակցություն և տարածաշրջանային կառուցվածքներ, ներկայացնելով իրենից միայն «պառլամենտական կուսակցություն»: ՅՈՒԴՍԴ-ը բաժանված էր, փաստորեն, երեք հոսանքների: Նրանցից մեկը, որը գլխավորում էին Ժ.Սուստելը, Ա.Ֆրենեն և Ռ.-Կապիտանը դը Գոլի կողմնակիցներ էին և հետագայում նտան գոլական շարժման մեջ: Մյուս հոսանքը գլխավորում էր Ռենե Պլեվենը, որը կենտրոնամետ հայացքներ ուներ: Զախ թւը գլխավորեց Ֆրանսուա Միտերանը, որը հանդես էր գալիս ոչ կոմունիստական, ձախ կենտրոնամետ բլոկի ստեղծման համար և, փաստորեն, դը Գոլի հակարակորդն էր: Բազմակուսակցական պառլամենտական կուղիական ավանդություններին վերադարձնալու գաղափարը շատ արդիական էր նաև ռադիկալների և ռադիկալ-սոցիալիստների Դանուապետական կուսակցության համար: Այն միակն էր 3-րդ Դանուապետության առաջատար կուսակցություններից, որը 2-րդ համաշխարհային պատերազմից հետո պահպանել էր իր ազգեցությունը: Սակայն կուսակցությունը թուլացած էր միջֆրակցիոն պայքարի պատճառով, իսկ հեղինակությունը ընկել էր դեռևս 30-կան թթ-ի կեսին, երբ Ազգային ճակատը ճգնաժամ էր ապրում: Կուսակցության նախագահ էղուարդ էրիոյին չհաջողվեց կանխել ձախ և աջ հոսանքների անջատումը: Զախ ռադիկալները, որոնց գլխավորում էր Ֆերոնը, ցանկանում էին վերադարձնալ Ազգային ճակատի մարտավարությանը, համագործակցել կոմունիստների և սոցիալիստների հետ: 1947թ-ին կուսակցության դեկավարությունը ստիպված եղավ նոյնիսկ վտարել իր կազմից այս գաղափարի կողմնակիցներին: Նրանք ստեղծեցին պառլամենտական խումբ, որը միացավ կոմունիստներին: Ազ ռադիկալները Լ.Մարտինո-Դեպլայի և Ա.Մորիսի գլխավորությամբ, ընդիկակառակը, կողմնակից էին կոչտ հակակոմունիստական դիրքորոշմանը: Նրանք կուսակցական ծրագրի մեջ մտցրեցին տնտեսական լիբերալիզմի գաղափարը, աջակցում էին գաղութային կայսրության պահպանման ջանքերին, ինչպես նաև պաշտպանում էին հյուսիսատլանտյան ռազմական դաշինքի ստեղծումը: Դետպատերազմյան Ֆրանսիայում ձևավորվող կուսակցություններին լրացնում էին, այդպես կոչված, «չափա-

վորների» խմբերը: Նրանցից ամենախոշորները երեքն էին՝ Ազատության հանրապետական կուսակցությունը /ՈՊԼ/, Գյուղացիական կուսակցությունը և «Անկախ հանրապետականների» խումբը: Նրանք բոլորը ձևավորվեցին 1945թ-ին: Միայն ՈՊԼ-ը սերտ կապեր ուներ Դիմադրության շարժման հետ: Նրա առաջնորդները՝ Լ.Լանյելը, Պ.Ժակինոն և Ա.Շարպանտյեն, նախապատերազմյան Ֆրանսիայում հայտնի քաղաքական գործիչներ էին: ՈՊԼ-ը պաշտպանում էր պառլամենտական դեմոկրատիայի, հանրապետական ազատությունների շահերը:

Բանվոր դասակարգի մասնակցության խնդիրը եկամուտի և արտադրության դեկավարման մեջ հանրապետականները դիտում էին տնտեսական արդյունավետության տեսանկյունից, և այդ խնդիրը լուծումը, նրանց կարծիքով, պետք է կախված լինի ձեռնարկատերերի և բանվոր դասակարգի հարաբերություններից: Հանրապետականները պաշտպանում էին գաղութային կայսրության պահպանման գաղափարը և հակախորհրդային ռազմաստրատգիական բլոկի ստեղծումը: «Անկախների» ծրագրային դրույթները հիմնված էին «աջ լիբերալներին» բնորոշ գաղափարների վրա, որոնք ներառում էին «անհատի պատասխանատվությունը» և «ավանդությային ազատությունները»: Միևնույն ժամանակ «անկախ հանրապետականները» փորձում էին արդիականացնել իրենց ծրագիրը, համապատասխանեցնելով այն հետպատերազմյան ֆրանսիայի պայմաններին: Իրեն բնորոշ յուրահատկությունները ուներ Գյուղացիական կուսակցությունը: Նրա դեկավարները՝ Պ.Անտեն, Կ.Լորանը, սկզբունքը են կողմ էին, որպեսզի կուսակցության մեջ ընդգրկվեին ինչպես Դիմադրության մասնակիցները, այնպես էլ նախկին վիշխատական վարչակարգի կողմնակիցները: Կուսակցության ծրագրային դրույթները ուղղված էին դեպի գյուղացիության տնտեսական և սոցիալական շահերի պաշտպանմանը, լիբերալ տնտեսության ամրապնդմանը, կրօնական դաստիարակմանը: Կողմնակից լինելով բազմակուսակցական և պառլամենտական դեմոկրատիային՝ Գյուղացիական կուսակցությունը գրադեցնում էր կոչտ հակակոմունիստական և հակասովետական դիրքորոշում: Բազմակուսակցական համակարգի արագացված ձևավորումը հակասում էր դը Գոլի կողմից ընտրած պետական իշխանության կենտրոնացման կուրսի հետ: Զգուշով թույլ չտալ, որ նոր սահմանադրական հասարակարգի ստեղծման նախաձեռնությունը անցնի կուսակցություններին, դը Գոլը որոշում է ուղղակի դիմել ժողովրդին: Հետպատերազմյան առաջին ընտրությունների նախօրյակին՝ 1945թ.հոկտեմբերին, դը Գոլը անցկացրեց հանրաքվե երկու հարցերի շուրջ՝ 1/ ընտրվող ներկայացուցական մարմինին տալ

Սահմանադիր ժողովի կարգավիճակ և 2/ սահմանափակել նրա գործունեությունը միայն սահմանադրական կառուցման հետ կապված հարցերի շուրջ: Այդ առաջարկությունները աջակցություն ստացան սոցիալիստների, ՍՌՊ-ի և ՅՈՒՆՍՈ –ի կողմից: Կոմունիստները կողմնակից էին Սահմանադիր ժողովի գաղափարին, սակայն այն պայմանով, որ նրա ձեռքը պետք է անցնի ամբողջ հշխանությունը: Ռադիկալները և «չափավորները» իրենց կողմնակիցներին առաջարկում էին քվեարկել երկու կետերի դեմ, այսինքն՝ դե-ֆակտո վերադառնալ 3-րդ Հանրապետության սահմանադրական կարգին: Հանրաքվեին մասնակցողներից 96,4%-ը կողմ էին Սահմանադիր ժողովի գումարմանը, 66,3%-ը կողմնակից էին նրա լիազորությունների սահմանափակմանը: Հանրաքվեի հետ միասին տեղի ունեցան ընտրություններ: Դրանք հաջողություն բերեցին այն կուսակցություններին, որոնք ընդգրկված էին Դիմադրության շարժման մեջ: Կոմունիստները Սահմանադիր ժողովում ստացան տեղերի 25,4%, ՅՈՒՆՍՈ –ի հետ դաշինք ստեղծած սոցիալիստները՝ 24%, ՍՌՊ-ը՝ 23,6%: Դրանք կուրսի դեմ հանդես եկած ռադիկալները և «չափավորները» պարտություն կրեցին՝ ստանալով համապատասխան 10,8% և 15%: Սակայն դը Գոլի հաջողությունը հարաբերական էր: Դրաժարվելով ընդդիմախոսների հետ ուղղակի բանավեճից և սեփական շարժման համախմբումից՝ դը Գոլը հնարավորություն կորցրեց ոչ միայն վերահսկել Սահմանադիր ժողովի, այլ նաև ժամանակավոր կառավարության գործունեությունը: Կառավարության կազմի մեջ մտան վեց «անկուսակցականներ», որոնք դը Գոլի կողմնակիցներն էին, ինչպես նաև իինգական ներկայացուցիչներ կոմունիստական և սոցիալիստական կուսակցություններից և ՍՌՊ-ից: Արդեն 1945թ. դեկտեմբերին հիմնական քաղաքական ուժերի միջև հաստատված անկայուն փողօքանը վերաձվեց սուր կոնֆլիկտի: Մեկ ամիս անց դը Գոլը հայտարարեց իր հրաժարականի մասին: Ժամանակավոր կառավարությունում նրան փոխարինեց Ֆ.Գուենը: Սահմանադրական հանձնաժողովը, որի կազմի մեջ մտան հիմնականում ծախս կենտրոնամետ կուսակցությունների ներկայացուցիչները, 1946թ. ապրիլին ներկայացրեց նոր սահմանադրության նախագիծ: Այն նախատեսում էր ստեղծել մեկ պալատից բաղկացած պառլամենտ, նախագահի ընտրության կարգը և նրա լիազորությունների սահմանափակումը, կառավարության պատասխանատվությունը պառլամենտի առջև և այլն: Ընդհանուր առմանք, նախագիծը ապահովում էր օրենսդիր իշխանության գերիշխանությունը: Նոր Սահմանադրության մեջ մտավ նաև 1789թ-ին ընդունած «մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի» տեքստը, որը ապահովում էր իրավունքի, ազա-

տության, սեփականության և անվտանգության գերակայությունը: 1946թ.ապրիլի 19-ին Սահմանադիր ժողովը հաստատեց սահմանադրության նախագիծը, իսկ նայիսին այն արդեն դուրս բերվեց համազգային հանրաքվե: Չնայած որ այդ ժրագրի դեմ դուրս եկան միայն գոլականները և «չափավորները», հանրաքվեն բացասական արդյունք ունեցավ: «Դեմ» քվեարկեցին մասնակիցներից 51,6%-ը: Չանրաքվեի ծախողունը անհրաժեշտություն առաջացրեց անցկացնել նոր ընտրություններ և գումարել 2-րդ Սահմանադիր ժողով: Ընտրարշավի ընթացքում ակնհայտ դարձավ ՄՊԴ-ի և ռադիկալների հայացքների աստիճանաբար մերձեցունը: 2-րդ Սահմանադիր ժողովի կազմի մեջ քաղաքական ուժերի հարաբերությունները չփոխվեցին, բայց այս անգամ մեծամասնություն ունեցավ ՄՊԴ-ն, որը ստացավ ծայների 28,1%, ՖԿԿ-ը՝ 26,4%, սոցիալիստները՝ 21,1%: Մյուս կուսակցությունները պահպանեցին իրենց ներկայացուցչական մակարդակը: Ժամանակավոր կառավարությունը և Սահմանադրական հանձնաժողովը գլխավորեցին ՄՊԴ-ի ահդամները՝ Ժ.Քիդոն և Պ.Կոստա-Ֆլորը: Նրանց հաջողվեց սահմանադրական բարեփոխումի քննարկման ընթացքը դարձնել ավելի կառուցղական: Իրավիճակի վրա մեծ ազդեցություն ունեցավ դը Գոլի վերադարձը քաղաքական ասպարեզ: 1946թ. հունիսի 16-ին Ելույթ ունենալով Բայե քաղաքի ազգային գործադրությանը նվիրված տոնակատարությանը՝ դը Գոլը առաջին անգամ խոսեց իր սահմանադրական նախագիծի մասին: Դրա հիմքը կազմեց «հզոր պետության» գաղափարը, որը ի վիճակի պետք է լիներ ապահովել Ֆրանսիայի «հզորությունը», ինչպես նաև ազգային անկախությունը և միասնությունը: Դը Գոլը քննադատում էր պառլամենտական հանրապետության գաղափարը՝ դրա մեջ տեսնելով պետական հանակարգի քայլայման վտանգ: Որպես այլընտրանք՝ դը Գոլը համարում էր «ուղիղ դեմոկրատիայի» սկզբունքը, որի հիմքը պետք է կազմեին հանրաքվեները և հանրապետության նախագահի ուղիղ և համընդհանուր ընտրությունները: Պետության դեկավարը որպես անբողջ ազգի անմիջական ներկայացուցիչ պետք է պառլամենտական հսկողությունից դուրս ունենա համապատասխան լիազորություններ: Իշխանության օրենսդրական, գործադիր և դատական ճյուղերը պետք է հստակ իրարից բաժանված լինեն: Լինելով կուսակցություններից դուրս՝ պետության դեկավարը իրականացնելու է քաղաքական հսկողություն իշխանության բոլոր ճյուղերի նկատմանը՝ ելենով, առաջին հերթին, ազգային շահերից:

Բախվելով գոլականների աճող ազդեցության հետ՝ Սահմանադիր ժողովի մեջ ընդգրկված կուսակցությունները փորձեցին փոխազդանական գալ սահմանադրության նոր նախագիծի շուրջը: Այն

Սահմանադիր ժողով ներկայացվեց 1946թ.հոկտեմբերի 29-ին և աջակցություն ստացավ: Իսկ հանրաքվեն տեղի ունեցավ 1946թ. հոկտեմբերին: Կողմ քվեարկեց 53,1%: 1946թ. դեկտեմբերի 24-ից 4-րդ Հանրապետության Սահմանադրությունը նշանակվեց 1946թ-ի Սահմանադրությունը ներառում էր Ֆրանսիայի, որպես դեմոկրատական, հասարակական և սոցիալական հանրապետության, միասնությունը և անքածանելիությունը: Պահպանվեց Ներածության նախկին տարբերակը, ինչպես նաև «մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի» տեքստը: Կարևոր սկզբունք դարձավ «սոցիալական պետության» հոչակումը, որտեղ անհատի իրավունքները գուգակցում են «ընդհանուր բարօրության» հետ: Պառամենտը դառնում էր երկպալատային: Ստորին պալատը անվանվեց Հանրապետության խորհուրդ, իսկ վերինը՝ Ազգային ասամբլեա: Իտարբերություն 3-րդ Հանրապետության ավանդություններին՝ ստորին պալատը հանդիսանում էր միանգամայն գերիշխող մարմին պառլամենտում: Ազգային ասամբլեան բաղկացած էր 627 պատգամավորներից, որոնք պետք է ընտրվեին հանամասնական համակարգով: Հանրապետական խորհուրդը պետք է բաղկացած լիներ 320 պատգամավորներից, որոնք ընտրվելու էին կոմունաների և դեպարտամենտների կողմից վեց տարի ժամկետով անուղղակի ընտրությունների միջոցով: Վերին պալատի լիազորությունները 3-րդ Հանրապետության պառլամենտի վերին պալատի՝ Սենատի համենատ հասցել էին մինիմումի: 4-րդ Հանրապետությունում վերին պալատը պետք է կատարեր, փաստորեն, խորհրդակցային ֆունկցիա: Սահմանադրությունը նախագահին երկրի դեկավարի լիազորություններ տվեց, բայց սահմանափակեց այն ներկայացուցական ֆունկցիաներով: Ի տարբերություն 3-րդ Հանրապետության Սահմանադրությանը՝ նախագահը իրավունք չուներ ցույլ ստորին պալատը և իր ընտրությամբ բարձր պաշտոնների վրա նշանակումներ անել: Նախագահը ընտրվում էր յոթ տարվա ժամկետով Ազգային ասամբլեայի և Հանրապետության խորհրդի կողմից: Գործադիր իշխանությունը տրվում էր Նախարարների խորհրդին իր նախագահի գլխավորությամբ: Վերջինիս թեկնածությունը առաջարկում էր երկրի նախագահը, իսկ ստորին պալատը՝ հաստատում: Նախարարներին նշանակում էր կամ վարչապետը, կամ երկրի նախագահը: Կառավարության աշխատանքը գտնվում էր պառլամենտի հսկողության տակ և կարող էր ամբողջությամբ իրաժառական տալ, եթե ստորին պալատի մեծամասնությունը նրան անվաստահություն հայտներ: Սահմանադրությունը պահպանում էր նախկին դատական համակարգը: Պահպանվեց նաև տեղական կառավարումը, բայց այն արդեն ընկնում էր կառավարության

խիստ հսկողության տակ: Ստեղծվում էր Մագիստրատուրայի բարձր խորհուրդ երկրի նախագահի գլխավորությամբ, որը զբաղվում էր դատավորների նշանակման հարցերով: Պառլամենտին չեր տրվում Սահմանադրության փոփոխման և վերացման լիազորությունը: Դա պետք է արվեր միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրական վերահսկողության սահմանափակ ֆունկցիաները տրվում էին առաջին անգամ ստեղծված Սահմանադրական կոմիտեին, որի կազմի մեջ նտան հանրապետության նախագահը, պառլամենտի երկու պալատների նախագահները: Որպես կոորդինացնող մարմններ՝ ստեղծվեցին Ֆրանսիական Միության ժողով և Տնտեսական խորհուրդ:

2. Քաղաքական զարգացումը 50-ական թթ-ին: 4-րդ Հանրապետության Սահմանադրա-իրավական ճգնաժամը

Առաջին ընտրությունները Ազգային ասամբլեա, որոնք տեղի ունեցան 1946թ. նոյեմբերի 10-ին, պահպանեցին քաղաքական ուժերի նույն տեղաբաշխումը, որը ձևավորվել էր Սահմանադրի ժողովում: Կոմունիստական կուսակցությունը և ՄՌՊ-ն ընտրությունների արդյունքում ստացան պառլամենտում համապատասխան 182 և 173 տեղ և ամրապնդեցին իրենց դիրքերը նախ և առաջ սոցիալիստական կուսակցության էլեկտորատի հետագա բներացման հաշվին: Միայն սոցիալիստների ֆրակցիան կազմեց 102 պատգամավոր, մնացած կուսակցությունները ստացան ավելի քիչ ձայններ: Այդպես՝ ռադիկալները ունեցան 43 պատգամավոր, ՅՈՒՆՍՈ –ը՝ 26, «չափաՎորների» խումբը՝ 67: Եվս 10 տեղ ստացան գոլականների Միության ներկայացուցիչները: Ինքը՝ դը Գոլը, անմիջականորեն կապված չէր այդ կազմակերպության հետ, իսկ նրա կողմնակիցներից շատերը ընդիանուածներ բոյկոտեցին ընտրությունները: Վերին պալատում ընտրությունների արդյունքում քաղաքական ուժերի տեղաբաշխումը եղավ համարյա նույնը, ինչ ստորին պալատում:

4-րդ Հանրապետության առաջին նախագահ ընտրվեց սոցիալիստ Վենսան Օրիոլը: Շամպետը դը Ռիբը ՄՌՊ-ից ընտրվեց վերին պալատի նախագահի, իսկ ռադիկալ էդուարդ Էրիոն գլխավորեց Ազգային ասամբլեան: Ռադիկալների, կոմունիստների և սոցիալիստների եռակուսակցական կուսակցիան, որը ձևավորվել էր դեռևս Ժամանակավոր կառավարության օրոք, հնարավորություն ստացավ ստեղծել նոր պառլամենտում ձախ կենտրոնամետ մեծամասնություն: Կառավարությունը գլխավորեց սոցիալիստ Պոլ Ռա-

մայշեն: Բայց արդեն 1946թ. վերջում կոմունիստների և նրանց համագործակիցների միջև առաջացած հակասությունները բերեցին կոալիցիայի քայլայմանը: Դատկապես սուր բանավեճեր առաջացրեցին ազգայնացման և գաղութային պատերազմներ վարելու հետ կապված հարցերը: Վերջնականապես կոալիցիան փլուզվեց 1946թ. մայիսին: Կոմունիստների ֆրակցիան կառավարությանը անվստահության քվե ներկայացրեց, որովհետև վերջինս մերժել էր գործադուլավոր բանվորների աշխատավարձը բարձրացնելու պահանջը: Տեսնելով այդ քայլի մեջ «նախարարական համաձայնության» սկզբունքների խախոռում՝ Օրիոլը և Ռամանյեն կոմունիստներին դուրս հանեցին կառավարության կազմից: Դաշորդ տարիների ընթացքում, հատկապես «սարը պատերազմի» ֆոնի վրա, կոմունիստական կուսակցությունը հայտնվեց քաղաքական բյուզոտի մեջ: Միևնույն ժամանակ կոմունիստները շարունակում էին մնալ չափազանց ազդեցիկ ուժ՝ ծևակվորելով պառաւամենտում ամենամեծ ֆրակցիաներից մեկը: Եռակուսակցական կոալիցիայի փլուզումը և ՖԿԿ-ի մեկուսացումը, որպես ընդդիմության ծախուադիկալ ուժ, համբնկավ գոլական շարժման համախմբման հետ: Գոլական Միության առաջնորդ Ռենե Կապիտանը դը Գոլի հին զի նակիցներից էր: Բայց նրան չհաջողվեց գեներալից ստանալ բաց աջակցություն: Բացի այդ, Կապիտանը, որը դուրս եր եկել ՅՈՒՆՍՌ -ի շարքերից, գոլական շարժման մեջ հանդիսանում եր որպես ծախ թևի ներկայացուցիչ և այդ պատճառով դը Գոլի կողմնակիցների շրջանում մեծ թվով ընդդիմախոսներ ուներ: Դրությունը կտրուկ փոխվեց 1947թ. գարնանից, երբ դը Գոլը որոշում է կայացնում ծևակվորել սեփական շարժում: Ակզենական շրջանում շեշտը դրվեց մասսայական, կազմակերպված կուսակցության ստեղծման վրա, որը պետք է ունենար խիստ կանոնադրություն: Դը Գոլին մոտիկ գինակիցների գիսավորությամբ /Ժ.Սուստել, Ա.Մալրո, Ռ.Կապիտան, Շաբան-Ղելմաս/ ստեղծվեց տարածաշրջանային կոմիտեների բազմացյուղային ցանց: 1947թ. ապրիլին դը Գոլը պաշտոնապես հայտարարեց Ֆրանսիական ժողովորդի Միություն /ՌՊՖ/ քաղաքական կազմակերպության ստեղծման մասին: ՌՊՖ-ը հանդես էր գալիս 1946թ. Սահմանադրության դեմ, ծգտում էր ստեղծել «կազմակերպված դեմոկրատիայի» համակարգ, որի հիմքը պետք է լիներ ժողովրդի կամքի ազատ արտահայտումը, ինչպես նաև վերականգնել Ֆրանսիայի հեղինակությունը միջազգային ասպարեզում: Դը Գոլը հատկապես ընդգծում էր, որ ՌՊՖ-ը քաղաքական կուսակցություն չէ: Գեներալ հանդես էր գալիս նաև նախընտրական ծրագրի դեմ՝ համարելով, որ շարժման խնդիրներին ավելի շատ համապատասխանում են գաղափարների սահմանափակ հավաքածուն և մարտա-

Վարության նպատակները: Կոմունիստների և գոլականների ազդեցությունը մեկուսացնելու համար կառավարությունում առաջացավ, այսպես կոչված, «Երրորդ ուժերի» կողմանական գաղափարը: Նրա կազմի մեջ մտան սոցիալիստները, ռադիկալները և ՄՊԴ-ն: «Երրորդ ուժի» կողմանական պառլամենտում մեծամասնություն կազմեց, որը պահպանվեց մինչև 1951թ-ի ընտրությունները: Այդ ընթացքում չորս անգամ նախարարների խորհրդի նախագահի /Վարչապետի/ աթոռին նստեցին ռադիկալների ներկայացուցիչները/այդ բայում՝ երեք անգամ Անրի Քեյը/, երեք անգամ՝ ՄՊԴ-ի ներկայացուցիչները/երկու անգամ՝ Ոորելու Շումանը/: Սոցիալիստների ազդեցությունը կողմանակայի կազմում բավականաչափ նվազեց, իսկ կուսակցության ներսում սկսվում է միջֆրակցիոն պայքար: ՄՊԴ-ն իր հերթին չկարողացավ դառնալ խոշոր քրիստոնյա-դենոկրատական կուսակցություն, ինչպես, օրինակ, դա տեղի ունեցավ Քրիստոնյա-դենոկրատական կուսակցության հետ հտալիայում կամ Քրիստոնյա-դենոկրատական միության հետ Արևմտյան Գերմանիայում: ՄՊԴ-ի ծրագիրը կրում էր բավականին էկլեկտիվ բնույթ: «Երրորդ ուժի» կողմանական ՄՊԴ-ն հանդես էր գալիս աջ թևի դերում և ռադիկալ ռեֆորմիստական գաղափարներից արագ անցումը դեպի կենտրոնամետ հայացքները նպաստեց կուսակցության էկլեկտորատի փլուզմանը: Ռադիկալների և ռադիկալ-սոցիալիստների կուսակցությունը, որը 1945-1946թթ.-ին ճգնաժամ էր ապրում, անսպասելիորեն հայտնվեց կառավարող կողմանակայում առաջնորդի դերում: Բայց կուսակցության դեկավարությունը ձգտում էր միավորել մյուս հանրապետական կուսակցությունների մեջ ընդգրկված տարրեր հոսանքները: Այս ուղղությամբ առաջին քայլը արվեց 1950թ-ին, երբ կառավարության դեկավարի պաշտոնին նշանակվեց ՅՈՒՆՍՌ -ի առաջնորդ Ռենը Պլեվենը, որը ներկայացնում էր իր կուսակցության «չափավոր» հոսանքը:

Ընտրությունները անցկացվեցին 1951թ. հունիսի 17-ին և նրանց արդյունքում գոլականները ՄՊՖ-ից պառլամենտում ստացան 119 տեղ: Կոմունիստները և սոցիալիստները՝ համապատասխանաբար՝ 108 և 104: Ռադիկալների և ՅՈՒՆՍՌ-ի ընտրական ալյանսը ստացավ 93 տեղ, ՄՊԴ-ը՝ 85, «չափավորները»՝ 97: Դանրապետական կուսակցության հաջողությունը հիմնականում բացատրվում էր, այսպես կոչված, «միասնական ցուցակների» օգտագործման ռազմավարությամբ: Քվեարկողների ընդհանուր հաշվի՝ «անհաշտ ընդդիմությունը» ստացավ ձայների 48%-ը /կոմունիստներին «կողմ» քվեարկեց ավելի քան 5 մլն.մարդ/, իսկ գոլականների համար՝ 4 մլն.մարդ/: Ազգային ասամբլեայում ձևավորվեց դեկավարող աջ կենտրոնամետ կողմանակայի, որի կազմի մեջ մտան

ՄՈԴ-Ն, ՅՈՒԴՍՌ –ը, ռադիկալները և «չափավորները»: Կոալիցիայի առաջին կարինետը գլխավորեց Ռ.ՊԼԵՎԵՆԾ: Դրանից հետո վարչապետի պաշտոնը չորս անգամ զբաղացրեցին ռադիկալների, երկու անգամ՝ «չափավորների» ներկայացուցիչները: Սակայն այդ բոլոր կառավարությունների քաղաքական դիրքերը ամուր չէին: Պառլամենտում նրանք փորբանասնություն էին կազմում և նրանց կողմից ձեռնարկած քաղաքական քայլերը կարող էին հեշտությամբ խափանվել կոմունիստների, սոցիալիստների և ՌՊՖ-ի միասնական ուժերի կողմից: Բայց ընդդիմության համար այդպիսի համախմբված գործողությունները անհնարին էին: Կոմունիստները առաջվա պես մնում էին բոյկոտի կարգավիճակում և անգամ նրանց փորձերը՝ համաձայնվել այս կամ այն կառավարության գործողությունների հետ, չին փոխում այդ դրությունը: Ավելի բարդ վիճակում էր գտնվում ՌՊՖ-ն: Բան այն էր, որ մի կողմից ՌՊՖ-ն մնում էր պառլամենտական խոշորագույն կուսակցությունը, իսկ, մյուս կողմից, դը Գոլը ցանկանում էր պահպանել ընդդիմադիր ուժի կարգավիճակը: Այդ պատճառով ՌՊՖ-ն հայտնվեց շատ ծանր դրության մեջ. կամ նա պետք է քննադատեր կառավարության կողմից ձեռնարկած ցանկացած գործողություն, կամ, հրաժարվելով, այսպես կոչված, «անհաշտների» իմիջից, ցուցաբերել կառուցողականություն և մասնակցել երկրի համար կարևոր որոշումների կայացմանը: Դը Գոլը փոխազդումների դեմ դուրս եկավ: Դա հանգեցրեց նրան, որ կուսակցության ժողովրդականությունը սկսեց ընկերել: Անդամակցությունը կրճատվեց և 400.000-ից հասավ 125.000-ի: Կուսակցության ներսում սկսեց ձևավորվել ընդդիմություն: Հակասությունները ակնհայտ են դառնում, երբ 1951թ-ին կուսակցությունից դուրս եկավ «Հանրապետական և սոցիալական գործողության խումբը»: 1952թ. մարտին ՌՊՖ-ի ֆրակցիայի մի մասը առաջին անգամ վստահության քիչ տվեց կառավարությանը: Հնարավորություն չունենալով պահպանել առաջվա մարտավարությունը, դը Գոլը 1953թ. մայիսին հայտարարեց, որ պատգամավորների գործողություններին միանգամայն ազատություն է տրվում: Բայց նույնիսկ դը Գոլի այդ հայտարարությունը չփրկեց ֆրակցիային փլուզումից: Գոլական պատգամավորները ստեղծեցին անկախ պառլամենտական խումբ, որը անվանվեց «Սոցիալական գործողության հանրապետականների միություն»: Աստիճանաբար սկսեց մասնատվել նաև կուսակցությունը: 1955թ-ին Ժ.Շաբան-Դելմասը և Ռ.Ֆրեյը փորձեցին հանախմբել ՌՊՖ-ի մնացած մասը ստեղծելով «Սոցիալական հանրապետականների ազգային կենտրոն» քաղաքական կազմակերպությունը: Սակայն դը Գոլը այդ գործընթացին վերջ է դնում հրամայելով դադարեցնել ՌՊՖ-ի տեղական բաժին-

ների աշխատանքը: Ինքը՝ դը Գոլը, հայտարարեց իր քաղաքական կարիերայի ավարտելու որոշման մասին: Քաղաքական դրության անորոշությունը ստիպեց աջ կենտրոնամետ կոալիցիայի մեջ մտնող կուսակցություններին միջոցներ ծեռնարկել իրենց դրությունը ամրապնդելու համար: 1953թ.սկզբին նրանք առաջարկեցին սահմանադրական բարեփոխումների ծրագիր, որը ընդունվեց 1954թ. դեկտեմբերին: Արդյունքում բավականաչափ փոփոխվեցին Ազգային սասանըեայի և կառավարության միջև փոխհարաբերությունների սկզբունքները: Այսուհետև կառավարությունը վստահության քվե էր ստանում պառլամենտի կողմից հասարակ մեծամասնության դեպքում, իսկ Նախարարների խորհրդի նախագահը /Վարչապետը/ լրացուցիչ իրավասություն էր ստանում ստորին պալատը ցրելու գործընթացում: Կառավարությունը սահմանափակ օրենսդրական գործներության իրավունք էր ստանում, իսկ Հանրապետական խորհրդին օրենսդրական նախաձեռնության իրավունք տրվեց: Այդ բոլոր միջոցառումները ուղղված էին պետական նարմինների գործունեության կայունացմանը պառլամենտական բացարձակ մեծամասնության բացակայության դեպքում: Բայց այդ բարեփոխումների արդյունավետությունը մեծ չէր: Ակնհայտ էր դաշնում 4-ր Հանրապետության քաղաքական բազայի ընդարձակման անհրաժեշտությունը: 1953թ-ին սոցիալիստների առաջնորդ Գի Սոլեն առաջարկեց նոր, առանց կոնունիստների, ձախ կենտրոնամետ կոալիցիայի՝ Հանրապետական ճակատի ստեղծման գաղափարը: Ոչ կառավարական կուսակցության կարգավիճակը սոցիալիստների դեկավարությանը թույլ տվեց քայլեր ծեռնարկել այդ ծրագրի իրականացման համար: Բայց 1954թ-ի հունիսից քաղաքական դրությունը սկսեց փոխվել: Նախարարների խորհրդի նախագահ ընտրվեց ռադիկալների ռեֆորմիստական թիկ առաջնորդ Պիեռ Մենդես- Ֆրանսը: Նա հայտարարեց «ազգային բարեփոխման» քաղաքականության անցկացման անհրաժեշտության մասին, ինչպես նաև գաղութային կոնֆլիկտների խաղաղ կարգավորման, սոցիալական օրենսդրության ընդարձակման, կառավարության և արիմիությունների միջև հարաբերությունների կարգավորման մասին: Այդ ծրագրի իրականացումը խափանվեց արտաքին քաղաքականության խոնդիրների շուրջը պառլամենտում տեղի ունեցած բանավեճերի պատճառով: 1955թ.փետրվարին Մենդես- Ֆրանսը ստիպված եղավ իրաժարական տալ: Կառավարական ճգնաժամը իրականաց պառակտում ռադիկալների շարքերում: 1955թ.մայիսին՝ հերթական համագումարի ժամանակ, տեղի ունեցավ բախում ձախ և աջ խմբավորումների միջև: Մենդես-Ֆրանսի կողմնակիցներին հաջողվեց կուսակցություններից հեռացնել աջ

թեկ ակտիվ ներկայացուցիչներին: Մենդես-Ֆրանսը ընտրվեց կուսակցության փոխնախագահ: Փոփոխություններ էին տեղի ունենում կառավարող կոալիցիայի այլ կուսակցություններում: 50-կան թթ-ի սկզբին ՍՌՊ-ն դառնում է ֆրանսիայի ամենից «Եվրոպական» կուսակցությունը: Ռ.Շումանը, Ժ.Բիդոն, Ա.Կոստ-Ֆլորեն ակտիվորեն աջակցում էին Եվրոպական ինտեգրացումի հետ կապված ծրագրերին և մեծ ներդրում ունեցան այդ ծրագրերի իրականացման գործում: 1956թ.-ին ավարտվեց ՍՌՊ-ի կազմի կտրուկ կրծատման գործընթացը: Կուսակցության անդամների քանակը կայունացվեց՝ հասնելով 40.000-ի:

1954թ.-ին տեղի ունեցավ «սոցիալական գործողության Գյուղացիական կուսակցության» /ՍՆԻՊ/ պառակտումը: Նրա շարքերից դուրս եկավ նախկին Գյուղացիական կուսակցության ակտիվիստների մեջ մասը, որոնք վերաստեղծեցին իրենց կազմակերպությունը: Սակայն նորացված Գյուղացիական կուսակցությունը քաղաքական ապագա չունեցավ: Նրա կողմնակիցների մեջանասնությունը առաջնություն տվեց «առևտրականների և արհեստավորների պաշտպանության Միություն» շարժմանը, որը ձևավորվեց 1955թ.-ին: Այդ շարժման առաջնորդ Պիեռ Պուժադը հանդես էր գալիս որպես Սահմանադրության վերանայման և գաղութային «միացյալ և անբաժանելի կայսրության» պահպանման կողմնակից: Պուժադին աջակցեցին նաև նախկին վիշխատականներից շատերը: Գյուղացիական կուսակցության անջատումը ՍՆԻՊ-ից նպաստեց հանրապետականների համախմբմանը «աջ լիբերալների» շարքերից: ՍՆԻՊ-ի առաջին պաշտոնական համագումարը, որը տեղի ունեցավ 1954թ. դեկտեմբերին, հաստատեց շարժման ծրագիրը, որը հիմնված էր տնտեսական լիբերալիզմի, ազատ ձեռներեցության, սոցիալական կարգավորման, պարզամենտական դեմոկրատիայի ամրապնդման, պետական «դիրիժմիկի»¹ սահմանափակման, ինչպես նաև Եվրոպական ինտեգրացման գործընթացի աջակցման սկզբունքների վրա: 1956թ.հունվարին տեղի ունեցան հերթական պառլամենտական ընտրություններ, որոնք համոզիչ հաղթանակ բերեցին կոմունիստներին: Նրանք ստացան 150 տեղ ստորին պալատում, սոցիալիստները՝ 100տեղ: Ռադիկալները ՅՈՒՂՍՈ –ի հետ միասին ստացան 91 տեղ, ՍՌՊ-ը՝ 74, «չափավորները»՝ 98, «սոցիալական հանրապետականները» Շաբան-Դելմասի գլխավորությամբ՝ 22 տեղ: Կոմունիստների և «սոցիալական հանրապետականների» աջակցության շնորհիվ Գի Մոլեի կառավարությունը վատահության քվե ստացավ: Կառավարության մեջ

¹ «դիրիժմ» - կառավարել բարից, որը նշանակում էր պետության միջամտությունը տնտեսության կառավարման մեջ:

մտան սոցիալիստներն ու ձախ ռադիկալները: Զեավորվեց, այսպիսով, հանրապետական ճակատի կողալիցիա: Գի Մոլեի կառավարությունը փորձեց իրականացնել սոցիալական փոփոխությունների լայն ծրագիր: Նա ճանաչեց Թունիսի և Սարոկոյի անկախությունը: Սակայն Հանրապետական ճակատը չէր կարող հենվել ամուր պառլամենտական մեծամասնության վրա: Շուտով տարածայնություններ ծագեցին կառավարող կողալիցիայի ներսում: 1956թ. հոկտեմբերին ռադիկալ կուսակցության համագումարի ժամանակ Մենդես-Ֆրանսը հանդիս եկավ կառավարության քաղաքականության դեմ, որը, այդ ժամանակ Ֆրանսիային ներքաշել էր Սուեզի ճգնաժամի մեջ¹: Ի պատասխան դրան՝ աջ ռադիկալների մի մասը դուրսեկավ կուսակցության կազմից և ձևավորեց «Հանրապետական կենտրոն» խումբը: 1957թ-ի սկզբին պառակտունը ռադիկալների շարքերում, արդեն ալժիրյան պրոբլեմի պատճառով, ավելի խորացավ: Մենդես-Ֆրանսը, որը դեմ էր հեռթական գաղութային պատերազմին, դուրս եկավ կառավարությունից, ինչի համար քննադատվեց ոչ միայն աջ ռադիկալների, այլև իր կողմնակիցներից շատերի կողմից, որոնք իրենց դժգոհություն էին արտահայտում՝ տեսնելով Հանրապետական ճակատի փլուզումը: Մենդես-Ֆրանսը հեռացվեց փոխնախագահի պաշտոնից և, որպես բողոքի նշան, նա լրեց կուսակցության շարքերը: Գի Մոլեի կառավարությունը ալժիրյան պրոբլեմի լուծման համար պառլամենտից ստացավ արտակարգ լիազորություններ, սակայն չկարողացավ կանխել ներքաղաքական ճգնաժամի աճը: 1957թ. մայիսին Գի Մոլեն ստիպված եղավ հրաժարական տալ: Նրան փոխարինած Մ.Բուրժես-Մոնուրինը ձևականորեն դեռևս ներկայացնում էր Հանրապետական ճակատի կողալիցիան, սակայն նա արդեն փորձ կատարեց իր կառավարությունը անվանել «արտակարգ»: Վարչապետը ձգտում էր ստանալ բոլոր կուսակցությունների աջակցությունը: Այդ կուրսը 1957թ. հոկտեմբերին բերեց «պաշտպանության և Հանրապետության բարեփոխման կառավարության» ձևավորմանը, որի

¹ 1956թ.հուլիսին Եգիպտոսում Նասերի կառավարությունը հայտարարեց Սուեզի ջրանցքի ազգայնացման մասին, որը Անգլիայի հակողության տակ էր գտնվում, իսկ Ֆրանսիան բաժնետոմսերի մի մասի տերն էր: Ֆրանսիան, Անգլիայի և Իսրայելի հետ միասին, ռազմական գործողություններ սկսեց Եգիպտոսի դեմ, ինչը աջակցություն չստացավ նույնիսկ ԱՄՆ-ի կողմից: Եգիպտոսին պաշտպանեց ԽՍՀՄ-ը, որը սպառնեց, նոյմիսկ, օգտագործել միջուկային ռումբ: Միայն դրամից հետո Ֆրանսիան և Անգլիան ստիպված եղան 1956թ. դեկտեմբերի 22-ին դադարեցնել ագրեսիան:

կազմի մեջ մտան բոլոր խոշոր կուսակցությունների ներկայացուցիչները, բացառությամբ կոնունիստների: Կառավարությունը գլխավորեց աջ ռադիկալ Ֆելիքս Գայառը: Ակնհայտ էր, որ առանց պետական հանակարգի արմատական վերակառուցման, անհնար էր ոչ միայն լուծել ալժիրյան հարցը, այլև վերջ տալ կառավարական ճգնաժամների անընդմեջ շարանին: 4-րդ Հանրապետության վարչակարգը գտնվում էր խորը սահմանադրա-իրավական ճգնաժամի մեջ: Ֆրանսիայի պետական հանակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը մասսամբ բացատրվում էր 1946թ-ի Սահմանադրության մեջ տեղ գտած բերությունների պատճառով: Սահմանադրության շատ դրույթներ հակասում էին մեկը մյուսին և շատ դժվար էր դրանք իրականացնել: Դա վերաբերում էր այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսին էին, օրինակ, կառավարության ձևավորումը, պառլամենտի գրումը: Տասներկու տարվա ընթացքում փոխվեց 22 կառավարություն: Այդպիսի անկայունության պատճառները անհասկանալի էին քաղաքացիների համար: Պառլամենտական կյանքը գնային ննանվում էր «քաղաքական խաղերի», երբ մոռացվում են ազգային շահերը: Իրականում 4-րդ Հանրապետության վարչակարգի անկայունության մասին պատմությունները ճիշտ էին միայն մասամբ: Բացառությամբ վերջին տարիների, Ազգային ասամբլեայում ձևավորվում էին կայուն կոալիցիաներ, և կառավարության կազմի փոփոխությունը չէր բերում պետական քաղաքականության կուրսի կտրուկ փոփոխմանը: Ազ կենտրոնամետ և ձախ կենտրոնամետ կառավարությունների ծրագրերի իրականացումը տաս տարվա ընթացքում թույլ տվեց Ֆրանսիային արդիականացնել տնտեսությունը, ամրապնդել իր միջազգային դիրքերը, ինչպես նաև ակտիվ նաևնակցել Եվրոպական ինտեգրացման ընթացքի գարգացմանը: Կառավարության անկայունությունը առաջանում էր ոչ թե պետական ապարատի բերությունների, այլ լայն հասարակական քաղաքական աջակցության բացակայության պատճառով: 1953-1954թթ-ին անցկացրած սահմանադրական բարեփոխումը ցույց տվեց, որ ճգնաժամի եռթյունը կայանում է ոչ թե սահմանադրական մեխանիզմի բերության, այլ քաղաքական ռեժիմի առանձնահատկությունների մեջ: Ֆրանսիայում բարդ իրավիճակ ստեղծվեց, երբ երկու առավել ազդեցիկ քաղաքական շարժումներ, որոնք ապահովում էին ընտրողների մեծամասնության շահերն ու կարծիքները, հեռու էին կանգնած պետական իշխանությունից: Խոսքը գոլականների և կոնունիստների մասին է: Նրանք անհաշտ գաղափարախոսական թշնամիներ էին և, այդ պատճառով, նոյնիկ չէին փորձում ստեղծել համախմբված հակակշիռ ուժ՝ ուղղված կառավարական կոալիցիաների դեմ: Բայց «սկզբունքային ընդդիմութ-

յան» դերում հանդես գալով՝ նրանք կամա թե ակամա նվազեցնում էին լայն պառամենտական մեծամասնության ստեղծման հնարավորությունը: Նրանց ակտիվ քարոզությունը հանգեցրեց նրան, որ ժողովրդի մեջ դժգոհություն էր առաջանում վարչակարգի նկատմամբ: Կենտրոնամետ կուսակցությունները երկրում ոչ մի ռեալ ազդեցություն չունեին: Ֆրանսիական ցենտրալիզմը հայտնվեց ճգնաժամային վիճակում և պետք է զիջեր նախաձեռնությունը նոր քաղաքական ուժերին: Սակայն և գոլականները, և կոմունիստները ի վիճակի չեղան իրենց համար պահովել քաղաքացիների մեծամասնության աջակցությունը: Քաղաքական էլիտայի փոփոխության համար պահանջվում էր «խաղի կանոների» վերանայում, ինչպես նաև պետական մարմինների արժատական բարեփոխումների իրականացում:

3. Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական զարգացումը 40-50-ական թթ-ի երկրորդ կեսին

Նյութական վնասը, որը հասցեց Ֆրանսիային 2-րդ համաշխարհային պատերազմը, կազմեց 1440 մլրդ ֆրանկ, մարդկային կորուստները կազմեցին 1մլն100 հազար մարդ: Ավելի քան 700.000 մարդ ուղարկվեց աշխատանքի Գերմանիա: Վճար հասցեց երկրի 80 դեպարտամենտներին, ամբողջությամբ կամ մասամբ վերացվեցին 50հազար արդյունաբերական կենտրոններ, էլեկտրոցանցեր, ածխահանքեր: Տրանսպորտային ցանցը նույնական վնասվեց: Երկիրը կորցրեց իր ռազմական և առևտորական նավատորմի համարյա ամրող մասը: Չեր գործում նավթավերանշակման արդյունաբերության 80%: Արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմեց 38%, գյուղատնտեսությանը՝ 60% նախապատերազմյան մակարդակից: Ամբողջությամբ դադարեցվեց 1400 հեկտար հողի մշակումը: Քայբայվել էր ֆինանսական հանակարգը: Սղաճը հասել էր հսկայական չափերի: Այսպես, ֆրանկի արժեքը նախապատերազմյան մակարդակի համեմատ ընկել էր 6 անգամ: Բյուջեի պակասորդը 1945թ-ին կազմել էր 200 մլրդ.ֆրանկ: Տնտեսության վերականգնումը դարձավ ժամանակավոր կառավարության համար ամենակարևոր խնդիրներից մեկը:

Վերականգնման միջոցառումների հիմքը դարձավ ածխահանքաբերի, գազի, ինքնաթիւային և ավտոնորիլային արդյունաբերությունների ազգայնացումը: 1945-1946թթ-ի ընթացքում ֆրանսիական արդյունաբերության 20%-ը անցավ պետությանը: Պետության հսկողության տակ անցան հինգ ամենախոշոր բանկերը /Ֆրան-

սիական բանկը նույնպես/: Ազգայնացումը իրականացվում էր ընդհանուր առնամբ փոխհատուցման միջոցով, բացառությամբ այն սեփականատերերի, որոնք մեղադրվեցին կոլաբորացիոնիզմի մեջ: Ազգայնացված ծեռնարկություններում աշխատավորների մասնակցությամբ ստեղծվում էին վարչական խորհուրդներ, որոնք մասնակցում էին աշխատավարձի բարձրացման, աշխատանքային պայմանագրերի կնքման, բնակավայրի ապահովման հարցերին: Տնտեսության մեջ անցկացվող կառուցվածքային փոփոխությունները պահանջում էին, որ երկրում լինի կայուն ֆինանսական համակարգ: Դո Գոլը մերժեց «մոնետարիստական» ֆինանսական բարեփոխման ծրագիրը, որը առաջարկվել էր ժամանակավոր կառավարության էկոնոմիկայի նախարար Մենդես-Ֆրանսի կողմից: Նա առաջարկում էր «սառեցնել» աշխատավարձերը, գները, բանկային հաշիվները: Այդպիսի քաղաքականությունը կարող էր կանխել կտրուկ սղացը, սակայն կարող էր իշեցնել նաև տնտեսական ակտիվությունը: Յաղթեց ֆինանսների նախարար Ռ. Պլեվենի տեսակետը, որը առաջարկում էր բաց թողնել խոշոր ներքին փոխառություն: Չնայած որ ժամանակավոր կառավարությունում գոյություն ունեին լուրջ տարածայնություններ, 1947թ. գարնանը կայունացնան ծրագրը տվեց իր տեսանելի արդյունքները:

Վրյունաբերական արտադրանքը հասավ նախապատերազմյան մակարդակին /գյուղատնտեսությունում՝ միայն 1950թ-ին/: Այնուամենայնիվ, իշխանության գլխին կանգնած ծախկենտրոնամետ կոալիցիան չիրաժարվեց պետական կարգավորման ակտիվ մեթոդներից: Ներևա 1946թ-ին ժամ Մոնեի գլխավորությամբ ստեղծվեց տնտեսությունը կարգավորող Գերագույն քարտուղարություն: Մոնեն տեխնոլոգիա թիվ ներկայացուցիչ էր, «ֆրանսիական ծրագրավորման» հիմնողը, որը մեծ ազդեցություն էր ծեռք բերել 4-րդ Յանրապետության ղեկավարության մեջ: Նա համարում էր, որ տնտեսության զարգացման պետական կարգավորումը, ինչպես նաև պլանավորումը չէր կարող քաղաքական գաղափարախոսության հետ կապված լինել: Ըստ Մոնեի՝ պլանավորումը տնտեսական դիվանագիտություն է, որի հիմքը կազմում են միայն համոզմունքը և կոնսենսուսը: Ազգային ծրագրերից մեկը, որը նախատեսված էր 1947-1953թ-ի համար, ընդունվեց 1947թ-ին և ստացավ «սարքավորման և արդիականացման ծրագիր» կամ «Մոնեի ծրագիր» անվանումը: Այստեղ հիմնականում շեշտը դրվում էր ազգային ծեռնարկությունների արդիականացման և դրա հիմնան վրա արդյունաբերության արտադրության ավելացման և աշխատանքի արդյունավետության բարձրացման վրա: Կարևորագույն խնդիրներից մեկը մնում էր ֆինանսական համակարգի կայունացման ապա-

հովումը: 1947թ.-ի աշնանից ֆինանս ների նախարար Ռ.Մայերը սկսում է բարեփոխում անցկացնել ֆինանսական համակարգում: 1948թ.հունվարին ֆրանկը ենթարկվեց դեվալվացիայի^{*}. Նրա ոսկու պարունակությունը իջեցվեց 44%-ով: Ֆինանսական կայունացման մեջ կարևոր դեր խաղաց ֆրանսիայի միացումը Մարշալի ծրագրին^{**}: 1948-1951թթ.-ի ընթացքում ԱՄՆ Ֆրանսիային տրամադրեց վարկեր, պարենանձերը և սարքավորումներ 2,5 մլրդ. դոլարի չափով, իսկ 1958թ.-ին ամերիկյան ընդհանուր օգնությունը կազմեց 12 մլրդ. դոլար: Այդ ծրագրի իրականացումը ուղեկցվում էր ամերիկյան կապիտալի ակտիվ ներթափանցումով ֆրանսիայի տնտեսության մեջ: Ֆրանսիական կառավարությունը պարտավոր էր ԱՄՆ-ին ամբողջական տեղեկատվություն տալ արտադրական ցուցանիշների, արդյունաբերության կառուցվածքի մասին: Այդպիսի կախվածությունը սուր քննադատություն առաջացրեց ֆրանսիայի մի շարք քաղաքական ուժերի կողմից: Սակայն հենց ամերիկացիներն էին, որ կարևոր դեր խաղացին ֆրանսիական տնտեսության կառուցվածքային փոփոխությունների մեջ: 40-կան թթ-ի վերջում կարևոր փոփոխություններ տեղի ունեցան ֆրանսիայի աշխատանքային հարաբերությունների ոլորտում. վերականգնվեց 40-ժամյա աշխատանքային շաբաթը, բարձրացվեց արտաժամյա աշխարանքային վճարը: Երաշխավորվում էր տղամարդկանց և կանանց աշխատավարձերի հավասարությունը, ինչպես նաև ընդարձակվում էր անաշխատունակներին տրամադրվող պետական օգնության համակարգը: Բոլոր ձեռնարկություններում և հիմնարկություններում, որտեղ աշխատում էր 50-ից ավելի մարդ, ստեղծվում էին «ձեռնարկությունների կոմիտեներ», որոնք բաղկացած էին վարչության ներկայացուցիչներից, բանվորներից և ինժեներներից: Նրանք խորհրդակցական ֆունկցիա էին կատարում աշխատանքային պայմանների կարգավորման ոլորտում: Բավականաչափ բարձրացվեցին բոշակներն ու աշխատավարձերը, ծերության և հաշմանդամության բոշակային տարիքը սահմանվում էր 65 տարեկանից: Ստեղծվեց սոցիալական ապահովագրության միասնական պետական համակարգ, որը տարածվում էր բոլոր վարձու աշխատողների վրա, բացի նրանցից, ովքեր աշխատում էին գյուղատնտեսական ոլորտում:

* Դեվալվացիա--գործող արժեզորկված թղթադրամի փոխարինումը կայուն և լիարժեք թղթադրամով՝ դրամական բարեփոխման միջոցով:

** Մարշալի ծրագիր—2-րդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայի վերականգնումը և զարգացումը ամերիկյան տնտեսական օգնության միջոցով: Մասնակցում էին 17եվրոպական երկրներ: Ակսեց գործել 1948թ.ապրիլից:

Տնտեսության զարգացման 2-րդ ծրագիրը /1954-1957թ./, որը կոչվեց «կայունացման պայմաններում արդիականացման և սարքավորման ծրագիր», փորձում էր բարձրացնել արդյունաբերությունում մրցակցության հնարավորությունը, ինչպես նաև արտադրանքի որակը: Դատուկ պայմանագրերի հիման վրա, որոնք կնքվել էին կառավարության և ֆիրմաների միջև, ծեռնարկատերերը ստացան վարկեր՝ սարքավորումներ գնելու համար: 2-րդ ծրագրի ցուցանիշները գերազանցվեցին 50-կան թթ-ի կեսին: Արդյունաբերական արտադրության ծավալը բարձրացավ 60%-ով և գերազանցեց նախապատերազմյան մակարդակը, ընդորում այս ցուցանիշները առկա էին, նախ և առաջ, ծանր արդյունաբերությունում: Սկսվեց ֆրանսիական արդյունաբերության խորը կառուցվածքային վերակառուցումը: Արդյունաբերության սարքավորումների վերանորոգունքը ընդունեց համընդանուր բնույթ: Արդյունաբերության ներդրումային բազայի ամրապնդման մեջ մեծ դեր խաղաց կապիտալի արտահանման նվազումը: Խոշոր բանկերի ազգայնացումից հետո կապիտալի ներդրման հիմնական ուղղությունը դարձավ ազգային տնտեսությունը, այլ ոչ թե օտարերկրյա դրամական վարկերը: Արդյունքում, եթե 20-րդ դարի սկզբին կապիտալի արտահանումը տաս անգամ բարձր էր, քան ներդրումները ֆրանսիական արդյունաբերության մեջ, ապա 50-կան թթ.վերջում կապիտալի արտահանումը վեց անգամ կրճատվեց ներքին շուկայի ներդրումների համեմատ: Կապիտալի փոփոխումը կատարվում էր հիմնականում ծանր արդյունաբերության բնագավառում և էներգետիկ համակարգում: Այդ բնագավառներում օգտագործվում էր միջոցների 90%-ը, որը հատկացված էր արդյունաբերության զարգացման համար: 50-կան թթ-ի կեսին մեծ միջոցներ հատկացվեցին քիմիական, ավիացիոն և ավտոմոբիլային արդյունաբերությունների արդիականացման համար: Անրապնդվեց խոշորագույն կորպորացիաների դերը արդյունաբերության կարևորագույն ճյուղերում: 50-կան թթ-ի վերջում տնտեսության զարգացման համախառն մոդելը սկսեց կորցնել իր արդյունավետությունը: Պետական հատվածի զարգացման նախկին տեմպերի պահպանումը գնալով դժվարանում էր: 50-կան թթ-ի երկրորդ կեսին սղաճի պրոբլեմը ֆրանսիայում նորից սուր բնույթ ստացավ: Ստեղծվեց դասական սղաճային պարուրակ, եթե գների բարձրացումը բերում էր սպառողական առժեքի բարձրացում, ինչը, իր հերթին, հանգեցնում էր աշխատավարձերի բարձրացում, իսկ վերջինս՝ նորից գների բարձրացմանը: 1957թ. նախապատերազմյան մակարդակի համեմատ գները բարձրացան 25անգամ, իսկ նոմինալ աշխատավարձը բարձրացավ 21անգամ: Պահանջվում էր համապատասխան

պետական քաղաքականություն, որը պետք է ուղղված լիներ գյուղատնտեսության բնագավառի զարգացմանը: Ֆերմերների աշխատանքը շարունակում էր մնալ սակավ եկանտաքեր: Գյուղատնտեսական ապրանքների արտահանման մեջ ֆրանսիան զբաղեցնում էր երկրորդ տեղը՝ զիջելով միայն ԱՄՆ-ին: Ժամանակակիցից տիպի տնտեսություն էին վարում գյուղացիության միայն 25%-ը:

Ընդունելով տնտեսության զարգացման 3-րդ ծրագիրը/1958-1961թ./ կառավարությունը հայտարարեց, որ ֆրանսիան պրոտեկցիոնիզմից անցնում է «քաց տնտեսության» զաղափարին: Այդպիսի որոշման համար հիմք հանդիսացավ, առաջին հերթին, Եվրոպական ինտեգրացիոն գործընթացի հետագա զարգացումը, որտեղ ֆրանսիան ակտիվ մասնակցություն ուներ: Ֆրանսիական տնտեսության վերաբերյալ իրենց սուր քննադատությունը արտահայտեցին լիբերալ քաղաքական կուսակցությունները: Սակայն «ազատ տնտեսության» քաղաքականության իրականացման համար պահանջվում էր քաղաքական կայունություն, իսկ 4-րդ Հանրապետությունում ճգնաժամի պայմաններում ձեռնարկատիրական ակտիվությունը նվազում էր:

4. Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը հետպատերազման ժամանակաշրջանում: Ալֆրեյան ճգնաժամը և գեներալ դը Գոլի իշխանություն գուխ գալը:

Դրանքում նշանակած գործությունները նաև պահանջվում էին ակտիվ մասնակցությունը նացիզմի դեմ պայքարում թույլ տվեց վերականգնել ֆրանսիայի հեղինակությունը միջազգային ասպարեզում: Դրա մեջ կարևոր դեր խաղաց և Խորհրդային Միության դիրքորոշումը: 1944թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ֆրանսիական պատվիրակությունը դը Գոլի գլխավորությամբ ժամանեց Մոսկվա: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց «դաշնակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը», որտեղ երկու կողմերը հրաժարվում էին սեպարատ բանակցություններ վարել Գերմանիայի հետ, ինչպես նաև պարտադրվում էին չնասնակցել ցանկացած դաշինքներում, որոնք ուղղված կլինեին պայմանավորվող պետությունների դեմ: Ըստ ֆրանս-խորհրդային պայմանագրի ֆրանսիան փաստորեն մտավ հակահիտլերյան կուլիցիայի մեջ: Այդ հարցը վերջնականապես լուծվեց Յալթայի կոնֆերան-

սի* ժամանակ: Ֆրանսիան դարձավ չորս պետություններից մեկը, որը իրավունք ստացավ Գերմանիայում ստեղծել օկուպացիոն գոտի: “Պոտսդամյան կոնֆերանսի¹ որոշման համաձայն՝ Ֆրանսիայի ներկայացուցիչը մտավ արտաքին գործերի նախարարների կազմի մեջ, որը որոշում էր գերմանական հարցի հետապերազմյան կարգավորման խնդիրները: Պոտսդամյան կոնֆերանսում գերմանական խնդիրի լուծման և արտաքին գործերի նախարարների նիստերի ժամանակ Ֆրանսիան գրավել էր կոչտ դիրքորոշում:

Ֆրանսիական դիվանագիտությունը ծգտում էր մաքսիմալ չափով բոլուացնել իր պատճական թշնամուն, նույնիսկ մասնատել նրան: Գնալով հարաբերությունները դաշնակիցների միջև սրվում էին: Սակայն մեկ տարի անց դրությունը արդեն արմատականորեն փոխվեց: Միացյալ անգլո-ամերիկյան օկուպացիոն գոտու ստեղծումը սեպարատ բնույթ ընդունեց, և երբ շուտով նրանց միացավ ֆրանսիական գոտին, սկսվեց ծևավորվել Արևմտյան Գերմանիայի ուրվագիծը: Իսկ Գերմանիայի տրոհումը, ինչը շուտով և տեղի ունեցավ, համապատասխանում էր Ֆրանսիայի շահերին: Արածին քայլը, որը արվեց Ֆրանսիայի և ԱՍՍ-ի միջև ստրատեգիական հարաբերություններ հաստատելու համար, տեղի ունեցավ 1946թին, երբ երկու պետությունների միջև ստորագրվեց Վաշինգտոնյան պայմանագիր, որով Ֆրանսիային տրամադրվող ամերիկյան վարկերը և առաջվա պարտքերի արձակումը համապատասխանում էր երկողմանի տնտեսական հարաբերությունների լիրերակացմանը: 1947-1948թ.գերմանական ճգնաժամի խորացումը նպաստեց ֆրանս-ամերիկյան հարաբերությունների մերձացմանը, իսկ Ֆրանսիայի միացումը Մարշալյան ծրագրին բերեց ֆրանսիական արտաքին քաղաքականության մեջ «ատլանտիկ համերաշխություն» քաղաքականության հաղթանակին:

Արդյունքում սրվեցին ֆրանս-խորհրդային հարաբերությունները: Ֆրանսիան ակտիվ մասնակցություն ունեցավ արևմտյան երկրների քաղաքական դաշինքի ծևավորման մեջ: Նա հանդիսացավ Արևմտյան դաշինքի ստեղծողներից մեկը: Այն ստորագրվեց Բրյուսելում 1948թ.մարտի 17-ին: Մեկ տարի անց Ֆրանսիան միացավ Եյուսիսատլանտյան պայմանագրին: Կարծ ժամանակում ֆրանսիան դաշնում է ԱՍՍ-ի հիմնական ռազմահենադաշտը Եվրո-

* Յալթայի կոնֆերանս-տեղի է ունեցել 1945թ.փետրվարի 4-11 Յալթա քաղաքում/Ղրիմ/: Մասնակցեցին երեք դաշնակցային պետությունների դեկավարները/Ստալին, Չերչիլ, Ռուզվելտ/:

¹ Պոտսդամյան կոնֆերանս—տեղի էր ունեցել 1945թ.հուլիսի 17-օգոստոսի 2 Պոտսդամում: Մասնակցեցին Ստալինը, Եթին և Թրումենը:

պայում: ՆԱՏՕ-ի ռազմական և տրանսպորտային ինֆրաստրուկտուրայի մեջ մասը տեղակայված էր Ֆրանսիայի տարածքում: ՆԱՏՕ-ի գլխավոր շտաբը գտնվում էր Ֆոնտեբլոյում: 1950թ. հունվարի 27-ին ստորագրված պայմանագրի համաձայն Ֆրանսիան ստանում էր ռազմական և նյութական օգնության գաղլի մասը, որը ԱՄՆ տրամադրում էր իր Եվրոպական դաշնակիցներին:

Արագ քայլերով զարգանում էր և ֆրանսիական ռազմաարդյունաբերական կոմպլեքսը: 40-կան թթ. վերջում Ֆրանսիան ակտիվորեն նաև կուտակում էր Եվրոպական ինտեգրավորման գործընթացին: Դրա ռազմավարությունը ակտիվորեն քննարկվեց Եվրոպական կոնգրեսում, որը անցկացվեց 1948թ-ին պանեվրոպական կազմակերպությունների կողմից: Կոնգրեսի ընթացքում բախվեցին Երկու պատվամոլ/ամբիցիոն/ հայացքներ՝ ֆեդերալիստական և յունիոնիստական: Երկուսն էլ կարևորում էին մեծ թվով Եվրոպական երկրների ինտեգրումը բոլոր բնագավառներում, ներառյալ տնտեսական, քաղաքական, իրավական, ինչպես նաև հումանիտար համագործակցությունը: 1949թ-ին ստեղծվեց Եվրոպայի խորհրդարանը՝ ինչը շատ կարևոր քայլ էր այդ ճանապարհի ուղղությամբ: Բայց Եվրոպական երկրների զարգացման մակարդակի տարրերությունը արգելվ էր հանդիսանում այդպիսի մասշտաբային ծրագրերի իրականացման համար:

Ֆրանսիայի հետպատերազմյան դիվանագիտության առաջնորդները՝ Ժ.Բիդոն, Ռ.Շումանը, Ժ.Մոնեն, մշակեցին Եվրոպական ինտեգրացիոն գործընթացի հատուկ համակարգ, որով նախատեսվում էր համագործակցության էտապային զարգացում տարբեր բնագավառներում: 1950թ. Ֆրանսիան հանդես եկավ համապատասխան նախաձեռնությամբ: Մայիսի 9-ին Ռոբեր Շումանը ներկայացրեց պողպատաճուլական և ածխային արդյունաբերությունների արևատանեվրոպական երկրների ինտեգրացիոն ծրագիրը: «Շումանի ծրագիրը» մեջ նշանակություն ունեցավ Եվրոպական ինտեգրացիոն գործընթացի զարգացման համար: 1951թ-ին տեղի ունեցավ Եվրոպական Դամագործակցության համակարգի առաջին կազմակերպության ծևավորումը՝ Եվրոպական պաշտպանության համագործակցություն /ԵՊԴ/: 1952թ. մայիսին վեց պետությունների միջև ստորագրվեց ԵՊԴ-ի մասին պայմանագիր, ըստ որի՝ պետք է ստեղծվեին միացյալ գինված ուժեր ընդհանուր բյուջեով և ղեկավարությամբ: Բայց այդ պայմանագիրը այդպես էլ ուժի մեջ չմտավ: Ֆրանսիական պառանձնութիւն նոր կազմը, որը ծևավորվել էր 1951թ. ընտրություններից հետո, հրաժարվեց վավերացնել պայմանագիրը: ԵՊԴ-ի մասին պայմանագրի քննարկումները շարունակվեցին մինչև 1954թ. օգոստոսը և ցույց տվեցին, որ

Եվրոպական ինտեգրացման խնդիրը վերածվում է Ֆրանսիայի ներքաղաքական կյանքի կարևոր խնդիրներից մեկը: Ինտեգրացիոն կապերի ամփոփությունը կասկածի չեր ենթարկվում, բայց Եվրոպական կազմակերպությունների ուժեղացումը շատ քաղաքական գործիչների կողմից ընկալվում էր որպես վտանգ Ֆրանսիայի անկախության համար: Յաջարվելով վավերացնել ԵՊՀ-ի մասին պայմանագիրը՝ մեկ ամիս անց Ֆրանսիան միանում է Արևոտաեվրոպական Միության պայմանագրին, որի կառուցվածքում պահպանվում էին ազգային գինված ուժերի հնքնուրույնությունը: Չնայած 4-րդ Շանրապետության ճգնաժամին՝ 50-ական թթ-ի Վերջում շարունակվում էր Ֆրանսիայի կառուցվածքական մասնակցությունը Եվրոպական Շամագործակցության /ԵՇ/ համակարգի զարգացման գործընթացում: 1957թ-ին Ֆրանսիական դիվանագիտությունը աջակցեց Եվրոպական տնտեսական համագործակցության և միջուկային էներգետիկայի Եվրոպական համագործակցության ստեղծման ծրագրերին: Քետպատերազմյան Ֆրանսիայի արտաքին քաղաքականության համար շատ ցավոտ խնդիր էր հանդիսանում գաղութեների հարցը: Գաղութային տարածքների դեմքներության պատերազմի տարիներին ընդունեց անշրջելի բնույթ: Ընդունելով, որ այլևս հնարավոր չէ վերականգնել կայսրությունը, Ֆրանսիայի նոր քաղաքական էլիտան փորձեց արածարկել փոխզիջման տարրերակ՝ ստեղծելով Ֆրանսիական Միություն: Բայց նրանց չհաջողվեց այն իրականացնել: Իր ազդեցությունը բռնեց 4-րդ Շանրապետության անկայուն քաղաքական դրությունը, գաղութային տեղական վարչությունների հակագործությունը, ինչպես նաև գաղութային մտածելակերպի լայն տարածումը ֆրանսիական հասարակության մեջ: Արդեն 1945թ. մայիսին գաղութային իշխանությունները դաժանությամբ ճնշեցին ալժիրյան ապստամբությունը: Մեկ ու կես տարի հետո ապստամբություն բարձրացավ նաև Մադագասկարում, որտեղ զոհերի թիվը հասավ 80 հազարի: ճակատագրական նշանակություն ունեցավ Շնորհաշինում գինված ընդհարումի սկիզբը: 1945թ. օգոստոսի 19-ին վիետնամական ապստամբ բանակի ղեկավար Խո Շի Մինը հայտարարեց անկախ պետության ստեղծման մասին: Չնայած նրան, որ վիետնամական և ֆրանսիական կառավարությունների միջև կնքվեց պայմանագիր, ըստ որի՝ Ֆրանսիան ընդունում էր վիետնամի անկախությունը և վերջինս պետք է մտներ Ֆրանսիական Միության մեջ, սակայն շուկով գաղութային վարչակազմը աջակցեց մարդինետային «Կոխսինհինի հանրապետության» ստեղծմանը, ինչից հետո 1946թ.նոյեմբերից Շնորհաշինում սկսվեցին ռազմական գործողություններ: Դրանք շարունակվեցին

յոթ տարի: Օգտագործելով պարտիզանական պայքարի մերողները՝ վիետնամական 10.000 բանակը դիմակայեց 90.000 ֆրանսիական էքսպերիցիոն կորպուսին: Կորեական կոնֆլիկտի ֆոնի վրա Հնդկաչինում սկսված ռազմական գործողությունները ավելի սուր բնույթ ստացան: Օգտվելով ԱՄՆ-ի աջակցությունից Ֆրանսիան իր բանակի թվաքանակը հասցրեց մինչև 180.000: Վիետնամի ազգային բանակը արդեն ուներ 100.000զինվոր: Գեներալ դը Լառնանա դը Տասինյիի գլխավորությամբ ֆրանսիական բանակը կարճատև հաջողություններ ունեցավ, որից հետո արդեն 1950-1951թթ.-ին նախաձեռնությունը անցավ Վիետնամցիների ծեռքը: Բեկումնային նշանակություն ունեցավ Դյենբյենֆույի երկար ամիսներ շարունակվող պաշարումը Վիետնամցիների կողմից: Դրա պվարտից առաջ Բեռլինում խորհրդակցության ժամանակ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարարները 1954թ.հունվար-փետրվար ամիսներին համաձայնության եկան, ըստ որի՝ 1954թ. ապրիլին ժնկում պետք է հրավիրվեր հատուկ խորհրդաժողով՝ Հնդկաչինում խաղաղություն վերականգնելու հարցի շուրջ: Դյենբյենֆույի ֆրանսիական կայազօրի հանձնվելուց հետո, որը տեղի ունեցավ 1954թ.մայիսի 7-ին, կանխորոշեց պատերազմի, ինչպես նաև ժնկան բանակցությունների ելքը: Բայց միայն Մենես-Ֆրանսի հշեանություն գլուխ օալուց հետո վերջակետ դրվեց յոթ տարվա խայտառակ պատերազմին, որի արդյունքում Ֆրանսիայի ընդհանուր կորուստները կազմեցին 140.000նարդ:

1954թ. հուլիսի 21-ին ստորագրվեց ժնկան պայմանագիրը, համաձայն որի Հյուսիսային և Հարավային Վիետնամում ձևավորվեցին անկախ պետություններ: Ֆրանսիան պարտավորվում էր դուրս բերել իր զորքերը Հնդկաչինի տարածքից, սակայն իրավունք ստացավ հսկողություն պահպանել Հարավային Վիետնամի գինված ուժերի վրա:

50-կան թթ. սկզբին կտրուկ սրբեցին հարաբերությունները Ֆրանսիայի և նրա հյուսիսափրիկյան պրոտեկտորատների՝ Թունիսի և Սարոկոյի հետ, որոնք մտնում էին Ֆրանսիական Միության կազմի մեջ՝ «միացած պետություններ» կարգավիճակով: 1951թ. հոկտեմբերին բունիսյան կառավարությունը հանդես եկավ պահանջով, որ Ֆրանսիան ճանաչի Թունիսի անկախությունը: Ֆրանսիան պատասխանեց ճնշամիջոցներով, որոնք ուղված էին Նեռ-Դեստուր ազգայնական կուսակցության ակտիվիստների դեմ: Արդյունքում ձեռքբակալվեց տեղական կառավարության վարչապետ Շենիկը, սպանվեց Թունիսի արհմիությունների գլխավոր քարտուղար Խաչերը: Թունիսում սկսվեց պարտիզանական պատերազմ: Նույն դրությունը նաև Մարոկոյում էր: 1952թ. դեկ-

տեմբերին այստեղ արգելվեց Խստիկյալի ազգայնական կուսակցության և Սարոկոյի կոմունիստական կուսակցության գործունեությունները: Ֆրանսիական կառավարությունը փաստորեն աջակցեց սուլթան Սոհամեդ բեն Յուսեֆի տապալմանը: 1954թ.-ին ազգային-ազատագրական շարժումը Ալժիրում սկսեց ընդլայնվել, և ստեղծվեց ազգային-ազատագրական ճակատ: 1955թ.-ին ֆրանսիական պառլամենտը ստիպված եղավ Ալժիրում նտցնել արտակարգ դրություն:

Գի Մոլի իշխանության գլուխ գալուց հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: 1956թ. մարտին կնքվեցին պայմանագրեր, որոնց համաձայն ճանաչվում էին Մարոկոյի և Թունիսի անկախությունը: Բայց ալժիրյան խնդիրը ավելի բարդ էր: Ալժիրում բնակվում էր ավելի քան մեկ միլիոն, այդպես կոչված, Եվրոպական գաղթածների էթնիկական, մշակութային և լեզվաբանական հիմքերի վրա: Եվրոպական համարում էին երկրի տերերը, իսկ ֆրանսիական նաևսայական գիտակցության համաձայն՝ Ալժիրը ընդհանրապես գաղուր չէր համարվում: Դեռևս 19դարում այն ձերք բերեց ֆրանսիայի ազգային տարածքի մի մասի կարգավիճակ: Մուսուլմանական բնակչության ազգային-ազատագրական շարժման զարգացումը շուտով քաղաքացիական բախման բնույթ ստացավ, որը և վերածվեց խոշոր զինված ընդհարումների: Անգամ Գի Մոլի կառավարությունը, որը ձգտում էր ապագայութացման գործընթացին իրավական բնույթ տալ, ստիպված եղավ պահպանել Ալժիրում իր ռազմական ուժերը: Գի Մոլը այս խնդիրի լուծումը տեսնում էր ընտրական օրենքի բարեփոխման մեջ, որն էլ պետք է հավասարեցներ բուն և եվրոպական բնակչության իրավունքները: Սակայն այդ ժրագիրը երկու կողմերին էլ ձեռնտու չէր: Ալժիր ուղարկվեց ևս 100.000 զինվոր, ինչպես նաև պահեստայիններ: Երեք ամիս անց 1956թ. հուլիսին, նույն կառավարությունը պաշտպանեց դիվանագիտական դեմարշը՝ ուղղված Եգիպտոսի, Նասերի կառավարության դեմ, որը ազգայնացրել էր Սուեզի ջրանցքը: Կոշտ հակաեգիպտական կուրսը բերեց նրան, որ ֆրանսիան Անգլիայի և Խորայելի հետ միասին հարձակվեց Եգիպտոսի վրա: Այդ ագրեսիայի ձախողումը և արաբական աշխարհի հետ հարաբերությունների վատացումը նպաստեց Ալժիրում իրավիճակի էլ ավելի բարդացմանը:

1957թ.հունվարին Ալժիրում ֆրանսիական կառավարության ներկայացուցիչը իշխանությունը հանձնեց գեներալ Մասյուին, որը դեկապարում էր պարաշյուտադեսանտային ստորաբաժանումները:

Փաստորեն այդ քայլը նշանակում էր, որ հակասությունը քաղաքական մերոդներով հնարավոր չէր լուծել: Ֆ.Գայառի նոր կառավարության փորձերը՝ ներգրավելու ամերիկյան դիվանագիտությունը ալժիրյան պրոբլեմը լուծելու համար, ավելի մեծ դժգոհություն առաջացրեց Եվրոպալժիրցիների շրջանում: Նրանց դեկավարության մեջ գնալով մեծ դեր էին սկսում խաղալ գեներալ դը Գոլի կողմնակիցները: Ժ.Սուստելը, որը ստեղծեց «Ֆրանսիական Ալժիրի փրկության և նորացնան պայքարի միությունը», դարձավ գեներալ Մասյուի հետ ալժիրյան խռովարարության նախաձեռնողը: 1958թ.մայիսի 13-ին նրանց կողմից ստեղծած «Դասարակական փրկության կոմիտեն» հայտարարեց, որ իր ձեռքն է Վերցնում ամբողջ իշխանությունը Ալժիրում: Քենց նույն օրը Ֆրանսիայում իշխանության գլուխ եկավ Պ.Պֆլիմենի կոալիցիոն կառավարությունը: Կարճատև բանակցություններից հետո հանրապետության դեկավարության և գեներալ դը Գոլի միջև որոշում ընդունվեց քննարկել պառլամենտում «ազգային փրկության կառավարության» ձևավորման հարցը, որը պետք է գլխավորեր դը Գոլը: 1958թ. հունիսի 1-ին այս որոշմանը կողմ քվեարկեցին 329 պատգամավորներ, դեմ՝ 224 և ձեռնպահ՝ 32 պատգամավոր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈԼԻԶՄԸ ԵՎ 5-ՐԴ ՀԱՍՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶԱԿՈՐՈՒՄԸ

1. Գոյիզմի քաղաքական վիլիսուփայությունը: 5-րդ Հանրապետության սահմանադրա-իրավական կառուցվածքը:

Նորից հանդես գալով ազգի փրկիչի դերում գեներալ դը Գոլը առաջարկեց ոչ միայն լուծել Ալժիրի հարցը, այլ նաև հիմնավորապես փոխել պետական համակարգը, որը, դը Գոլի համոզմամբ, առաջացնում էր քաղաքական կանագություն: Շատ տարիներ անց՝ «սկզբունքային ընդդիմությունից» իշխանության գլուխ գալուց հետո, դը Գոլը չկրկնեց իր նախկին սխալները: Նա հենվուն էր մասայական, լավ կազմակերպված կուսակցության վրա, որը ստեղծվեց 1958թ-ին և անվանվեց «Հանուն նոր հանրապետության պաշտպանության դաշինք» /ՅՈՒՆՈ /: Վերափոխված գոլիզմը իրենից ներկայացնում էր ամբողջական քաղաքական տեսություն, միանգամայն յուրահատուկ և, միևնույն ժամանակ, համապատասխան Ֆրանսիայի ազգային քաղաքական ավանդույթներին: Ընդհանուր ուսմունքի մեջ ներդաշնակ էին պետական գործարարությունն ու ռադիկալ գաղափարախոսական պարուս, էտատիզմի սկզբունքները և ազգային ինքնուրույնության միտքը, պահպանողականությունը և սոցիալական ռեֆորմիզմը: Դը Գոլը փորձեց երկրին առաջարկել «Երրորդ ուղի», որը կիաղթահարեր կոմունիստական տոտալիտար մոդելի ծայրահեղությունները և լիբերալ դեմոկրատիայի անգլոսաքսոնյան տարրերակը: Գոլիզմի հիմնական միտքը, որը միավորում էր քաղաքականության բոլոր ասպեկտները՝ պետական շինարարությունից մինչև տնտեսական կարգավորումը, դարձավ Ֆրանսիայի «ազգային մեծության» գաղափարը: Գոլիզմի միտքը Ֆրանսիայի մեծության նասին հեռու էր ավանդական ազգայնականությունից, ազգային գերազանցության նասին շովինիստական պատկերացումից: Ֆրանսիայի վեհությունը դը Գոլի համար միանգամայն իրական սոցիալական սկզբունք էր, այլ ոչ թե վերացական նպատակ: «Միայն մեծ գործերը ի վիճակի են ազատել Ֆրանսիային ինդիվիդուալիզմի կործանիչ հետևանքներից, իսկ ինդիվիդուալիզմը բնորոշ է ազգին, - գորում էր դը Գոլը, --Ես կարծում եմ, որ Ֆրանսիան, զրկված լինելով վեհությունից, դադարում է լինել Ֆրանսիա»: Ըստ գոլիզմի՝ Ֆրանսիան ավելին է, քան մի երկիր, որտեղ ապրում են միլիոնավոր ֆրանսիացիներ: Գոլականների համար Ֆրանսիան այն է, ինչը միավո-

րում էր նախկինում ապրող սերունդները և կմիավորի նրանց, ովքեր հետագայում իրենց ֆրանսիացիներ կանվանեն: Ֆրանսիան ժամանակից դուրս գտնվող իրականություն է, որը ուներ սեփական հետաքրքրություններ, նապատակներ և, վերջապես, կյանք: Այդ ամենը գոյություն ունի անկախ առանձին ֆրանսիացիների հետաքրքրություններից և նրանց գոյությունից: Դը Գոլը, փաստորեն, միացնում էր պետական մտքի մասին բռնապարտյան ավանդույթը Հանրապետություն-Ազգ հանրապետական գաղափարի հետ, որը սկիզբ էր առնում Ռուսոյից, Դանտոնից, Կլեմանսոյից: Դը Գոլի կարծիքով, միայն հզոր պետությունը կարող էր դառնալ ազգային անկախության, միասնության, հասարակական կարգապահության և արդարության երաշխավորը: «Դզոր պետություն» հասկացությունը չի նշանակում դիկտատորա: Դա մի պետություն է, որը պաշտպանում է միայն համագօքային շահերը, վեր է կանգնած անձնական շահերից և դասակարգերից: Դը Գոլը Եկավ այն եզրակացությանը, որ հզոր պետությունը չի բացառում արտոնություններ տրամադրել պառալամենտին և չի ձգտում վերացնել կուսակցությունները: Սակայն կուսակցությունները, լինելով կորպորատիվ ինստիտուտ, իրենց էությամբ հակասում են միավորված և հզոր պետության գաղափարին: Որպես հակադրություն «կուսակցությունների ռեժիմին»՝ դը Գոլը առաջարկում էր վերականգնել իսկական դեմոկրատիա, որի հիմքը պետք է լինի ժողովրդի գերիշխանությունը: Ֆունդամենտալ խնդիրները, այդ թվում նաև պետության նախագահի ընտրությունը և սահմանադրական կառուցվածքը, պետք է որոշվեն ժողովրդի անմիջական կամքի արտահայտությամբ, հանրաքվեի ճանապարհով: Պառանձենութը, արտացոլելով կուսակցությունների դիմակայությունը, նույնպես չեր կարող լինել պետական իշխանության կենտրոնը: Դը Գոլը ընդգծում էր, որ միասնությունը, ներքին կարգապահությունը պետք է լինեն իշխանության անբաժանելի մասերը: Վճռական դերը պետական իշխանության համախմբման մեջ պետք է խաղա կուսակցություններից դուրս կանգնած պետության դեկավարը: Բայց պետական ապարատի աշխատանքը պետք է ենթարկվի իշխանությունների բաժանման սկզբունքին: Դը Գոլը «Դզոր Ֆրանսիայի» վերացնունդի հիմքը համարում էր ոչ միայն սահմանադրական կարգավորման բարեփոխումնը, այլ նաև երկրի սոցիալական կայունության ապահովումը:

Այդ տեսակետից վճռական դեր պետք է խաղար «աշխատանքի և կապիտալի ընկերություն» կոնցեպցիան, որը պետք է հաղթահարեր դասական հակասությունները, ձևավորեր «եղրորդ ճանապարհի» հասարակական գարգացումը: Բանվորների մասնակցությունը շահույթների և արտադրության կառավարման մեջ

գոլականները տեսնում էին արդյունավետ միջոց կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի անշրջելի փոփոխությունը: Չուգակցելով պետական տնտեսական ակտիվության և անկախ, պրագմատիկ արտաքին կուրսի հետ՝ նման քաղաքականությունը կարող էր հիմք դառնալ ազգային միասնության և բարեկեցության վերածնուրի համար:

1958թ. հունիսի 1-ին Ազգային ժողովը դը Գոլին նշանակեց կառավարության նախագահ: Այդ որոշման համար իրենց ձայները տվեցին 329 պատգանավորներ. կողմն քվեարկեցին «անկախները», ՄՊԴ-ն, «սոցիալական հանրապետականները», սոցիալիստների և ռադիկալների մի մասը: 224 պատգանավորներ դեմ քվեարկեցին: Գոլիզնը ընդունեցին կոնունիստները, ՅՈՒՍՈ-ը Միտերանի գլխավորությամբ, ծախ ռադիկալները, սոցիալիստների մի մասը: Հունիսի 3-ին պառլամենտը ընդունեց սահմանադրական օրենք, որի համաձայն կառավարությանը վեց ամս ժամկետով լիովին իշխանություն էր տրվում: Կառավարությունը իրավունք չէր ստանում զբաղվել օրենսդրական գործներությամբ հասարակական իրավունքների և ազատությունների ոլորտներում: Կառավարությունը իրավունք էր ստանում վերանայել սահմանադրությունը: Բայց հունիսի 3-ի օրենքը սահմանել էր իհնգ սահմանադրական սկզբունքներ, որոնք վերանայման ենթակա չեն: Այդ սկզբունքները հետևյալն էին՝ 1/համընդհանուր ընտրական իրավունքը որպես իշխանության միակ աղբյուր, 2/օրենսդիր և գործադիր իշխանությունների բաժանունը, 3/կառավարության պատասխանատվությունը պառլամենտի առջև, 4/դատական իշխանության անկախությունը, 5/ֆրանսիայի և իրենից կախված ժողովուրդների միջև նոր հարաբերությունների ձևավորումը: Պառլամենտը ցույց հետո 4-րդ Հանրապետությունը դադարեց իր գոյությունը: 5-րդ Հանրապետության Սահմանադրության նախագիծը մշակում էր կոնսուլտատիվ հանձնաժողովը Միշել Դեբրեի գլխավորությամբ: Այն կազմված էր պառլամենտի երկու պալատների և կառավարության ներկայացուցիչներից: 1958թ. սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ հանրաքվե, որը և հավանություն տվեց նոր Սահմանադրությանը /79, 2%/: Այն ձևավորեց Ֆրանսիայում խառը նախագահապառլամենտական ռեժիմ: Յոթ տարի ժամկետով ընտրվող նախագահը ստացավ մեծ լիազորություններ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության շրջանակներում: Օրինակ՝ նախագահը իրավունք էր ստանում ինքնուրույն որոշում կայացնել արտակարգ դրություն նոցնելու և միջուկային ռումբ օգտագործելու հարցերում: Գործադիր իշխանության նկատմամբ հսկողությունը նախագահը իրականացնում էր՝ իրա-

Վունք ստանալով նախագահել Նախարարների խորհրդում, ինչպես նաև նշանակել և պաշտոնաթող անել վարչապետին: Կառավարության մյուս անդամները նշանակվում էին վարչապետի կողմից: Բայց կազմավորման ընթացքում կառավարությունը պետք է ստորին պալատից վստահություն ստանար: 5-րդ Հանրապետության նախագահը իրավունք ուներ մասնակցել օրենսդրական ընթացքին: Օրենքները, որոնք ընդունվում էին պառլամենտի կողմից, պահանջում էին պետական ակտի իրապարակում: Դրա հետ մեկտեղ նախագահը հետաձգվող վետոյի իրավունք ուներ, ինչպես նաև կարող էր կարող օրենքի նախագիծ դուրս հանել հանրաքվե: Նախագահը իրավունք ուներ ցույց ստորին պալատը ցանկացած ժամանակ: Նա հաստատում էր նաև երկու կարևորագույն պետական մարմինների կազմը՝ Պետական խորհրդի, որը հսկում էր կառավարության գործունեությունը, և Սահմանադրական խորհրդի: Նախագահը քաղաքական պատասխանատվություն չէր կրում և կարող էր դատապարտվել միայն պետական դավաճանության դեպքում:

Պառլամենտի երկու պալատները՝ Սենատը և Ազգային ժողովը, ձերք բերեցին գրեթե միանման լիիրավություն, որը բերեց փաստորեն կազուսի. օրենքի նախագիծը, որի նկատմամբ պալատների կարծիքը տարբեր էին, կարող էին անվերջ փոխանցվել իրենց միջև: Այդ դեպքում օրենքի ընդունման համար վճռական դերը անցնում էր կառավարությանը: Բայց Ազգային ժողովի քաղաքական կշիռը բավականին մեծ էր: Նոր կառավարությունը պարտադիր պետք է վստահության քվե ստանար պառլամենտի կողմից, և դա կրերեր նրան, որ վարչապետի պաշտոնում կիայտնվեր պառլամենտական մեծամասնության ներկայացուցիչը: Հենց վարչապետը, այլ ոչ թե նախագահը պալատների հետ մեկտեղ օրենսդրական նախաձեռնության իրավունք ստացավ: Սահմանադրության տեքստը հիմք չէր հանդիսանում նախագահի և վարչապետի լիազորությունների խիստ սահմանաշատմանը այն դեպքում, եթե նրանք ներկայացնում էին տարբեր քաղաքական ուժեր: Այդ թերությունը բացատրվում էր պետական իշխանության վերաբերյալ գոլական գաղափարով/կոնցեպցիայով/, համաձայն որի և՝ նախագահը, և՝ կառավարությունը պարտավոր են անցկացնել «ազգային քաղաքականություն»: Այսպիսով, 1958թ. Սահմանադրությունը ստեղծեց իշխանությունների ռացիոնալ բաժանման համակարգ 3-րդ և 4-րդ Հանրապետություններին բնորոշ պառլամենտական գլխավորության փոխարեն: Նախագահի իշխանությունը դաշնում էր համարյա ավտորիտար և կարող էր պահպանվել միայն գերիշխող քաղաքական ուժի գոյության դեպքում: Սոցիալա-

կան պաշտպանման տեսակետից 1958թ. Սահմանադրությունը պահպանեց նախորդի սոցիալական բովանդակությունը: Նրա մեջ առանց փոփոխության նտան «Մարդու և քաղաքացու իրավունքի մասին դեկլարացիան» և 1946թ. Սահմանադրության ներածությունը: Ֆրանսիան նախկինի պես սահմանվում էր որպես «անքաժանելի, դեմոկրատական և սոցիալական հանրապետություն»: Ֆրանսիական Միության փոխարեն հիմնվեց Ֆրանսիական Ընկերակցություն, որի կազմի մեջ նտան նաև անկախ պետությունները: Բայց Ֆրանսիայի կազմի մեջ առանձնանում էին Անդրօնվան դեպարտամենտների և Անդրօնվան տարածքների խմբեր: Վերջիններս, որոնք կազմավորված էին նախկին գաղութների հիմքի վրա, ստացան լայն ինքնավարություն ներքին քաղաքականության և վարչական կարգերի ոլորտում՝ պահպանելով Ֆրանսիայի լիազորությունները ներքին քաղաքականության և պաշտպանության բնագավառներում:

Պառլամենտական ընտրությունները տեղի ունեցան 1958թ. նոյեմբերին և կտրուկ փոխեցին ստորին պալատի քաղաքական ուժերի հարաբերությունները: ՅՈՒՆՈ –ի հաջողությունը, որը ստացավ 188տեղ, օրինաչափ էր: Սոցիալիստները և ռադիկալները ստացան 40-ական տեղ, ՄՊԴ՝ 44, իսկ կոմունիստները՝ ընդամենը 10 տեղ: «Անկախները» ստեղծեցին 133 պատգամավորներից բաղկացած ֆրակցիա: Այսպիսով, պառլամենտում կազմավորվեց դը Գոլին աջակցող մեծամասնություն: 1958թ. դեկտեմբերին դը Գոլը նախագահ ընտրվեց: Նա հանձնարարեց Միշել Շերեին ծևավորել կառավարություն: Ակզենական շրջանում կարինետի կազմում բացի գոլականներից մտան ՄՊԴ-ի և «անկախների» ներկայացուցիչներ, ինչպես նաև մեկական սոցիալիստ և ռադիկալ: Ներկուսակցական միասնության տեսանելիությունը երկար պահպանել չհաջողվեց: Դը Գոլը ցանկություն անգամ չուներ ներդաշնակել իր գործողությունները կոալիցիայի գործընկերների հետ:

Այդ նույն ժամանակ նախագահական մեծամասնության ստվերի տակ մնալու վախը ստիպում էին շատ կուսակցությունների առաջնորդներին հեռու մնալ կառավարության և նախագահի գործողություններից: Արդեն 1959թ-ին սոցիալիստները և ռադիկալները վերջնականապես ընդդիմության կողմն անցան: Ծնդ որում սոցիալիստական կուսակցության կազմից դուրս եկավ ձախ ռադիկալների խումբը և ստեղծեց «Ինքնավար» սոցիալիստական կուսակցությունը: 1960թ-ին այն միավորվեց երիտասարդական «Զախ սոցիալիստական միության» հետ և ստեղծեց «Միավորված սոցիալիստական կուսակցություն» /ՄՍԿ/: 1960թ-ին ՍՆԻՊ-ում

տեղի ունեցավ ներկուսակցական վիճաբանություն ֆինանսական բարեփոխման հարցի շուրջը, որը պառակտեց կուսակցությունը, և 1962թ-ին այնտեղից անջատվեց խումբ, որը գլխավորում էր ժիսկար Դ’ Էսթենը: ՍՍԻՊ-ի ղեկավարությունը նույնպես պառակտվեց: «Աջ լիբերալների» խմբի ներկայացուցիչ Պինեն դը Գոլի դրդմամբ ազատվեց ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի պաշտոնից: Արդյունքում նրան փոխարինեց «անկախների» երիտասարդ առաջնորդներից մեկը՝ Վալերի ժիսկար դ’ Էսթենը, որը, ինչպես արդեն ասվել է, շուտով դուրս է գալիս ՍՍԻՊ-ից: 1962թ. կառավարությունը լրում են ՄՌՊ-ի ներկայացուցիչները, որոնք դժգոհ էին դը Գոլի կողմից վարած կոշտ քաղաքականությունից Եվրոպական տնտեսական համագործակցության/ԵՏՀ/ նկատմամբ:

60-կան թթ-ի սկիզբը գոլական շարժման համար կարևոր փուլ դարձավ: 1961-1962թթ-ին տեղի ունեցավ երկու համրաբէ ալժիրյան հարցի վերաբերյալ, որի արդյունքում Ալժիրը ստացավ անկախություն: Սրանից հետո 30ԻՆՈ –ից դուրս եկավ նրա ռադիկալ թեր Ժ.Սուստելի գլխավորությամբ: «Ուլտրաները» մեղադրեցին դը Գոլին ազգային դավաճանության մեջ: Նրանք նույնիսկ անցան ահաբեկչական գործողությունների՝ մի քանի անգամ փորձելով սպանել նախագահին: 1962թ. ապրիլին վարչապետ Դեբրեին փոխարինեց ժորժ Պոմպիդուն: Կառավարության նոր դեկավարը չէր մտնում ոչ մի գոլական խմբավորումների մեջ, բայց նա համարվում էր դը Գոլի մտերիմ քաղաքական գործիչներից մեկը: Երկար ժամանակ նա գլխավորում էր նախագահի քարտուղարությունը: Ակտիվացրին իրենց գործներությունը երկու գոլական խմբավորումներ՝ «ձախ» գոլականները և, այսպես կոչված, «Էնպիրիկները» Շարան-Դելմասի գլխավորությամբ: 1962թ-ին նրանք ստեղծում են միասնական բլոկ /30ԻՆՈ – 30ԻԴ/ : Կուսակցական սպեկտրում տեղի ունեցած ռադիկալ վերադասավորությունները դը Գոլին ստիպեցին արագացնել սահմանադրական բարեփոխման անցկացումը: Նա հանդես եկավ նախաձեռնությամբ, որով նախագահը պետք է ընտրվեր համընդիմանոր ընտրությունների իհման վրա: Պառանանտի կողմից նախագահական իշխանության հանդեպ հսկողության թուլացման վախը ստիպեց բարեփոխման դեմ դուրս գալ ֆրանսիական կուսակցությունների մեծամասնությանը: Դը Գոլը ցրեց ստորին պալատը և հարցը դուրս բերեց հանրաբէ: Հանրաբէի արդյունքում, որը տեղի ունեցավ 1962թ.հոկտեմբերի 28-ին, քեարկողների 61, 7%-ը աջակցեցին նախագահի նախագծին: Բայց հանրաբէի ժամանակ տեղի ունեցավ հակագոլական ընդդիմության համախմբում: Սոցիալիստները, ռադիկալները, ՄՌՊ-ն և ՍՍԻՊ-ը ստեղծեցին նախընտրական բլոկ՝

«Դեմոկրատական համաձայնություն» անվանումով: Կոմունիստները և սոցիալիստները երկար ժամանակից հետո առաջին անգամ համաձայնության եկան պառամենտական ընտրությունների երկրորդ փուլում միմյանց աջակցելու վերաբերյալ: «Պառամենտական ընտրությունների արդյունքում Ազգային ժողովում ստեղծվեցին երկու ընտրություններ: Կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների ֆրակցիաները կազմեցին համապատասխանաբար 41 և 67 պատգամավորներ: ՅՈՒՆՌ- ՅՈՒՏՏ բլոկը և Ժ.Դ.՝ Էսթենի «անկախ հանրապետականները» ստացան համապատասխանաբար 229 և 32 տեղեր: Ռադիկալները ստացան 44 տեղ, ՄՐԴ-Ը 38, ՍՍԻՊ-Ը՝ 18: Կառավարությունը նորից գլխավորեց Ժ.Պոնայի դուռը: Դր Գոլի դեմ վճռական ճակատանարս ընդդիմությունը պատրաստվում էր տալ նախագահական ընտրությունների ժամանակ, որը պետք է տեղի ունենար 1965թ-ին: Ակնհայտ էր, որ այս կամ այն կուսակցությունների առաջնորդներից ոչ մեկը միայնակ չէր կարող դիմադրել նախագահի հեղինակությանը: ՄՐԴ-ի դեկավարությունը ժամանակակից գլխավորությամբ նախաձեռնեց կենտրոնամետ կուսակցությունների հետագա համախմբումը: 1962թ. վերջում միջկուսակցությունների հիման վրա սկսեց ձևավորվել քաղաքական «Դեմոկրատական կենտրոն» կոալիցիան, որի կազմի մեջ մտան ՄՐԴ-ի և ՍՍԻՊ-ի մի շարք խմբավորումներ: «Դեմոկրատական կենտրոնից» նախագահական ընտրությունների համար թեկնածու առաջարկվեց Լեկանյուեն: Նրա ծրագիրը կառուցվել էր դր Գոլի ներքին քաղաքականության քննադատության հիման վրա՝ գլխավորապես Եվորպական հարցի շուրջը: Ռադիկալների և սոցիալիստների միջև ի հայտ եկան ձախ բլոկի ստեղծման կողմնակիցներ, որոնք չէին բացառում կոմունիստների հետ ռազմավարական համագործակցությունը և «Երրորդ ուժի» կոալիցիայի վերաստեղծումը, որը կիամագործակցեր կենտրոնամետների հետ: Այ ռադիկալները հանդես եկան որպես «Դեմոկրատական միասնության» միջկուսակցական բլոկի ստեղծման նախաձեռնողներ: Այդ միտքը աջակցություն ստացավ աջ սոցիալիստների կողմից Մարտելի քաղաքապետ Գաստոն Դեֆերի և Լիոնի քաղաքապետ Պիեռ Մորուայի գլխավորությամբ: Ինքը՝ Դեֆերը, ձախ կենտրոնամետ ուժերի կողմից հավակնում էր նախագահի թերնածովի պաշտոնին: Բայց սոցիալիստների առաջնորդ Գի Մոլեի ազգեցությամբ կուսակցությունը ընդունեց այլ ռազմավարություն: Նրանք և ձախ ռադիկալները հանդես եկան որպես բոլոր ձախ, ոչ կոմունիստական խմբերի միավորման նախաձեռնողներ: Այդպես ստեղծվեց սոցիալիստական և դեմոկրատական ձախ ուժերի Ֆեդերացիա /ՅՈՒԴՖ/՝ ՅՈՒԴՖ-ի

կողմից նախագահի թեկնածու դարձավ Ֆրանսուա Միտերանը, որի կուսակցությունը՝ ՅՈՒԴՈ-ը, նույնպես միացավ Ֆեներացիային: Միտերանը համարվում էր հետպատերազմյան ֆրանսիայի հանրաճանաչ քաղաքական գործիչներից մեկը և դր Գոլի ընդդիմադիրը: Նրա ծրագրին, որը հիմնված էր կառավարության սոցիալական և տնտեսական քաղաքականության, ինչպես նաև 5-րդ Հանրապետության Սահմանադրության կառուցվածքի քննադատության վրա, աջակցեցին կոմունիստները: Այսպիսով, Միտերանը առաջին անգամ երկրի պատմության մեջ դարձավ «ձախ ֆրանսիայի» կողմից միակ թեկնածուն նախագահի պաշտոնի համար: «ՈՒլտրաները» և մյուս աջ ռադիկալ խմբավորումները առաջ քաշեցին Տիւկյե-Վենյանկուրի թեկնածությունը: Նախագահական ընտրությունները, որոնք տեղի ունեցան երկու փուլով՝ 1965թ. դեկտեմբերի 5-ին և 19-ին, ավարտվեցին դր Գոլի դժվար հաղթանակով: Առաջին փուլում նա ստացավ 44% ձայն, Միտերանը՝ 32%, Լեկանյուեն՝ 13%, Տիւկյե-Վենյանկուրը՝ 5%: Երկրորդ փուլում դր Գոլը ստացավ 44, 7% ձայն, Միտերանը՝ 37, 4%:

2. Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական զարգացումը դր Գոլի կառավարման ժամանակաշրջանում

Դր Գոլի իշխանության գլուխ անցնելուց հետո «դիրիժիզմի» պրակտիկայում տեղի ունեցավ նոր շրջադարձ: Դր Գոլը համարում էր, որ հասարակական զարգացման լճացման պատճառներից մեկը հանդիսանում էր լիբերալիզմի զաղափարը քացարձակ դարձնելու փորձը: Գոլական տնտեսական կոնցեպցիան ընդունում էր շուկայական, մոդակցական մեխանիզմների գերակայությունը նկառութնեսական մակարդակի վրա, սակայն, միևնույն ժամանակ, փորձում էր ապացուցել, որ անհրաժեշտ է նաև պետական կարգավորում և պրոտեկցիոնիստական աջակցություն կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող տնտեսական բնագավառներում:

1960թ-ի գարնանը կառավարությունը ընդունեց տնտեսական «ժամանակավոր ծրագիր», որը հիմնված էր ֆինանսական կայունության միջոցառումների վրա: 4-րդ և 5-րդ տնտեսական ծրագրերում /1962-1965թ. և 1966-1970թ./ առաջնությունը տրվեց գիտական արդյունաբերական արտադրության զարգացմանը, արտադրության համակենտրոնացման գործընթացի խթանմանը, արտաքին առևտության ծավալի մեծացմանը: Ֆինանսական կայունացման ծրագրիը, որը մշակվել էր 1958թ.վերջում, մտադիր էր ռացիոնալիզացմել բյուջետային ծախսերը: Տեղի ունեցավ ֆրանկի նոր

դեվալվացիա 17%-ով, թղթադրամի սահմանափակումներ մտցվեցին: Դրամական շրջանառության կանոնավորման համար 1960թ.-ին անցկացվեց արժեքորդի բարեփոխում, որով «իին ֆրանկերը» փոխարինվում էին «նոր ֆրանկերով»՝ 1: 100 հարաբերությամբ: Այս ամենը թույլ տվեց կարծ ժամանակվա ընթացքում կայունացնել ֆրանկը: Ֆինանսական կայունացմանը նպաստեց նաև 1965թ. ֆրանսիայի արտաքին պարտքերի վճարումը ԱՄՆ-ին: Այդ պահից սկսած՝ ֆրանսիան վերադարձավ խոշոր կապիտալի արտահանողների թվին: 60-կան թթ.-ին արտաքին առևտորի ծավալը գերազանցեց նախապատերազմյան մակարդակը չորս անգամ: Ֆրանսիայի արտաքին առևտուրը զարգանում էր երկու հիմնական գործողների ազդեցության ներքո: Մի կողմից դը Գոլի կառավարությունը ձգտում էր անրապնդել իր առևտորային հարաբերությունները նախկին գաղութների հետ և այդ քաղաքականությունը ֆրանսիան հաջողությամբ էր անցկացնում: Էլ ավելի հաջող էին ֆրանսիայի առևտորային հարաբերությունները Եվրոպական համագործակցության հետ: Ֆրանսիայի արտաքին առևտորի շրջանառությունը այդ պետությունների հետ արդեն 60-կան թթ.-ին երեք անգամ ավել էր, քան առևտորային ծավալները նախկին գաղութների հետ, որոնք մտնում էին ֆրանսիական Համագործակցության մեջ: Ֆրանսիայի մասնակցությունը Եվրոպական համագործակցության մեջ շատ բարենպաստ ազդեց ֆրանսիական գյուղատնտեսության վրա: Սպառնելով խօսել կապերը ԵՏԴ-ի հետ՝ դը Գոլը 1962թ.-ին հասավ իր նպատակին. ԵՏԴ-ն հանեց մաքսային սահմանափակումները գյուղատնտեսական ապրանքների առևտորի վրա: Ֆրանսիական դիվանագիտության համար ավելի նշանակալից հաղթանակը եղավ ԵՏԴ-ի կողմից ընդունած գյուղատնտեսության արտադրության աջակցության մասին կոմպլեքսային ծրագիրը: Բյուջետա-ֆինանսական համակարգի կայունացումը թույլ տվեց կառավարությանը կենտրոնացնել ուժերը բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման վրա: Հատկապես արագ էին զարգանում քիմիական և ավտոմոբիլային արդյունաբերությունները, ձևագործության նորագույն ռազմա-արդյունաբերական կոմպլեքսի բնագավառներ՝ միջուկային, հրթիռային: Ֆրանսիան դարձավ աշխարհի երրորդ միջուկային պետությունը:

Գոլական պրոտեկցիոնիզմի առանձնահատկություններից մեկը դարձավ ակտիվ տարածաշրջանային քաղաքականությունը, որն ուղղված էր հաղթահարելու աշխարհագրական անհամաշափ արդյունաբերական զարգացումը: Այդ նպատակով նոր արտադրամասերը կառուցվում էին հիմնականում երկրի ծայրամասերում՝ աերոսիթեգերքականը՝ Գրենորլի մոտ, էլեկտրոնային արդյունաբե-

բության գործարանները՝ Բրետանում: Ընդլայնվում և ամրապնդվում էին արդյունաբերական կոնյուքուր Մարսելի շրջաններում արևմտյան ծովափում: Տաս տարվա ընթացքում՝ 1958-1968թթ.-ին Ֆրանսիայում արդյունաբերության արտադրության ծավալը ավելացավ 60%-ով, արդյունաբերության արտադրության աճման տեսնար կազմեց տարեկան 5, 5%: Գյուղատնտեսության արդյունաբերության ապրանքների արտադրությունը աճեց 66%-ով: Արդյունաբերության մեջ զգալի չափով արագացավ մենաշնորհային գործնընթացը: Եթե նախկինում այն ընթանում էր մասնավորապես մանր և միջին ձեռնարկությունների միասնության հաշվին, ապա հետո խոշոր ձեռնարկությունները սկսում են կլանել փոքրերին:

60-կան թթ.-ին արդյունաբերական ձեռնարկությունների միասնության հիմնական ձևը դարձավ ֆինանսարդյունաբերական խումբը, որը ձևավորվում էր խոշոր բանկի կամ հոլդինգի կողմից: Ֆինանսարդյունաբերական խմբերի տասը առաջատարներ հսկում էին մասնավոր հատվածի 40%-ը և ունեին զգալի ազդեցություն պետական հատվածի զարգացման վրա: Այնուամենայնիվ Ֆրանսիայում արդյունաբերության համակենտրոնացման մակարդակը առաջվա պես ավելի ցածր էր, քան մյուս զարգացած երկրներում:

3. Դրայվյան Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը

Գոլական արտաքին քաղաքական դոկտրինան կառուցվել էր ազգային շահերի առաջնության հիման վրա: Դը Գոլը հրաժարվեց ատլանտյան համերաշխության գաղափարից և վճռականորեն դուրս եկավ երկու գերիշխող հանաշխարհային կենտրոնների դեմ: Ֆրանսիան ձգուում էր կառուցվածքային երկխոսության համար հենարան դաշնալ Արևմուտքի և Արևելի միջև: Դա նպաստեց ֆրանս-խորհրդային հարաբերությունների բարելավմանը: 1958-1959թթ.-ին Վերսակավեցին միջկառավագարական ակտիվ կոնտակտներ, արագ զարգանում էր երկու երկրների տնտեսական համագործակցությունը: Դատկապես Խորյուշյովի այցից հետո, որը տեղի ունեցավ 1960թ-ին, ֆրանս-խորհրդային հարաբերությունների զարգացումը ստացավ դիմանիկ բնույթ: Դը Գոլի պաշտոնական այցը Խորհրդային Միություն տեղի ունեցավ 1966թ-ին, երբ ֆրանսիան դրվս եկավ ՆԱՏՕ-ի ռազմական կառուցվածքից, ինչը ունեցավ հսկյալական քաղաքական ռեզոնանս: 1959թ. ստեղծվեց «ֆրանսիա-Արևելյան Եվրոպա» կոմիտեն, որի միջոցով ֆրանսիան

իր կապերն էր ընդլայնում արևելաեվրոպական սոցիալիստական երկրների հետ: Ֆրանսիան առաջինն էր արևմտյան երկրներից, որը ճանաչեց Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը /ԳԴՀ/: Դը Գոլը գտնում էր, որ կոմունիստական երկրների հետ համագործակցության զարգացումը այդ երկրներում դեմոկրատիզացման հասնելու էֆեկտիվ միջոց է: Ֆրանսիայի հարաբերությունները ԱՄՆ-ի հետ 60-կան թթ-ին զգալի չափով վատացան: Վճռական հարցը եղավ դը Գոլի՝ Ֆրանսիայի անկախությունը ազգային անվտանգության շրջանում ապահովելու ձգտումը: Սկզբնական շրջանում նա չէր ձգտում առօճակատման գնալ ՆԱՏՕ-ի հետ: Ֆրանսիական դիվանագիտությունը ձգտում էր ստեղծել «Եռապետություն», որի կազմի մեջ պետք է մտնեին ԱՄՆ, Ֆրանսիան, և Մեծ Բրիտանիան: Փարիզը պահանջում էր ամերիկացիներից, որ նրանք իրաժարվեն ՆԱՏՕ-ի միջուկային գենքի վրա մենաշնորհ հսկողությունից: Այդ քաղաքական նախաձեռնությունների ձախողումը, միջուկային լարվածությունը 60-կան թթ-ի սկզբին, որն առաջացավ Բեռլինյան^{*} և Կարիբյան^{**} ճգնաժամերի հետևանքով, ստիպեցին դը Գոլին արագացնել անկախ ազգային պաշտպանության ստեղծումը: Վճռական նշանակություն ունեցան 1962թ. անգլո-ֆրանսիական և անգլո-ամերիկյան բանակցությունները միջուկային գենքի համակարգի զարգացման հարցի շուրջ: Մեծ Բրիտանիան մերժեց ֆրանսիական համատեղ միջուկային ուժ ստեղծելու նասին ծրագիրը և միացավ ամերիկյան «բազմակողմյան միջուկային ուժերի» ծրագրին: 1963թ-ից ֆրանսիան վերջնականապես իրաժարվում է «աստվածության կուրսից» և անցնում է «միջուկային սանձահարման» ազգային համակարգի ստեղծմանը: Սահարայում անցկացվում էին միջուկային գենքի փորձերը, սկսվեց «Միրած 4-2» ինքնաթիռների ստեղծումը, որոնք ի վիճակի էին տեղափոխել միջուկային գենք, միջուկային սուլանավեր: 1964թ-ի հուլիսին մամուլի ասուլիսի ժամանակ դը Գոլը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ ֆրանսիան արդեն

* 1961թ.օգոստոսի 12-ի լուս 13-ի գիշերը ԳԴՀ-ին պատկանող Արևյան Բեռլինից դեպի Արևմտյան Բեռլին տանող բոլոր ճանապարհների վրա սկսեցին կառուցել սահմանային արգելափակումներ՝ նպատակ ունենալով դադարեցնել փախստականների հոսքը: Քիչ անց կառուցվեց նաև 155կմ երկարությանը պատ, ինչից հետո կտրուկ վատացան հարաբերությունները ԽՄՀ-ի և Արևմտյան Գերմանիայի միջև:

** Կարիբյան ճգնածամբ տեղի ունեցավ 1962թ., երբ ԽՄՀ-ը փորձ արեց Կուբայում տեղադրել միջուկային գենք տանող իրթիռներ, ինչը քիչ մնաց բերեր միջուկային կոճֆլիկտի ԽՄՀ-ի և ԱՄՆ -ի միջև:

միջուկային գենք ունեցող երկիր է: Արդեն մյուս տարվանից հետզիետե Ֆրանսիան սկսում է դուրս գալ ռազմաքաղաքական կառուցվածքներից, որոնք գտնվում էին ԱՄՆ-ի հսկողության տակ: 1965թ-ին Ֆրանսիան դադարեցրեց ճամանակցել ՍԵԱՏՕ-ի¹ խորհրդի նիստերին և, փաստորեն, դուրս եկավ այդ ռազմաստրատեգիական բլոկից: 1966թ. մարտին ֆրանսիական կառավարությունը հայտարարեց, որ մտադիր է դուրս գալ ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպությունից: Այդ որոշումը հիմնավորվում էր միջազգային դրության փոփոխությամբ, Արևմուտքին իրական վտանգի բացակայությամբ: ՆԱՏՕ-ի ղեկավարությանը առաջարկվեց կարծ ժամանակվա ընթացքում վերաբաշխել 40.000 ամերիկյան և կանադական զինծառայողներին մյուս եվրոպական երկրների տարածքներում: Ֆրանսիան իրաժարվեց ԱՄՆ որպես փոխհատուցում վճարել 2, 5 մլրդ. բոլար: 1967թ-ին Ֆրանսիայի զինված ուժերի գլխավոր շտարի պետ Շ.Այերի կողմից մշակվեց երկրի նոր ռազմական դրկտրինան: Հաստատվում էր, որ միջուկային ուժերը կազմում են ազգային անվտանգության հիմքը:

Նրանց օգտագործումը նախատեսվում էր միայն «սանձահարման» նպատակով, այսինքն որպես պատերազմի կանխման միջոց: Այդ դրկտրինան ստացավ «Պաշտպանություն բոլոր ազինուտներով» անվանումը, քանի որ պուենցիալ հակառակորդի դերում արդեն հանդիսանում էր ոչ միայն խորհրդային բլոկը:

Գաղութային հարցը դը Գոլի համար չդարձավ առաջնահերթ նրա արտաքին քաղաքականության համար: Շատերը նախագահի պաշտոնում տեսնում էին մի մարդու, որն ի վիճակի էր վերջ տալ կայսրության վիլուգնանը և ալֆիրյան ճգնաժամին: Բայց դը Գոլը համոզված էր, որ ավանդական գաղութացման դարաշրջանն ավարտվել է: «Երրորդ աշխարհի» երկրների հետ հարաբերությունների հիմքը նա համարում էր փոխարդյունավետ տնտեսական համագործակցությունը և Ֆրանսիայի հեղինակության ամրապնդումը՝ որպես մի երկրի, որը պատրաստ է աջակցել յուրաքանչյուր ժողովրդի ազգային և պետական անկախության կանքին: Գոլիզմը ձևավորեց ֆրանսիական ներգաղութային քաղաքականության հիմքը: Համապատասխան 1958թ. Սահմանադրությանը՝ ֆրանսիական Դաշնությունը վերափոխվեց Ընկերակցության, որն ընդգրկում էր ինքնավար պետություններ, որոնք ազատ դուրս գալու և լրիվ անկախություն ստանալու իրավունք ունեին: Հանրաքվեների միջոցով Դաշնության անդամնե-

¹ ՍԵԱՏՕ-ռազմ.-ստրատեգ.բլոկը, գոյություն ունեցավ 1954-1977թթ.: Ստույգ էին Ֆրանսիան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Պակիստանը, Ֆիլիպինները և ուր

Դը որոշեցին Ընկերակցության մեջ իրենց մասնակցության բանաձևը: Միայն Գվինեան միանգամից հայտարարեց, որ չի մասնակցի հանրաքվեին, և 1958թ. հիկունքերի մեկից նա հռչակվեց անկախ պետություն: Շուտով սկսվեց երկրներ անդամ-ների դրւու գալը Ընկերակցությունից: 1960թ. հունվարին անկախություն ստացավ Կամերունը, քիչ անց՝ Տոգոն և մյուս պետությունները, որոնք մտնում էին Ֆրանսիական Հասարակածային և Արևմտյան Աֆրիկայի կազմի մեջ: 1960թ. ընթացքում, որն անվանվեց «Աֆրիկայի տարի», անկախացան 14 նախկին ֆրանսիական գաղութներ: Սակայն շնորհիկ գոլական մտածված քաղաքականությանը՝ Ֆրանսիան պահպանեց այդ տարածք-ներում զգալի տնտեսական և քաղաքական ազդեցություն: Ընկերակցությանը վերաբերող սահմանադրական դրույթները վերջնականացնեն վերացվեցին 1995թ-ին: Ֆրանսիայի համար «Երրորդ աշխարհի» երկրների հետ հարաբերությունները հաստատելու համար վճռական նշանակություն ունեցավ ալժիրյան կոնֆլիկտի պարատը: Առաջն առնելով ծայրահեղականության բոլոր բռնկումները ալժիրյան ազգայնակցականների և ֆրանսիական ծայրահեղականների կողմից դը Գոլը սկսեց նախապատրաստվել այդ հարցի իրավական լուծմանը: 1959թ-ի սեպտեմբերին նախագահը հայտարարեց, որ մտադիր է կարգավորել Ալժիրի խնդիրը «ալժիրցիների կողմից իրենց ապագայի ընտրության ճանապարհով»: «ՈՒլտրաները» պատասխանեցին բռնության նոր ալիքներով: 1960թ-ի հունվարին Ալժիրի մայրաքաղաքում տեղի ունեցավ խռովության փորձ, որն ստացավ «բարիկադների շարաթ» անվանումը: Այդ իրադարձությունները խթան հանդիսացան գոլական շարժման պառակտման և ռադիկալ թևի առանձնացման համար: 1961թ. հունվարի 8-ին ֆրանսիական կառավարությունը հանրաքվե կազմակերպեց Ալժիրին ինքնորոշման իրավունք տրամադրելու վերաբերյալ: Կողմ քվեարկեցին ընտրողների 75%-ը: Այդ իրադարձությունը դրեց «ուլտրաներին» պետական հեղաշրջման փորձ կատարել: Այրիի 22-ին նրանք Ալժիրում տեղաբաշխված մի քանի զորամասերի աջակցությամբ զավթեցին իշխանությունը երկրի մայրաքաղաքում և հայտարարեցին Ֆրանսիայի նախագահի տապալման մասին: Խռովությունը գլխավորեցին գեներալներ Սալանը, Շալը, Ժուլոն և Զելլերը: Ալժիր ուղարկվեցին նախագահի հավատարիմ զորքեր, որոնք ճնշեցին խռովությունը: «ՈՒլտրաների» ռադիկալ խմբավորումները ընդհատակ անցան՝ ստեղծելով ահարեւշական կազմակերպություն /«գաղտնի բանակ»/: Համարյա մեկ տարի շարունակվող բանակցություններից հետո՝ 1962թ. մարտի 18-ին,

Ֆրանսիական կառավարության և Ալժիրի ներկայացուցիչների/Ազգային ազատագրման ճակատ՝ ԱԱԾ/ միջև ստորագրվեցին Եվխանյան համաձայնություններ, որով ֆրանսիական զորքերը պետք է դուրս բերվեին երկրից, Ալժիրի Եվրոպական բնակչությունը ստանում եր անձեռնմխելիության երաշխիքներ, և պահպանվում էին ֆրանսիական ռազմական բազաները: Ալժիրում հանրաքվե անցկացնելուց հետո, 1962թ. հուլիսի 1-ին ֆրանսիական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց երկրի անկախության ճանաչման նասին: Ալժիրյան ճգնաժամի ավարտը ֆրանսիայի կոնստրուկտիվ հարաբերությունների ընդլայնման խթան հանդիսացավ արարական երկրների հետ:

60-ական թթ-ի երկրորդ կեսին այդ ուղղությունը առաջնային է դառնում ֆրանսիական քաղաքականության համար «երրորդ աշխարհում»: Դը Գոլը իրաժարվեց խրայելամետ քաղաքականությունից Սերձավոր Արևելքում, որը անց էին կացնում 4-րդ Հանրապետության իշխանությունները: 1967թ-ին արար-խրայելական պատերազմի ժամանակ Ֆրանսիան արգելք է դնում հարայելին «Միրած» կործանիչների մատակարարումների վրա, իսկ 1968թ-ից սկսած ընդհանրապես արգելեց բոլոր տեսակի զինամքերի մատակարարումը Թել-Ավիվին: Ֆրանսիական դիվանագիտությունը զգալի ակտիվություն ցույցաբերեց նաև ասիական Խաղաղ օվկիանոսյան շրջանում: 1964թ. հունվարին Ֆրանսիան իրավապես ճանաչեց Չինական ժողովրդական Հանրապետությունը /ՉԺՀ/: 1965թ. մայիսին ֆրանսիական պատվիրակությունը ԱՄԿ-ում դեմ դուրս եկավ ԱՄՆ-ի Դոմինիկյան Հանրապետությունուն ազրեսիվ գործողությունների դեմ և դատապարտեց նրանց Վիետնամուն ռազմական միջամտության համար:

4. 1968թ. «Կարմիր մայիսը» և դը Գոլի հրաժարականը



Չնայած դըգույան ռեժիմի ակնհայտ հաջողությանը տնտեսական և արտաքին քաղաքականությունների ոլորտներում՝ ներքին դրությունը ֆրանսիայում 60-կան թթ-ի վերջում գնալով սրվում եր: Պառլամենտում գոլական մեծամասնությունը 1967թ-ին տեղի ունեցած ընտրություններից հետո կրծատվեց: Գոլականներին իրենց կողմնակիցների հետ միասին հաջողվեց պահպանել միայն 244 տեղ: Իրենց

տեղերը պառլամենտում ավելացրին ձախ կուսակցությունները: Կոնունիստական կուսակցությունը ստացավ 73 տեղ, սոցիալիստների և ռադիկալների դաշինքը՝ 116 տեղ: 1968թ. նախախոհ լարվածությունը երկրում հասավ իր գագաթնակետին: Հաճընդիանուր դժգոհության բռնկման պատճառը դարձան ուսանողության ծայրահեղականների ելույթները: Շուտով Փարիզում և ֆրանսիայի մյուս խոշոր քաղաքներում սկսվեցին ուսանողների փողոցային բախումները ոստիկանության հետ: Խոշորագույն արիմնիությունները աջակցեցին ուսանողներին: Սայսկ 13-ին ամբողջ երկրով մեկ տեղի ունեցավ համընդիանուր համերաշխության գործադուլ: Ընդդիմության հիմնական պահանջները հետևյալն էին. 1/բարձրագույն կրթության բարեփոխում, 2/սոցիալական ապահովության բարելավում, 3/աշխատավարձների բարձրացում: Սակայն դժգոհության հիմնական օբյեկտը համդիսանում էր պետությունը, որն իր վրա էր վերցրել ազգի ճակատագրի պատասխանատվությունը և նարդը, ով նարմնավորում էր այն: «Ֆրանսիացիները հոգնել են ինձանից, իսկ ես՝ նրանցից» - խոստովանեց դը Գոլը: Փորձելով կայունացնել քաղաքական դրությունը դը Գոլը որոշեց ցրել պառլամենտը և անցկացնել արտահերթ ընտրություններ 1968թ. հունիսին: Սայսկ իրադարձությունները գոլական էլեկտորատին ստիպեցին համախմբվել: Գոլական կուսակցությունը միանալով անկախ հանրապետականների հետ՝ պառլամենտի նոր կազմում ունեցավ 354 տեղ, ինչը թույլ տվեց նրան ստանալ բացարձակ մեծամասնություն: Այդպիսի անսպասելի հաջողությունը ստիպեց դը Գոլին անցնել քաղաքական հարձակման: Նոր վարչապետ դարձավ Կով դը Մյուրվիլը, որը փոխարինեց Պոմայիուին: Դը Գոլի անձնական դիրքերի ամրապնդման համար վճռական դեր պետք է խաղար հանրագին, որը նշանակված էր 1969թ. ապրիլի 27-ին: Հանրաքվեի հարցերը՝ Սենատի և տեղական ինքնավարության լիազորությունների կրծատման վերաբերյալ, սկզբունքային նշանակություն չունեին: Հանրաքվեն, փաստորեն, որոշում էր դը Գոլի քաղաքական ճակատագիրը: Ընտրողների 52%-ի բացասական պատասխանը եական պատճառ չստեղծեց նախագահի պաշտոնաթողության համար, բայց դը Գոլը գերադասեց հնքնակամ հեռանալ իր պաշտոնից: 1969թ. ապրիլի 28-ին նա հայտարարեց իր այդ որոշման մասին: Մեկ տարի անց դը Գոլը մահացավ:

5. Ժորժ Պոմայիդու: Գոլիզմը ոք Գոլից հետո



«ԱԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆ»

Դը Գոլի հեռացումը գոլական - շարժման մեջ առաջացրեց խորը տարածայնություններ:

Կուսակցության ավագ սերունդը, դը Գոլի Դիմադրության շարժման հավատարիմ զինակիցները /այդպես կոչված «բարոնները»/ բաժանվեցին երեք խմբավորումների: «Դը Գոլի ժառանգության» համար պայքարում էին «դոկտրինյորների» առաջնորդներ Միշել Դեբուն և Ժակ Շարան-Դելմասը, - որոնք հանդես էին գալիս որպես դրդոյսան - քաղաքական կուրսի պահպանման կողմնակիցներ: Զախ գոլականները Ունեն

Կապիտանի և Լուի Վալոնի գլխավորությամբ կուսակցության մեջ իրենց առանձնակի էին պահում: «Բարոնական» խմբավորումների միջև տեղի ունեցող պայքարից օգտվեց Ժորժ Պոմայիդուն: Չնայած դը Գոլի հետ երկար տարիների սերտ հարաբերություններին՝ նա չէր պատկանում ավագ սերնդին: 1969թ. հանրաքվեի նախօրյակին Պոմայիդուն հայտարարեց նախագահի կողմից վարած քաղաքականության մասին և որ ինքը պատրաստ է գլխավորել կուսակցությունը: Այդ «ապստանբությունը» շատ գոլականների մոտ դժգոհություն առաջացրեց, բայց Պոմայիդուի թեկնածությունը գալիք ընտրություններին շատ արդյունավետ դարձավ ՅՈՒԴՍՈ -ի համար: Պոմայիդուն առաջ քաշեց «հաջորդականության և երկխոսության» ծրագիրը, նկատի ունենալով 5-րդ Յանրաբետության սահմանադրական համակարգի պահպանման անհրաժեշտությունը և տնտեսական ու սոցիալական քաղաքականության փոփոխումը: Զախ կենտրոնամետ կուլիցիան պառակտված լինելով՝ այդպես էլ չկարողացավ միասնական թեկնածու առաջարկել 1969թ-ին կայանալիք նախագահական ընտրությունների համար: Արդյունքում ընտրություններին մասնակցեցին ձախ կուսակցություններից բոլոր երեք թեկնածուները՝ սոցիալիստ Դեֆեռը, կոմունիստ Դյուկլոն և ձախ ռադիկալների առաջնորդ /ՕՍՊ/ Միշել Ռոկարը: Իր թեկնածությունը դրեց նաև Սենատի նախագահ կենտրոնամետ Ալեն Պոերը, որն առաջարկում էր մի անորոշ ծրագիր «բոլոր ֆրանսիացիներ՝ միացեք» լոգունգի տակ: Առաջին փուլում Պոմայիդուն ստացավ ձայների 44%, Պոերը՝ 23%, Դյուկլոն՝ 22%, Դեֆեռը՝ 5%, Ռոկարը՝ 3, 6%: Երկրորդ փուլում համոզիչ հաղթանակ տարավ գոլական-

ների առաջնորդ՝ Պոմպիդուն՝ ստանալով ձայների 57, 6%, Պոերը՝ 42, 4%: Դառնալով նախագահ Պոմպիդուն ստիպված էր ազդեցիկ գոլական խմբավորումների հետ պահպանել ռազմավարական դաշինք: Վարչապետի պաշտոնը ստացավ Շաբան-Ղելմասը: Պաշտպանության նախարարի պաշտոնը ստանձնեց Ղերեն: Կառավարության կազմի մեջ մտան նաև Ժիկար դ' Էսթենի կողմից ղեկավարվող անկախ հանրապետականների ներկայացուցիչները: Կառավարական կուրսի ձևավորման մեջ սկզբնական շրջանում վճռական դեր էր խաղում Շաբան -Ղելմասը: Զախ գոլականների աջակցությամբ նա առաջ քաշեց «նոր հասարակություն» ծրագիրը, որի հիմքն էր սոցիալական աշխարհի գաղափարը: Շարունակվեց դեռևս 1968թ.-ին սկսած բարձրագույն կրթության բարեփոխումնը, որով անրապնդվում էր համալսարանական ինքնավարությունը և ուսանողական ինքնակառավարումը: Ակտիվացավ կառավարության քաղաքականությունը ընտանիքի աջակցության հարցում, ընդլայնվեցին ապահովագրության կարգերը:

1970թ.-ին ընդունվեց աշխատավարձի ամեն տարվա ինդեքսացման մասին օրենքը: Պոմպիդուն, փաստորեն, դեմ էր վարչապետի կողմից անցկացվող սոցիալ-ռեֆորմիստական քաղաքականությանը: Որպես այլընտրանքային ճանապարհ՝ նա առաջ քաշեց պրագմատիկ տնտեսական քաղաքականության գաղափարը, որը պետք է ուղղված լիներ արագ և կայուն արդյունաբերական զարգացման ապահովմանը, ինչը իր հերթին կլուծեր բռլոր սոցիալական խնդիրները: Նախագահի աջակցությամբ ֆինանսների նախարար Վ. Ժիկար դ' Էսթենը 1969թ. վերջուն սկսեց ռադիկալ ֆինանսական բարեփոխում: Տեղի ունեցավ ԱՄՆ-ի դոլարի նկատմամբ ֆրանկի նոր դեվալվացիա 12, 5%-ով, ոսկու նկատմամբ՝ 11% -ով: Դա առավելություն էր ապահովում արտաքին առևտորում: Այս ամենի հետ մեկտեղ կառավարությունը մի շաբաթ միջոցառումներով սահմանափակեց գների բարձրացումը պարենամթերային ապրանքների վրա, ինչը թույլ տվեց խուսափել սղաճի ճողվյունից: Բյուջեի հավասարակշռության վերականգնումը և առևտորային բալանսի դրական հաշվեմնացորդի ամրապնդումը թույլ տվեցին անցնել պրագմատիկ տնտեսական քաղաքականության ծրագրի իրականացմանը: 6-րդ տնտեսական ծրագրի շրջանակներում /1971-1975թ./ արտադրության աճի տեսակերպ պետք է բարձր լինեին: Ֆինանսավարկային քաղաքականության պահպանման դեպքում կառավարությունը նախատեսում էր լրացնել ֆինանսավորել տնտեսական ինֆրակառուցվածքը: Այդ միջոցառումները զգալի հաջողություն ունեցան:

Սակայն, միևնույն ժամանակ, ինչպես և Արևմուտքի մյուս պետությունները, Ֆրանսիան մոտենում եր արտադրության ինդուստրիալ համակարգի կառուցվածքային ճգնաժամին:

Իր քաղաքական դրության ամրապնդման հետ մեկտեղ Պոմպիդուն սկսում է գոլական շարժման ռադիկալ մաքրումը: 1971թ.-ից կուսակցությունը սկսեց անվանվել «Դեմոկրատական դաշինք՝ հանրապետության պաշտպանության համար» /ՅՈՒՂՈ/: Պոմպիդուի աջակցությամբ կուսակցությունում և կառավարությունում դեկավար պաշտոնները սկսում են զբաղեցնել երիտասարդ սերնդի ներկայացուցիչները /«Երիտասարդ զայեր»/: Դրանց առաջնորդն էր Ժակ Շիրակը, ում մեջ նախագահը տեսնում եր իրեն փոխարինողին: 1972թ.-ին Շարբան-Դելմասը հեռացվեց վարչապետի պաշտոնից: Կառավարության կազմից դուրս եկավ նաև Դեբրեն: Կարինետը գլխավորեց Պիեռ Մեսմերը, որը Պոմպիդուի ծրագրի կողմնակիցն էր: Գալիք 1972թ.-ի պառլամենտական ընտրությունների նախօրյակին շարունակվեց նաև մյուս քաղաքական կուսակցությունների վերակառուցումը: Ամենակարևոր փոփոխություններն էին ծախ ճամբարում: 1969թ.-ին տեղի ունեցավ ՖԴՍԼ-ի պառակտումը: Նրանց շարքերից դուրս եկան ռադիկալները, որոնք նախագահական ընտրությունների ժամանակ աջակցեցին Պոերին: Շուտով ռադիկալների և ռադիկալսոցիալիստների կուսակցությունները իրենց հերթին բաժանվեցին երկու հոսանքների: Աջ ռադիկալները, որոնք, ոգեշնչված կուսակցության նոր գաղափարախոս Մերվան-Շտրեյբերի մտքերով, հանրապետական գաղափարախոսության ավանդույթների վերածնունդի ուղղություն վերցրեցին: 1971թ.-ին նրանք, միավորվելով Դեմոկրատական կենտրոնի հետ, ստեղծեցին «բանեփոխողների շարժում»: Ռադիկալների ծախ թեր նույն թվականին ստեղծեց սեփական շարժում, որը ընտրություններին սոցիալիստների հետ միասին կուալիցիայի մեջ մտավ: 1969թ.-ին տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում կրած պարտությունից հետո սոցիալիստական կուսակցության շարքերում նորից ուժեղացավ ծախ թեր ազդեցությունը: Նրա առաջնորդը դարձավ Ալեն Սավարին: Ակսվեց կուսակցության ռադիկալ կազմակերպչական և գաղափարախոսական վերակառուցում: Այն անվանվեց Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության շարքերում նորից ուժեղացավ ծախ թեր ազդեցությունը: Նրա առաջնորդը դարձավ Ալեն Սավարին: Ակսվեց կուսակցության ռադիկալ կազմակերպչական և գաղափարախոսական վերակառուցում: Այն անվանվեց Ֆրանսիական սոցիալիստական կուսակցություն /ՖՍԿ/: Սոցիալիստները վերջնականացեն հրաժարվեցին կենտրոնամետ կուսակցությունների հետ կուալիցիա ստեղծելու գաղափարից և սկսեցին ձգտել համախմբվել իրենց կողմնակիցների հետ: 1971թ.-ին ՖՍԿ-ի մեջ մտան այն խմբավորումները, որոնք նախկինում մտնում էին ՖԴՍԼ-ի կազմի մեջ, ինչպես նաև ՕՍՊ-ի մեծամաս-

նությունը: Միավորված ՖՍԿ-ի ղեկավարն է դառնում Ֆրանսուա Սիտերանը: Չեղագնահատելով կոնունիստների հետ հնարավոր մերձեցունը՝ Միտերանը փորձեց ՖԿԿ-ի հետ համագործակցությանն ավելի ամուր բնույթ հաղորդել: Կոնունիստական կուսակցության մեջ այդպիսի մարտավարության վառ կողմնակիցն էր համարվում երիտասարդ սերնդի ներկայացուցիչ ժորժ Մարշեն: 1972թ-ին երկու ձախ առաջատար կուսակցություններին հաջողվում է համաձայնության գալ: Ընդունվեց ձախ ուժերի համատեղ ծրագիր, որով նախատեսվում էր սոցիալական ծրագրերի ընդլայնում, ազգայնացման գործընթացի վերսկսում, ռազմական ծախսերի կրծատում, արհմիությունների իրավունքների ամրապնդում:

1973թ-ի մարտին տեղի ունեցած պառլամենտական ընտրությունները դրսնորեցին առաջատար քաղաքական ուժերի բներացում: Ձախ կուսակցությունները դեռ հետ էին մնում կառավարական կոալիցիայից, բայց պահպանում էին իրենց «համառ» էլեկտորատը: Կոնունիստները ստացան 73 տեղ, սոցիալիստները՝ 89, ձախ ռադիկալները՝ 11: Եվս 6 պատգամավորներ ներկայացնում էին այլ ձախ խմբավորումներ: ՑՈՂՈ-ը ստացավ 184 տեղ: Նրա կողմնակիցներն էին «անկախ հանրապետականները»՝ ժիշկար դ՝ Էսթենի գլխավորությամբ /54տեղ/ և «Ղենովրատիայի և առաջադիմության»՝ կենտրոնը Ժ.Դյուամելի գլխավորությամբ /23 տեղ/, որն անջատվել էր «Բարեփոխողների շարժումից»: Վերջիններս ստացան միայն 31 տեղ: Ընդհանուր առնամբ քվեարկողները աջակցեցին Պոմպիդուի քաղաքական կուրսին: Պոմպիդուն Ֆրանսիայի ներքին քաղաքական կուրսի մեջ զգալի ուղղումներ նշոցրեց: Նրա համար առաջնային դարձավ երկրի մասնակցությունը արևմտաեվրոպական ինտեգրացիոն գործընթացին: Սակայն, ի տարբերություն դր Գոլի, Պոմպիդուն չէր ձգուում օգտագործել այդ գործընթացը Ֆրանսիայի միջազգային դիրքերի ուժեղացման համար: 1969թ-ին Պոմպիդուն հանդես եկավ «Եզրափակում, խորացում, ընդլայնում» ինտեգրացիոն գործընթացի նախաձեռնությամբ: Եվ ահա, որպես այդ մտքերի զարգացում, 1973թ-ին Եվրոպական տնտեսական համագործակցության /ԵՏՀ/ մեջ մտնող պետությունների ղեկավարները ընդունեցին «Եվրոպայի ուրվագիծը» ծրագրային փաստաթուղթը, որտեղ նշված էին քաղաքական և տնտեսական ինտեգրավորման հետագա փուլերը: 1980թ-ին ծրագրավորվել էր ստեղծել Եվրոպական Միություն՝ համադաշնակցության սկզբունքի հիման վրա: Պոմպիդուն հրաժարվեց Մեծ Բրիտանիային ԵՏՀ-ի մեջ ընդգրկելու դըգույան մեկուսացման քաղաքականությունից: Արդեն

1969թ-ին Պոմայիդուն հայտարարեց ԱՄՆ-ի հետ «նոր դարաշրջան» սկսելու պատրաստականության մասին: 1974թ-ին ընդունվեց նոր Ատլանտյան խարսիան, որով ուժեղանում էր կոլեգիալ դեկավարությունը ՆԱՏՕ-ում: Դա կարելի է համարել որպես ֆրանսիական դիվանագիտության հաղթանակ: Պոմայիդուն, ընդունելով ԱՄՆ-ի առաջնությունը Արևմտյան աշխարհում, միևնույն ժամանակ պայքարում էր, որպիսզի ԱՄՆ հրաժարվեր դիկտատի քաղաքականությունից: Եվ նոր Ատլանտյան խարսիայի ընդունումից հետո Ֆրանսիան Արևմտյան բլոկի հետ համագործակցության հնարավորություն ստացավ: Սակայն ԱՄՆ-ի հետ հարաբերությունների նորմալացումը չէր նշանակում հրաժարում երկու գերպետությունների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև հավասարակշռությունը պահպանելու դրգոյան քաղաքականությունից: 1970-1971թթ-ի ընթացքում Պոմայիդուն և Բրեժնևը պաշտոնական այցեր կատարեցին համապատասխանաբար Սովոկվա և Փարիզ:


Ֆրանսիան ինքնուրույն և ակտիվ քաղաքականություն էր վարում նաև «երրորդ աշխարհի» երկրների հետ: Պոմայիդուն անձամբ այցելեց Չինաստան: Բացի այդ Ֆրանսիան զգալի բարելավեց իր հարաբերությունները Եգիպտոսի և Իրաքի հետ: Նոր ֆրանսիական ռազմական դոկտրինայի շրջանակներում Չյուսիսային Աֆրիկան պաշտոնապես հայտարարվեց «կյանքի հետաքրքրությունների ոլորտ»: Գեներալ Մ.Ֆուրկեն, որը մշակել եր նոր ռազմական դոկտրինան, հրաժարվեց առաջվա «բոլոր ազիմուտներով» պաշտպանության կոնցեպցիայից: Յիմա արդեն խոսվում էր «պաշտպանության քաղաքականության երեք ուղղությունների» մասին՝ Ֆրանսիա, Արևմտյան Եվրոպա և Սիցիլիական ծով: Այդ շրջանների անվտանգության պահպանման համար թույլ էր տրվում նաև ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը: «Ամեն ինչ կամ ոչինչ» նշանաբանի փոխարեն ընդունվեց «աստիճանած հակահարվածի» գաղափարը /այդ երկու պաշտպանական ռազմավարությունները կապված էին միջուկային գենքի օգտագործման հետ/:

1974թ-ի ապրիլի 2-ին Պոմայիդուն մահացավ քաղցկեղից: Պոմայիդուն կարողացավ կայունացնել երկրի դրությունը «կարմիր մայիսից» հետո: Սակայն նրան այդպես էլ չհաջողվեց համախմբել իր կողմնակիցներին, ստեղծել ամուր քաղաքական բլոկ՝ գործողության երկարատև ծրագրով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՖՐԱՆՍԻԱՆ 1974-2000ԹԹ.-Ի ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Ֆրանսիան 1974-1981թթ.-ին: Վալերի Ժիսկար դ'Էստեն



Աշել ու չքեզ» յ

Պոմպիդուի մահը դարձյալ սրեց ներկուսակցական պայքարը ՅՈՒՂՈ-ում: «Բարոնների» խմբավորումները նախագահի պաշտոնի համար առաջարկեցին Ժարան-Դելմասի թեկնածությունը: «Երիտասարդ գայլերի» առաջնորդները դեռևս պատրաստ էին առաջարկել միասնական թեկնածու և հանաձայնվել փոխգիշման:

Հակամարտության

Վերջնակետը դարձավ ժակ Շիրակի, Պիեռ Ժյուեի և Մարի Գառոյի գլխավորությամբ «43-ի խմբի» հայտարարությունը գալիք ընտրություններին հանրապետականների թեկնածու Ժիսկար Վալերի դ'Էստենի աջակցության մասին: Ժարան-Դելմասի դեմ սկսվեց աղմկալի արշավ հարկերի չվճարման մեղադրանքներով, երկրորդ անունության բարոյական կողմերի քննարկումներով և այլն: ՅՈՒՂՈ -ի քաղաքական ճեղքվածքի ֆոնի վրա ձախ ճամբարում գերակյալուն էին կենտրոնամետ տենդենցներ: 1969թ. նախագահական արշավի փորձը հաշվի առնվեց և նոր ընտրությունների նախաշեմին ձախ կուսակցությունների բլոկի միասնական թեկնածուն դարձավ Ֆրանսուա Միտերանը: Նրա նախընտրական արշավը կառուցվում էր «Զախարեյան ուժերի միասնական ծրագրի» հիման վրա: Ռադիկալ կազմակերպչական և քաղաքական վերակառուցման ժամանակաշրջանից հետո աշխուժացավ նաև կենտրոնամետ շարժումը: Կենտրոնամետների նոր սերնդի առաջնորդն էր Վ. Ժիսկար դ'Էստենը: Դեռևս 1966թ. նա իր պատգամավորական խումբը վերակազմավորեց և անվանեց «Անկախ հանրապետականների ազգային Դաշնություն» /ԱՀԱԴ/: Ժիսկարդիզմի քաղաքական կոնցեպցիան ծևավորվեց երկու գործոնների ազդեցության տակ: Մի կողմից մեծ նշանակություն ուներ երկարամյա մարտավարական համագործակցությունը դը Գոլի հետ: Առաջ քաշելով «մտածված գոլիզմի» կարգախոսը՝ Ժիսկար դ'Էստենը հանդես էր գալիս ազգային տնտեսության

արդիականացման, համաշխարհային շուկայում երկրի դիրքերի ամրապնդման գաղափարներով առաջնորդվող բոլոր քաղաքական ուժերի պրագմատիկ միավորնան համար: Սակայն միաժամանակ անկախ հանրապետականները ձգտում էին պահպանել «աջ ազատական» դասական ավանդույթները: Ժիշկարոյիզմը ձևավորվում էր որպես ազատական գաղափարախոսություն, որի համակցումն էր տեխնոլոգատական պրագմատիզմի և ռացիոնալիզմի, հանդարտության, խնայողության օրլեանիստական իդեալների՝ կայուն սոցիալական կարգին հավակնելուն: 1974թ-ի ընտրությունների նախաշեմին ժիշկար դ՝ Եսթենը առաջարեց «առաջատար լիբերալ հասարակության» դրկտրինայի վրա հիմնված ծրագիր: Նրա հիմքը կազմեցին մասնավոր սեփականության և ազատ շուկայական հարաբերությունների գաղափարների գերակայությունը, դեմոկրատիան և քաղաքական պլյուրալիզմը, լիբերալ բարոյական արժեքները: Ծրագիրը պատկերացում չէր տալիս ֆրանսիական հասարակության արդիական խնդիրների լուծման ուղիների վերաբերյալ, սակայն հիանալի հիմք էր տարաբնույթ այն խնճավորումների կոնսոլիդացման համար, որոնք հանդես էին գալիս գոլիզմի և ձախ էտատիզմի* դեմ*:

1974թ-ին ժիշկար դ՝ Եսթենի ակտիվ նախընտրական արշավը, որը անցնում էր «փոփոխություններ իրավահաջորդության պարագայում» կարգախոսի ներքո, առաջին անգամ միավորեց բոլոր կենտրոնամետ առաջատար խնճավորումները: ԱՐԱԴ-ի առաջնորդին խրախուսեցին ինչպես «Դեմոկրատիա և առաջադիմություն» կենտրոնը Ժ.Կուամելի գլխավորությամբ, այնպես էլ Սերվան Շրեյբերի և Ժ.Լեկանուելի «Բարեփոխողների շարժումը»: Մեծ նշանակություն ունեցավ շիրակյան խնճավորման դիրքորոշումը, որը պառակտեց ՅՈՒՊ-ի էլեկտորատը: Տվյալ իրադրությունում ժիշկար դ՝ Եսթենը առաջին փուլում հաղթեց Շաբան-Ղելմասին՝ հավաքելով ձայների 32, 9%, իսկ Շաբան-Ղելմասը ստացավ 12, 6%: Առաջին փուլի հաղթող դարձավ Միտերանը, ում կողմ էին քվեարկել ընտրողների 49, 3%: Երկրորդ փուլում լարված պայքարը ավարտվեց ժիշկար դ՝ Եսթենի հաղթանակով: Նա ստացավ ձայների 50, 7%, Շաբան-Ղելմասը՝ 49, 3%:

1974թ-ի ընտրությունները անցնում էին այն շրջանում, երբ ֆրանսիական տնտեսությունը արդեն մտնում էր խոր ճգնաժամի փուլ: «Նավթային շոկի» հետևանքները, երբ նավթի գինը կտրուկ

* Էտատիզմ/ֆրանս:՝ ետատ-պետություն/-քաղաքական մտքի ուղղություններից մեկն է, որը դիտում է պետությունը որպես հասարակական գարզացման բարձրագույն արդյունքը և նպատակը:

բարձրացավ, շահույթի նորմերի իջեցման երկարատև միտումի հետ միասին առաջացրեցին գործարար ակտիվության անկում: Ինը ամիսների ընթացքում արտադրության անկումը կազմեց 15%, այսինքն՝ ավելի շատ, քան 1929թ-ին Մեծ դեպրեսիայի ժամանակ: Առաջին անգամ այն համակցվում եր գների աճի հետ / ~տարեկան 10% /: Գործազրությունների թիվը 1974-1976թ-ին աճեց 2, 5 անգամ: ճգնաժամային երևույթները տեղի էին ունենում նաև ֆինանսական ոլորտում: Կառավարությունը ստիպված եղավ լրացուցիչ ֆինանսավորել նավթային ընկերությունները, ինչպես նաև մեծ միջոցներ հատկացնել նավթի գնման համար, ինչը բերեց արտաքին առևտրային պակասորդի աճին և ֆրանկի կուրսի իջեցմանը: Այստեղ իրենց զգալ էին տալիս նաև «Էժան վարկերի» երկարաժամկետ քաղաքականության և պետական հովանավորչության արդյունքները:

Նախկին 20 տարիների ընթացքում արտադրվող ապրանքների արժեքների հիմնա անգամ և ներդրումների տասներկու անգամ աճի պարագայում ընկերությունների պարտքերը մեծացան 15 անգամ, իսկ մասնավոր անձանց՝ 55 անգամ: Կառավարությունը, որը ընտրություններից հետո գլխավորեց ժակ Շիրակը, բարդ կացության մեջ էր ընկել, որովհետև մի կողմից՝ ելնելով տնտեսության վիճակից՝ նա անոր է անցկացնել կոչտ հակածգնաժամային քաղաքականություն, իսկ մյուս կողմից՝ հաշվի առնել, որ ընտրողների կեսը պաշտպանեց ժիսկարդիզմի լիբերալ գաղափարները, իսկ մյուս կեսը՝ ձախ կուսակցությունների սոցիալական ծրագիրը: Նախագահի լիակատար աջակցության պարագայում կառավարությունը առաջ քաշեց տնտեսական արագացված աճի խթանման ծրագիր՝ որպես կառուցվածքային ճգնաժամից դուրս գալու եղանակ: Սա արմատապես տարբերվում էր «դանդաղ աճի» մարտավարությունից, որն անց էին կացնում եվրոպական երկրների մեծ մասը, և որը փորձագետները խորհուրդ էին տալիս իրականացնել ստագֆլացիայի պայմաններում: Տնտեսական աճի ապահովման նպատակով կառավարությունը հարկային արտոնություններ տրամադրեց ձեռնարկատերերին, հրաժարվեց աշխատանքային հարաբերությունների ոլորտում կոչտ «դիրիժիզմից»: Ակսվեց պետական հատվածի «մասնակի ապագայնացումը», տարածում ստացավ խառը տեսակի սեփականությունով պետական ձեռնարկությունների մասնաճյուղերի հիմնումը: Պետական ձեռնարկությունները շուկայում գործելու ազատություն ստացան: Պետության հետ հարաբերությունների հիմքում ընկած էր պայմանագրերի համակարգը, այլ ոչ ընթացիկ պլանավորման համակարգը:

Տնտեսության լիբերալիզմացման միջոցառումների հետ մեկտեղ կառավարությունը ստիպված էր պահպանել սոցիալական ծրագրերի լայն շրջանակը: Գործազրկության դեմ և տարածաշրջանային զարգացման համար ուղղված ծրագրերի կրծատումները համակցվում էր կորության, առողջապահության, մշակույթի, էկոլոգիայի, և «սոցիալական ու բարոյական առաջադիմության» հիմք հանդիսացող այլ ոլորտների ծախսերի աճի հետ: Այս քաղաքականության արդյունքում երկրի մինչև 90% բնակչությունը ուղղակի կամ անուղղակի ընդգրկվեց սոցապահովման համակարգում: Այս իրավիճակում անխուսափելի բյուջետային պակասորդի խնդիրը տնտեսության ոչ բարձր աճի տեմպի հետ միասին ստիպեցին վերանայել հակածգնաժամային ռազմավարությունը և անցնել կոչտ դրանային քաղաքականությանը:

7-րդ տնտեսական ծրագրը, որը նշակվել էր 1976-1980թթ-ի համար, հենվում էր «արդյունաբերական վերառուղվածության» գաղափարի վրա, որը առնչվում էր համաշխարհային շուկայուն մրցունակ միայն խոշոր բիզնեսի աջակցմանն ուղղված պետական քաղաքականության հետ: Խոսքը առաջին հերթին ավտոմոբիլային, քիմիական, էլեկտրատեխնիկական ճյուղերի մասին էր: Մեծ նշանակություն էր տրվում միջազգային նախագծերին/ «Այրուս» և «Կոմկորո» ավիաշինարարության մեջ, «Արիան» տիեզարական տեխնոլոգիաների բնագավառում/: Նշանակալի զարգացակ ռազմաարդյունաբերության ճյուղը, որի 40% արտադրանքը արտահանվում էր: 1976թ-ին Շիրակին վարչապետի պաշտոնում փոխարիմնեց Ռայմոնդ Բարը, որը հետագա տարիների ընթացքում մշակեց կայունացման երեք ծրագիր, որոնք իրենցից ներկայացնում էին պետքանիշելի համար կոչտ տնտեսավարման ռեժիմ: Բարը գտնում էր, որ միայն շուկայի մոնուարային առողջացումը կարող է հիմք հանդիսանալ ձեռնարկատիրական աշխուժության վերածննդի համար: Այս տեսանկյունից կառավարությունը աշխատավարձերի աճի դադարեցման, վարկային և հարկային քաղաքականության կոշտացման ուղղություն վերցրեց: Ժիսկար դ' Էսթենի նախագահության շրջանում տնտեսական քաղաքականության արդյունքները երկակի էին: Չնայած 70-ական թթ-ի ճգնաժամին՝ Ֆրանսիան պահպանեց կյանքի բարձր մակարդակի և կայունության տեսանկյունից իր տեղը արևմուտքի ամենազարգացած երկրների հնօյակում: Բարձրացավ ներդրումների արդյունավետությունը, հիմնական կապիտալում ներդրումների ակտիվ մասը աճեց մինչև 48, 3%: Չամախառն ներքին արդյունքի տարեկան միջին 1, 9% աճի պարագայում արդյունաբերությունում աշխատանքի արտադրողականությունը աճեց 4%-ով:

Արտաքին առևտրաշրջանառությունը աճեց գրեթե հինգ անգամ, արտահանվում էր համախառն ազգային արտադրանքի մինչև 18%-ը, մինչ դեռ 1970թ-ին այն կազմում էր ընդհամենը 12, 7%: Սակայն նույնիսկ այս աճը չվերացրեց վճարային հաշվեկշռի պակասորդը, որը առաջացել էր «նավթային շոկից» հետո: Պասիվ առևտրային սալյոն ֆրանսիան պահպանում էր նաև «Ընդհանուր շոկայում»: Ծանր էր մնում երկրի ֆինանսական վիճակը: Կառավարությանը չէր հաջողվում լուծել սղածի խնդիրը, ինչն հանգեցրեց բնակչության եկամուտների աճի նվազեցմանը: Առավել տագնապայի էր ծեռարկատիրական աշխուժության ցածր մակարդակի պահպանումը: Եթե 1973- 1980-կան թթ-ին պետական ներդրումների ծավալները ավելացել էին 96, 4%-ով, ապա մասնավորը նվազել էր 4, 3%-ով: Առում էր մասնավոր կապիտալի արտահոսքը: 1980թ-ին տպագրված 8-րդ տնտեսական ծրագիրը սկսվում էր մրայլ արտահայտությամբ: «Առաջին անգամ մի ամբողջ սերնդի կյանքի օրոր ֆրանսիացիների մեծանասնությունը գտնում է, որ գալիք տարիները կլինեն անցյալից ավելի ծանր»:

Ավելի արդյունավետ էր ժիսկար դ' Էսթենի կողմից անցկացրած արտաքին քաղաքականությունը: Դրա հիմնական ուղղությունները երկուսն էին՝ 1/երկրի տնտեսական զարգացման ակտիվացման նպատակով միջազգային հարաբերությունների ներուժի օգտագործումը և 2/միջազտական համակարգի կարգավորման անրապնդումը գոլական դիվանագիտությանը բնորոշ կոչտ ոժի և «Ֆրանսիայի վեհության» գաղափարից հրաժարվելու պարագայում: Նշված երկու ուղղությունների վերաբերյալ արմատական դեր խաղաց արևատաեվորպական ինտեգրացիոն գործընթացի խորացումը: Շատ դեպքերում ֆրանսիայի նախագահի շնորհիկ 70-կան թթ-ի վերջում Եվրոխորհրդի շրջանակներում հաջողվեց իրագործել լայնածավալ ֆինանսական բարեփոխում Եվրոպական հաշվարկային դրամական միավորի ներդրմանը /ԵՔՅՈՒ /, ստեղծել ազգային արժույթների կուրսերի կոորդինացման մեխանիզմ, մտցնել Եվրոպակալմենտում ուղղակի ընտրությունների ընթացակարգ, անրապնդել Եվրոխորհրդի կարգավիճակը պետությունների և կառավարությունների դեկավարների մակարդակով:

Մեծ դեր հատկացնելով միասնական Եվրոպայի զարգացման խնդիրներին՝ ժիսկար դ' Էսթենը կողմնակից չէր ռազմաքաղաքական տարածաշրջանային ինտեգրացման խորացմանը: Նա հանես եկավ ֆրանսիայի՝ ՆԱՏՕ-ի հետ կապերի վերականգնան օգտին ազգային գինված ուժերի անկախության պահպանման պարագայում: Գլխավոր շտաբի պետ Գ.Մերին 1976թ-ին մշակեց

Ֆրանսիայի ռազմական դրվագինայի նոր տարբերակ, որը հիմնվում էր «ընդայնված անձեռմխելի տարածքի» գաղափարի վրա: Այն ընդրկում էր այն ամբողջ տարածքը, որը հյուսիս-անտլանտյան դաշինքի հսկողության տակ էր: Այսպիսով, Ֆրանսիան հայտարարում էր ՆԱՏՕ-ի հետ համատեղ գործողությունների իր պատրաստականության մասին, սակայն չեր վերցնում կոնկրետ պարտավորություններ: Ի տարբերություն նախ-կին ժամանակաշրջանի՝ մեծ ուշադրություն սկսվեց հատկացվել սովորական սպառազինության զարգացմանը, ֆրանսիական «արագ արձագանքման ուժեղի» ստեղծմանը: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ընդլայնումը թույլ տվեց հանել ֆրանս-ամերիկյան հարաբերությունների նախկին լարվածությունը: Ամրապնդվեցին Ֆրանսիայի հարաբերությունները Արևմութքի այլ առաջատար երկրների հետ: Ժիսկար դ' Էսթենի նախաձեռնությամբ սկսվեցին «յորենյակի» դեկավարների ամենամյա հանդիպումները: Դրանցից առաջինը տեղի ունեցավ Ռամբուեում 1975թ.-ին: Խորհրդային Միության դեկավարության հետ քաղաքական կապերը սառն էին, սակայն տնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև այդ տարիներին նկատելիորեն աճեց: Ժիսկար դ' Էսթենը քազմաթիվ անգամ հանդիպումներ ունեցավ խորհրդային դեկավարների հետ՝ այցելելով ԽՍՀՄ՝ 1975 և 1979թ-ին: Խորհրդային Միության դեկավար Լեռնիդ Բրեժնևի պաշտոնական այցը Ֆրանսիա տեղի ունեցավ 1977թ-ին: 1975թ-ին Ժիսկար դ' Էսթենը Ֆրանսիայի անունից ստորագրեց Եվրոպայում համագործակցության և անվտանգության թելսինկյան խորհրդակցության Եզրափակիչ ակտը: Ժիսկար դ' Էսթենի նախագահության օրոք նշանակալի աշխուժացավ Ֆրանսիայի քաղաքականությունը «երրորդ աշխարհի» երկրներում: Դեռևս որ Գոլի կողմից հիմք դրած ավանդությունների համաձայն՝ Ժիսկար դ' Էսթենը հաշվարկ էր անում երկու գերապետությունների /ԱՄՆ և ԽՍՀՄ/ հետ քարոյական և որոշ դեպքերում քաղաքական հակամարտության վրա: Չնայած ԱՄՆ-ի հետ հաստատված լավ հարաբերություններին՝ Փարիզը դատապարտեց Քենֆ-Դեվիլյան խրայելա-եգիպտական համաձայնագիրը և հանդես եկավ որպես Մերձավոր Արևելքի արարական պետությունների հակամարտաելական քաղաքականության կուրսի պաշտպան: /Քենֆ-Դեվիլյան սեպարատ համաձայնագիրը Խրաելի և Եգիպտոսի միջև ստորագրվեց 1978թ-ին սեպտեմբերին, որով փաստորեն Եգիպտոսը, որի նախագահը այդ ժամանակ Անվար Սադաթն էր, դուրս էր գալիս արաբական երկրների կողմից ստեղծած հակամարտաելական բլոկից: Այդ համաձայնագիրը ստորագրվեց ԱՄՆ-ի նախագահ Ջիմի Քարթերի աջակցությամբ/:

Ժիսկար դ' Էսթենին հաջողվեց ամրապնդել պոզիտիվ հարաբերությունները Չինական Հանրապետության, Իրանի շահի հետ, ստորագրել տնտեսական համաձայնագրեր Ինդոնեզիայի, Մալազիայի, Ֆիլիպինների և Սինգապուրի հետ: Կարևոր դեր էր խաղում կապերը աֆրիկյան երկրների հետ: 70-ական թթ-ին Ֆրանսիան երկրորդ տեղն էր զբաղացնում աշխարհում սպառազինության արտահանման բնագավառում, և արտահանված գենքի հիմնական մասը գնում էր հենց Աֆրիկա: Յուսիսային և Յասարակածային Աֆրիկայում Ֆրանսիան ակտիվորեն իրականացնում էր «ֆրանկոֆոնիայի» քաղաքականությունը՝ օգնություն ցուցաբերելով հումանիտար բնագավառում, աջակցելով ֆրանսիական մշակույթի և կրթության համակարգի զարգացմանը:

2. 1981թ-ի նախագահական ընտրությունները: «Զախ Էքսպերիմենտ»

1981թ-ին Ֆրանսիայի նախագահական ընտրությունները հիմնական Արևմտայի առաջատար երկրների զաղափարախոսական տարածքի ծավալուն վերակառուցման հետ: Կառուցվածքային տնտեսական ճգնաժամը զանգվածային գիտակցության մեջ առաջ բերեց «ներպահպանողական հեղաշրջում» և պետական քաղաքականության հիմնական ուղղությունների փոփոխում: 70-ական թթ-ի երկրորդ կեսին անցկացվող ֆրանսիական կուսակցական համակարգի արմատական վերակառուցումը բերեց այլ արդյունքներ: Եթե 1976թ. ժակ Շիրակը հեռացավ վարչապետի պաշտոնից, կառավարող կուպիցիան փլուզվեց:

Չնայած որ «անկախ հանրապետականները» ունեին միայն 54 պատգամավորներ, Ժիսկար դ' Էսթենը չօգտագործեց պառլամենտ ցրելու իրավունքը: Նա 5-րդ Յանրապետության պառլամենտական քառապաշտի մեջ մտցրեց «նախագահական մեծամասնություն» հասկացությունը՝ նկատի ունենալով, որ կառավարությունը կարող է հենվել ոչ թե «պառլամենտական մեծամասնություն» ունեցող կուսակցության, այլ քաղաքական խմբավորումների, անկախ պատգամավորների և քաղաքական գործիչների վրա, որոնք աջակցում են անձանք նախագահին: 1976թ-ին Ժիսկար դ' Էսթենը հրապարակեց «ֆրանսիական դեմոկրատիա» գիրքը, որտեղ հանդես եկավ իր քաղաքական կոնցեպցիայի բացատրությամբ: Յանակարգիք լինելով որ Գոյխան գտնում էր, որ պետությունը պետք է ազատել միջկուսակցական երկապառակությունից և ապահովել «էֆեկտիվ դեմոկրատական

կարգ ու կանոն»: Դ՝ Եսթենը կողմ էր երկկուսակցական տարրերակին, երբ հասարակության մեջ գերիշխում են երկու քաղաքական ուժեր, որոնք ունեն ընդհանուր ռազմավարական նպատակներ, բայց դրանց իրականացման համար առաջարկում են տարրեր ճանապարհներ: Պառլամենտական ընտրությունների նախաշեմին ժիսկար դ՝ Եսթենը առաջարկեց «ծայրահեղական բլոկների քայլայման» նարտավարությունը: Ենթադրվում էր, որ գոլական-ների դուրսման և ավանդական հանրապետական արժեքների դրոշի ներքո բոլոր աջ կենտրոնամետ խմբավորումների համախմբման դեպքում կարող է ձևավորվել կայուն դեկավարող կուալիցիա, որը կդիմակայի ձախ կենտրոնամետների միավորմանը սոցիալիստների գլխավորությամբ: 1977թ-ին ԱՀԱԴ -ը վերակազմավորվեց և անվանվեց Յանրապետական կուսակցություն, իսկ մեկ տարի անց հանրապետականները հանդես եկան նոր ընտրական կազմակերպության ստեղծման նախաձեռնությամբ: Այն անվանվեց «Դաշինք ֆրանսիական դեմոկրատիայի համար» /ԴԺԴ/, որի կազմում ընդգրկվեցին «Դեմոկրատական կենտրոն», «Դեմոկրատիա և առաջադիմություն» և այլ հանրապետական խմբավորումներ: ԴԺԴ-ին այդպես էլ չհաջողվեց դառնալ իր ծրագրով, ակտիվիստական կորիզով և տարածաշրջանային կառուցվածքներով միասնական կուսակցություն: Սակայն նրա կազմում ընդգրկված կուսակցությունները համաձայնության եկան ընտրությունների ընթացքում երկարաժամկետ համագործակցության և Ազգային ժողովում միասնական ֆրակցիայի ստեղծման վերաբերյալ: Ինքը՝ նախագահը, խախտելով 5-րդ Յանրապետության ավանդույթները, բացահայտ մասնակցեց ԴԺԴ -ի նախընտրական արշավում: ԴԺԴ -ն սկսեց հանդես գալ ինչպես ձախերի «Կոլեկտիվիստական գաղափարների», այնպես էլ անհատապաշտության դեմ:

70-կան թթ-ի կեսին տեղի էր ունենում նաև գոլական շարժման վերակառուցումը: Ժակ Շիրակը ընտրվեց ՅՈՒՂՈ-ի նախագահ: Սակայն 1974թ. ընտրաշավի ժամանակ նրա թույլ տված սխալները և «բարոնների» հետ կոնֆլիկտները բանկ նստեցին կուսակցության համար: Տարվա վերջում նրա 245.000 անդամներից մնացին 30.000, և նրանցից միայն 5%-էր կարծում, որ ՅՈՒՂՈ -ը ազդեցիկ քաղաքական կուսակցություն է: Կուսակցությունից դուրս եկան ձախ գոլական խմբավորումները, «Ֆրանսիայի վեհության» դոկտրինայի կողմնակիցները, «Երիտասարդների Դաշինք հանուն առաջարկման» երիտասարդական կազմակերպությունը: Գնալով վատանում էին հարաբերությունները դաշնակիցների հետ ԱՀԱԴ -ից: Դուրս գալով կառավարությունից

1976թ.՝ Շիրակը սկսեց վերակառուցել կուսակցությունը: ՅՈՒՂՈ –ը փոխեց իր անվանումը և կոչվեց «Միավորում հանրապետության աջակցման համար»/ ՄՐԱ /: Նոր ղեկավարությունը շեշտը դրեց զանգվածային անդամակցության վերականգնման, ներքին կոչտ կարգուկանոնի սահմանման, կուսակցական ակտիվիստական կորիգի ձևավորման վրա: ՄՐԱ-ի կազմում ընդգրկվեցին «Նոր միջին խավի» ներկայացուցիչներ, ծեռնարկատերեր, պետքառայողներ: Ինքը՝ Շիրակը, որը երիտասարդ տարիներին ստացել էր «բուլղոգեր» կուսակցական անունը և հայտնի էր իր ոչ հանդրժողականությամբ հակառակորդի նկատմամբ, բերեց նոր գծեր գոլականության քաղաքական ոճի մեջ: ՄՐԱ-ի նորացված կուսակցական ծրագիրը ներկայացնում էր գոլականության նոր սերնդի՝ նեղողականության առանձնահատկությունները: Շիրակը չէր ընդունում դասական լիբերալիզմի քաղաքական սկզբունքները և ժիսկարյան «փափուկ դիրիժիզմը»՝ անվանելով այն «հարմարողականության դոկտրինա»: Նեղողականները առաջարկում էին կտրուկ կրօնատել պետության սոցիալական ֆունկցիաները և տնտեսության մեջ դրա ուղղակի միջամտությունը: Բայց պետության վրա պատասխանատվություն էր դրված կառուցվածքային վերափոխումների համար: Դրանց հիմնական ուղղություններն էին համարվում հարկային քաղաքականության հաշվին ներդրումային շուկայի աշխուժացումը, «տնտեսության ճիշտ ցանցի»/ խոչը և փոքր բիզնեսի արդյունավետ համակցում/ ստեղծումը, ռազմավարական ծրագրավորման համակցումը շուկայական հարաբերությունների ազատականացման հետ, համաշխարհային շուկաների գրավման համար «տնտեսական պատերազմը», «առողջ բյուջեի» դրամային և «շանսերի հավասարության» քաղաքականությունը: Այսպիսով, նեղողականների ծրագիրը համահումը էր անգլո-ամերիկյան նեղոպահպանողական կոնցեպցիային: 1978թ.-ի պառլամենտական ընտրություններին ՄՐԱ-ն և ԴԺԴ-ն հանդիս էին զայխ որպես մեկ ընտրադաշտում պայքարող հակառակորդներ: Նման պառակտում տեղի ունեցավ նաև ձախ կոալիցիայում: Չնայած երկու կուսակցությունների կողմից համանման ռազմավարական ուղղության պահպանմանը, որը դեռևս ամրագրվել էր «Զախ ուժերի համատեղ ծրագրում», սոցիալիստական և կոմունիստական կուսակցությունների ղեկավարությունների միջև աճում էր լարվածությունը: Կոմունիստները մտահոգված էին սոցիալիստական կուսակցության ընտրողների թվաքանակի աճով և փորձում էին առավել հստակ եզրեր գտնել միջյանց և դաշնակիցների միջև: Միտերանը իր հերթին ձախ ուժերի համագործակցությունը անվանում եր «կոնֆլիկտային

միություն» և չէր ընդունում ձախ ուժերի առաջնորդ լինելու ՖԿԿ-ի հավակնումը: Այսպիսով, 70-ական թթ-ի վերջում ֆրանսիայում նախանշվում էին քառակուսակցական նողելի ուրվագծերը, ինչը ուներ բներացման նիտում: Ընտրողների համակրանքը բաժանված էր հավասարաչափ աջ և ձախ ճամբարների միջև: Պառլամենտական ընտրությունների առաջին փուլում ձախ կուսակցությունները գերակշռեցին ձայների ընդհանուր թվով՝ 48, 6%, աջերը՝ 46, 5%:/

Սակայն երկրորդ փուլի արդյունքներով աջերը կազմեցին ավելի շատ պատգամավորական խմբավորումներ: Այդպես ՄՀԱ-ն ունեցավ 148տեղ, ԴՖԴ -ն՝ 122: Մեկ տարի անց Եվրոպական նիտում առաջին ուղիղ ընտրությունների արդյունքում/ընտրությունները անցկացվեցին համանասնական համակարգով/ ՄՀԱ-ն պարտվեց՝ հավաքելով ձայների միայն 16%, ԴՖԴ -ն՝ 27%, ՖԱԿ-ն՝ 23, 7%, ՖԿԿ-ն՝ 20, 6%: Կարելորագույն նշանակություն էր ձեռք բերում 1981թ. նախագահական նախընտրական արշավը: Նոր ընտրություններին աջ ճամբարը մոտեցավ երկու առաջատար կուսակցությունների միջև ընթացող սուր պայքարի պայմաններում: Ժիսկար դ' Էսթենը չկարողացավ առաջ քաշել երկարատև տնտեսական խնդիրների լուծման որևէ համոզիչ ծրագիր: Կառավարության կողմից այդպիսի միջոցների կիրառումը, ինչպիսին են ընտրատարիքի իշեցումը մինչև 18 տարեկան, ապա ամուսնալուծության ընթացակարգի հեշտացումը, շրջակա միջավայրի պահպաննան եղանակների ընդլայնումը, մահապատժի վերացումը, միայն ավելի էին ընդգծում ժիսկարդիզմի բարոյական հոգնածությունը: Նեղուական շարժումը, հակառակը, գտնվում էր բարձունքում: 1980թ-ին լույս տեսավ ՄՀԱ-ի առաջին պաշտոնական ծրագիրը, որը անվանվեց «Ֆրանսիայի խաղաքարտը»: Շիրակյան դեկավարությունը քարոզարշավ սկսեց ԴՖԴ -ի դեմ: Ժիսկար դ' Էսթենի շուրջ լուրեր տարածվեցին, այդպես կոչված, «Բոկասոյի ադամանդների» մասին, որոնք նախագահը, իբր, թաքցրել էր / Բոկասոն Կենտրոնական Աֆրիկյան կայսրության նախկին կայսրն էր, որը մեղադրվում էր մարդակերության մեջ, և որը, իբր, դ' Էսթենին ադամանդներ էր նվիրել/: Սակայն Շիրակյան չհաջողվեց անել կարևորագույնը՝ համախմբել սեփական կուսակցությունը: «Բարոնական» խմբավորումների մնացորդները համախմբվեցին Միշել Ղերեի շուրջը, որը և դարձավ նրանց թեկնածուն նախագահական պաշտոնի համար: Աննախաղեապ ընտրություններին իր մասնակցության մասին հայտարարեց Շիրակի մոտագույն համախոհներից մեկը՝ Մարի Գառոն, որը ՄՀԱ-ի ֆեմինիստական խմբավորման

առաջնորդն էր: ՄՅԱ-ին պատկանող կառավարության անդամները պաշտպանեցին ժիսկար դ՝ Եսթենին:

Ֆրանտուա Միտերանը, հակառակը, խուսափում էր ձախ ճամբարում իր հակառակորդների հետ առճակատումից և կառուցել էր իր ընտրարշավը «Դանգիստ ուժ» կարգախոսի ներքո: Չնայած որ ընտրություններում պետք է առանձին նասնակցեր կոնունիստների առաջնորդ ժորժ Մարշեն, ՖԿԿ-ն և սոցիալիստները հրաժարվեցին միմյանց հասցեին հանդես գալ կոչտ քննադատություններով: Դանրամատչելի էր դառնում «միասնություն ներքից» գաղափարը, այսինքն՝ ձախ ընտրողների միավորում առանց պաշտոնական միջկուսակցական հանաձայնագրի: 1981թ-ին Միտերանին հաջողվեց մեկուսացնել նաև ներկուսակցական ընդդիմությունը:

Նախագահական ընտրությունների առաջին փուլը, որը կայացավ 1981թ.ապրիլի 26-ին, բացահայտեց թեկնածուների գերիշխումը «Ազ Ֆրանսիայից»: Ժիսկար դ՝ Եսթենը ստացավ ձայների 28%, Շիրակը՝ 18%, Դերեն՝ 1, 6%, Գառոն՝ 1, 3%, Միտերանը՝ 25, 8%, Մարշեն՝ 15, 3%: Գոլական էլեկտորատի նշանակալի մասը արդեն առաջին փուլում իր ձայները տվեց ժիսկար դ՝ Եսթենին «օգտակար քվեի» սկզբունքով՝ չհավատալով Շիրակի հաղթանակին և ձգտելով անրապնել աջ կուսակցությունների առավել ուժեղ թեկնածուի դիրքերը: Երկրորդ փուլը, որը տեղի ունեցավ մայիսի 10-ին, հաղթանակ բերեց Միտերանին: Նա ստացավ ձայների 51, 7% իսկ ժիսկար դ՝ Եսթենը՝ 48, 3%: Զգտելով ամրապնդել հաջողությունը՝ Միտերանը օգտվեց պառլամենտի բացթողնան և վաղաժամկետ ընտրությունների անցկացման իրավունքից: Ապակազմավորված աջ կուսակցությունները չկարողացան կազմակերպել ուժեղ ընտրարշավ: Ընտրությունները բերեցին ձախ ուժերի կայուն պառլամենտական մեծամասնություն: Այսպես՝ սոցիալիստական կուսակցության պառլամենտական խմբավորումը ունեցավ 271 տեղ, կոնունիստները՝ 44, ձախ ռադիկալները՝ 14: ՄՅԱ-ին հաջողվեց պառլամենտ անցկացնել 83 պատգամավոր, ԴֆԴ -ին՝ 71: Զախ կուսակցությունները ձևավորեցին կառավարություն, որը գլխավորեց Պիեռ Մորուան: Այսպիսով, իր ձեռքը վերցնելով ամբողջ իշխանությունը՝ Միտերանը «ձախ էքսպերիմենտի» լայնածավալ ծրագրի իրականացման հնարավորություն ստացավ: Պետք է նշել, որ «ձախ ուժերի» հաջողությունը անսովոր էր, հաշվի առնելով, որ Արևմուտքի մյուս երկրներում հաղթում էին ներառական պարտիաներ: Սակայն, վերլուծելով Ֆրանսիայի քաղաքական զարգացումը 70-կան թթ-ին, այդպիսի արդյունքը կարելի է համարել տրամաբանական:

Մորուայի կառավարությունը քայլեր ձեռնարկեց ինքնակառավարման կոնցեպշիայի իրագործման համար: «Ապակենտրոնացման մասին օրենքների» շարքը ընդլայնեցին տեղական ինքնակառավարման /առաջին հերթին ներկայացուցչական/ մարմինների լիազորությունները, նվազեցրեց կենտրոնի աղմինիստրատիվ հսկողությունը տեղական ինքնակառավարման մարմինների վրա, առավել հստակ սահմանագծեց իրավասությունը պետության և տարածքային կոլեկտիվների, ինչպես նաև տարբեր տիպերի տարածքային կոլեկտիվների միջև: Փոխվեց և Ազգային ժողովի ընտրությունների համակարգը: 1985թ-ին ընդունած օրենքի համաձայն այն նույնաեւ դարձավ համամասնական պատգամավորները ընտրվում էին մեկ փուլով՝ ըստ դեպարտամենտների կողմից ներկայացված ցուցակների, մանդատները բաշխվում էին համամասնորեն տված յուրաքանչյուր ձայնների ցուցակի համար: Ինքնակառավարման սկզբունքի ներքո կառավարությունը հասավ կուսակցությունների ֆինանսական գործունեության ռեգլամենտացիայի մասին օրենքի ընդունմանը: Վերացվեց ցենզուրան հեռուստատեսության և ռադիոյի վրա, վերականգնվեց մայիսի 8-ի ազգային տոնը: Աշխատանքային շաբաթը կրածատվեց մինչև 39 ժամ, և աշխատավարձը պահպանվում էր: Բացի այդ, Մորուայի կառավարությունը բարձրացրեց մինիմալ աշխատավարձը, 40-50%-ով՝ գործազրկության նպաստները: «Զախ Էքսպերիմենտուն» արմատական դեր էր խաղում ազգայնացման ծրագիրը: Դրա նպատակն էր հաստատել պետհակողություն խոշորագույն ֆինանսարդյունաբերական մենաշնորհների վրա, որոնք կարող էին դառնալ ազգային տնտեսական աճի հիմքը:

1982թ-ին հինգ արդյունաբերական խմբերի ազգայնացումից հետո պետական հատվածը ապահովում էր 1/2 ներդրումները, 1/3 համախառն ներքին արդյունքը, 1/3 արտահանումը, 1/4 վարձու աշխատանքը: Պետական ձեռնարկությունների ընդհանուր քանակը գերազանցում էր երեք հազարը: Պետությունը առաջատար տեղ գրավեց առավել հեռանկարային ճյուղերում՝ եներգետիկայում, բիոարտադրությունում, տեղեկատվությունում: Միաժամանակ Մորուայի կառավարությունը հսկողություն սահմանեց 36 մասնավոր բանկերի վրա, որոնցից յուրաքանչյուրի դեպոզիտների գումարը 1մլրդ.ֆրանկից ավել էր, ինչպես նաև «Պարիբա» և «Սյուեզ» խոշոր ֆինանսական խմբերի վրա: Արդյունքում պետական հատվածի մասը ֆինանսական և վարկային ոլորտում կազմեց 95%: Ազգայնացման փոխհատուցման ապահովումը և մեծածավալ ներդրումների անհրաժեշտութ-

յունը նոր պետական ձեռնարկությունների մոդեռնիզացման համար առաջ քաշեցին բյուջետաֆինանսական համակարգի մեծացող լարվածությունը: 1983թ-ին պակասորդը արդյունաբերական պետական հատվածում կազմեց 7, 5 մլրդ.ֆրանկ: Բացի այդ, ազգայնացումը դրդեց «կապիտալների փախուստը» դեպի արտասահման: Միայն 1981թ-ին Ֆրանսիայից դուրս բերվեց 77մլրդ. ֆրանկ: Իրենց ազդեցությունը ունեցան նաև հերթական համաշխարհային ճգնաժամի հետևանքները/այն սկսվեց 1981թ-ին/: Լուրջ վճար Ֆրանսիային հասցրեց աներիկյան ֆինանսարժութային քաղաքականությունը, որը հիմնված էր դոլարի կուրսի արիթմոտական բարձրացման վրա: Վճարային հաշվեկշի կտրուկ վատթարացումը ստիպեց Մորուայի կառավարությանը դեռևս «ձախ էրսպերիմենտի» ծրագրի հետ կապված միջոցառումների անցկացման ժամանակ անցնել կոշտ ֆինանսարժութային քաղաքականությանը: 1981թ-ին կառավարությունը ստիպված եղավ 3%-ով դեվալվացիայի ենթարկել ֆրանկը, իսկ 1982թ-ին՝ ևս 10%-ով: Դեռևս որոշում, որով մի քանի ամիսների ընթացքում սարեցվում էին գների և աշխատավարձերի աճը: Կառավարությունը հույս ուներ հատուցել ֆինանսական կորուստները պետական հատվածի արագ աճի արդյունավետության հաշվին: Բայց այդ հույսները չարդարացան: Եթե 1981-1982թթ-ին, չնայած ճգնաժամային իրավիճակին, արտադրությունը Ֆրանսիայում ավելանում էր տարեկան 2%-ով, ապա 1983թ-ին տնտեսական աճը նվազեց մինչև 0, 7%: Գործազրկության թիվը կազմում էր ավելի քան 2 մլն. մարդ: Սղաճը բերեց կենսանակարդակի իջեցում: 1982թ-ի ամռանից Միտերանը ստիպված եղավ դադարեցնել «ձախ էրսպերիմենտի» ծրագրի անցկացումը: Նախագահի ելույթներում առավել հաճախ էր հնչում «զարգացման երրորդ ուղղու» թեզը նեռացիալիզմի նասին, ընդգծվում էր հասարակական արտադրանքի սոցիալիզմի հարավությունները միայն ինքնազարգացման հիմքի վրա, այլ ոչ թե շուկայական մեխանիզմի վերացման եղանակով: Սոցիալիստական կուսակցությունում արագ էր զարգանում «սոցիալական պետություն» գաղափարից իրաժարվող կողմնակիցների ազդեցությունը: Այս տեխնոլոգիատ խմբավորման առաջնորդները՝ ժակ Դելորը և Միշել Ռոկարը, հանդես էին գալիս տնտեսվարման կոշտ քաղաքականության, սոցիալական ծրագրերի կոճատման, ազգայնացման քաղաքականության վերացման և խառը տնտեսության մոդելի անրապնդման համար կառավարման մեջ աշխատանքային կոլեկտիվների ներգրավման դեմ: Պետական քաղաքականության հիմնական խնդիրը պետք է դառնար ազգայնացված ձեռնարկությունների վերակազմավորումը

և կառավարման բարելավումը: 1983թ-ի ապրիլին նոր տնտեսական ռազմավարությունը պաշտոնապես ամրագրվեց կառավարության «10 կետի ծրագրում» /Ղելորի ծրագիր/: 18 ամիսների ընթացքում արդեն երրորդ անգամ ֆրանկի դեվալվացիա հետևեց, ինչը հնարավորություն տվեց նշանակալիորեն իշեցնել ֆրանսիական ապրանքների ինքնարժեքը և ակտիվացնել արտահանումը: Նախատեսվում էր հարկերի ավելացում, սառեցվեցին սոցիալ կարիքների համար գումարները, բարձրացվեցին գումարները հիվանդանոցային տեղերի, տրանսպորտի, կոնունալ ծառայությունների համար և այլն: Պետական ձեռնարկությունների ֆինանսավորման համար սկսվեց նաև նաև կապիտալի ներգրավումը: Սկսվեց նավաշինության, մետաղուրգիայի, ածխային արդյունաբերության, փոքր շահութաբեր ձեռնարկությունների վերակազմավորումը, որը ուղեկցվում էր շատ դեպքերուն բանվորական տեղերի կրծառումներով: Այդ միջոցառումները թույլ տվեցին վերականգնել տնտեսական զարգացման դրական դինամիկան: 1984թ-ին արտադրության աճը կազմեց 1, 75%, 1985թ-ին՝ 2%: Միաժամանակ կառավարությունը փորձում էր թույլ չտալ իրավիճակի վատացում աշխատանքային շուկայում: 1984թ-ի փետրվարին ընդունվեց «զբաղվածության և արդյունաբերական վերակառուցման ծրագիր»: Սակայն կառավարության վարկանիշը իշնում էր: Զախ կուսակցությունները բաց թողեցին նախաձեռնությունը և դարձան գալիք նախընտրական արշավի «հետնապահներ»:

3. 1986 և 1988թթ. ընտրական արշավները: «Դամագոյակցության» առաջին փորձը

«Զախ էքսպերիմենտի» ձախողումը և կառավարության կուրսի փոփոխումը խոր հիմքափություն առաջացրեցին ձախ կուսակցությունների էլեկտորատի նոտ: 1984թ-ին կոնունիսատական կուսակցության ներկայացուցիչները լրեցին կառավարությունը: Բայց այդ քայլը նրանց չփրկեց: Ընտրողների կարծիքով, նրանք կիսում էին պատասխանատվությունը կառավարության կողմից իրականացվող կուրսի համար: Բայց ինչը ավելի կարևոր էր, կոնունիսատները գնալով ավելի ու ավելի մեծ պարտություն էին կրում իրենց ընդդիմադիրների նկատմամբ ֆրանսիական հասարակության վերլուծության և քաղաքական ռազմավարության փոփոխման ընդունակության հարցերում: ՖԿԿ-ն չկարողացավ արդիականացնել երիտասարդության հետ աշխատանքի մեթոդնե-

Ի՞՛: Նվազում էր նաև նրա ազդեցությունը բանվոր դասակարգի վրա: Կոմունիստների էլեկտրոատի մի մասը անցավ սոցիալիստների կողմը, մյուսը ընկավ ռադիկալ ազգային խմբավորումների ազդեցության տակ: Արդեն 1981թ-ին տեղի ունեցած ընտրությունների ժամանակ կոմունիստները կորցրեցին 1, 8 մլն. ձայն 1978թ. ընտրությունների համեմատ: Զախ կոպահիայից դուրս գալը միայն խորացրեց ՖԿ4-ի նկատմամբ Վստահության ճգնաժամը: Ղեկավարող կուսակցության վիճակը նույնպես բավականին բարդ էր: Միտերանը չվստահելով ՖՍԿ-ի երիտասարդ թևին, նրա պատվախնորությանը՝ հրաժարվեց Ղելորին և Ուկարին տրամադրել բոլոր լիազորությունները նոր տնտեսական ծրագրի իրականացնան համար: 1984թ-ի ամռանը կառավարության վերակազմավորումից հետո վարչապետի տեղը գրավեց 37- ամյա Լեոն Ֆաբրիուսը՝ Միտերանի անձնական շրջապատից, որը հայտնի էր իր տեխնոլոգատ հայացքներով և գաղափարախոսական «հանդուրժողականությամբ»: «Ղելորի ծրագրի» իրականացնան մեջ հիմնական դեր էր իր խաղում ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Պիեռ Բերեգովուան: Ինքը՝ Ղելորը, 1984թ-ին ընտրվեց Եվրոհանձնաժողովի նախագահ և դադարեցրեց իր գործունեությունը կուսակցությունում: Ուկարը, ստանալով գյուղատնտեսության նախարարի ոչ նշանակալի պաշտոնը, 1985թ-ին դուրս եկավ կառավարությունից և դարձավ ներկուսակցական ընդդիմության առաջնորդներից մեկը: Պառակտումը սոցիալիստական կուսակցության ղեկավարության մեջ, ինչպես նաև կուսակցության առաջատար գաղափարախոսների մեկուսացումը թուլացրեցին սոցիալիստների նախընտրական արշավը:

Ազ ճամբարը ակտիվորեն պատրաստվում էր նոր ընտրություններին: ԴՖԴ -ն, կորցնելով «նախագահական մեծամասնության» քաղաքական և կազմակերպչական առավելությունները, դժվարությամբ էր հարմարվում ընդդիմադիր կուսակցության դերին: Նրա ղեկավարությունը թուլացած էր ժիսկար դ՝ Էսթենի և Ռայմոնդ Բարդի միջև հակամարտության պատճառով: Ժիսկար դ՝ Էսթենի համախոները Յանրապետական կուսակցությունից ձգտում էին պահպանել իրենց շարժման գաղափարախոսական ինքնատիպությունը: Զնայած «առաջատար լիբերալ հասարակության» ծրագիրը տապալվեց, հանրապետականները կողմ էին լիբերալիզմի հոգևոր արժեքների գերակայությանը, տնտեսական արդիականացնան և բարոյական սկզբունքների համակցմանը: Այս ուղղությունը ստացավ «մշակութային լիբերալիզմ» անվանումը: Սակայն այդ գաղափարախոսության հեռանկարները կասկածելի էին: ԴՖԴ -ուն առաջատար դիրքերը աստիճանաբար զբաղացրեց

Ուայնոն Բարրը, որը մեծ աջակցություն էր ստանում Ղենոկրատական միությունից: Բարրի կոնցեպցիան հենվում էր երկու սկզբունքների գերակայության վրա՝ 1/պետական քաղաքականության պրագմատիզմի և 2/սոցիալական գաղափարախոսության ավանդությունների վրա: Լինելով բարձրակարգ տնտեսագետ՝ Բարրը «արդյունաբերական իմպերատիվի» գաղափարի և տնտեսական աճի կարգավորման/«դիրիժիզմի»/ ու շուկայական խթանների ռացիոնալ համակցման կողմնակիցն էր: Բարրը կոչ էր անում դեպի ավանդական արժեքների վերադարձ՝ ընտանիքի նկատմամբ հավատարմություն, հայրենասիրություն, աշխատասիրություն, հավատք: Լիբերալիզմը, ըստ նրա, մոտ էր քրիստոնեական դեմոկրատիայի գաղափարախոսությանը:

80-կան թթ-ի սկզբին նեղողլականությունը աստիճանաբար վերածվում էր նեղպահպանողական գաղափարախոսության: Շիրակը իր շարժումից հանեց նույնիսկ տնտեսական լիբերալիզմի հասկացությունը՝ փոխարինելով այն «ազատությունների վերականգնան» թեզով: Նեղողլականության ծրագիրը, որը նախապատրաստվեց 1985թ-ին և անվանվեց «ՄՐԱ-ի պակտը Ֆրանսիայի հանրայի», հենվում էր «կոնսերվատիվ հեղափոխության» կոնցեպցիայի, երկոր քաղաքական կյանքի արմատական փոփոխման վրա, որը կապված էր «ձախ էքսակերիմենտի» հետևանքի վերացնան, մասնավոր ձեռնարկատիրության դիրքերի վերականգնան, մրցակցության, ոգու և անձնական պատասխանատվության վերածննդի հետ: Չնոտցնելով էական փոփոխություններ իր տնտեսական ռազմավարության մեջ՝ Շիրակը արմատապես փոխեց նախընտրական նարտավարությունը: Նա հանդես եկավ աջ կուսակցությունների կուալիցիայի ձևավորման գաղափարով, ինչը պաշտպանեց նաև ԴֆԴ -ի նախագահ Ժ.Լեկանյուեն: Երկու կուսակցությունների ծրագրային դրույթները չէին պարունակում սկզբունքային տարրերություններ, իսկ առաջնորդների անձնական պատվախնդրությունները չէին խոչընդոտում կուսակցությունների մոտեցմանը մինչև մյուս նախագահական ընտրությունները: Արդեն 1982-1985թ-ին տարածաշրջանային ընտրությունների ժամանակ ՄՐԱ-ը և ԴֆԴ -ն հաջողությամբ համաձայնեցրին իրենց գործողությունները: 1984թ-ն Եվրոպաօլամենտի և 1986թ-ին տեղի ունեցած պառլամենտական ընտրություններին նրանք առաջադրեցին թեկնածուների միասնական ցուցակներ:

80-կան թթ-ի կեսին անրապնդվեցին ևս մեկ քաղաքական ուժի դիրքերը: Դա ժամ-Մարի Լե Փենի կողմից ստեղծված «Ազգային ճակատ»/ԱՅ/ շարժումն էր: Նրա կազմավորումը սկսվեց դեռևս 1972թ-ին, սակայն շարժումը նկատելի հաջողություն

ունեցավ 1984թ-ին, երբ ստացավ 2 մլն ձայն և Եվրոպառլամենտ անցկացրեց 10 պատգամավոր: Աճ-ի ծրագիրը կառուցվում էր ազգային էքստրեմիստական և ռասիստական գաղափարների վրա: Ազգայնականները նշում էին «Երրորդ աշխարհի» երկրներից զանգվածային ներգաղթի վտանգը, որը հղի էր «Փրանսիացիների կողմից ազգային նույնականության» կորստով: Աճ-ն ագրեսիվ արշավ էր իրականացնում՝ կոչ անելով պայքարել կոմունիզմի «հոգևոր լծի», մասնության և կոսմոպոլիտիզմի, համաշխարհային ասպարեզում՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի գերիշխման, ժողովուրդների ինքնատիպությունը ոչնչացնող Եվրոպական ինտեգրացիայի դեմ: Ներֆաշիզմի մեջ Աճ-ին ուղղված մեղադրանքները այդքան էլ ճիշտ չեն: Աճ-ն ֆաշիզմը և կոմունիզմը դիտարկում էր որպես «հարյուրամյակի մեծագույն ուտոպիաներ», որոնք մեծ վտանգ են ներկայացնում Եվրոպական քաղաքակրթությանը: «Պայմանական էր նաև Աճ-ին վերագրելը աջ ճամբարին: Նշանակալից էր, որ 1984թ. ընտրությունների ժամանակ Աճ-ին կողմ քվեարկողներից յուրաքանչյուր հինգերորդը նախկին ընտրություններին իր ձայնը տվել էր Միտերանի օգտին: Աճ-ն ավելի շուտ հենվում էր, այսպես կոչված, «բողոքական էլեկտորատի», սոցիալական այն խմբերի ներկայացուցիչների վրա, որոնք առավել խոցելի էին կառուցվածքային տնտեսական բարեփոխումների շրջանում, ունեին բացասական մոտեցում ստեղծված սոցիալ-քաղաքական համակարգի նկատմամբ: Լե Փենը լայնորեն օգտագործեց «ավանդական կուսակցությունների» ճգնաժամի մասին թեզը, կոչ արեց վերջ տալ Ֆրանսիայի համար քայլայիշ «չորսի ավագակախմբի» իշխանությանը /Լե Փենը նկատի ուներ չորս կուսակցությունները՝ ԴժԴ -ն, ՄՇԱ-ն, ՖԿԿ-ն և ՖԱԿ-ն/:

Ընտրությունների արդյունքում, որոնք տեղի ունեցան 1986թ-ի մարտին և անցան համամասնական համակարգի հիման վրա, համոզիչ հաղթանակ տարավ աջ կողալիցիան:

ԴժԴ -ն և ՄՇԱ-ն ստացան 291տեղ, սոցիալիստները՝ 206 տեղ: Կոմունիստների նոր պարտությունը, որոնք ստացան միայն 35 տեղ պառլամենտում, անսպասելի չեր: «Ազգային ճակատը» ունեցավ 35 մանդատ, ինչը մեծ ցնցում էր Ֆրանսիայի համար: Նախագահը՝ սոցիալիստ Միտերանը, հետևելով Սահմանադրությանը, ստիպված եղավ վարչապետի պաշտոն առաջարկել աջերի առաջնորդ ժակ Շիրակին: Առաջին անգամ 5-րդ Հանրապետության պատմության մեջ սկսվեց «համագոյության» շրջան՝ ձախ նախագահի և աջ վարչապետի կառավարումը: Նախագահը

*Այդ ժամանակ ժակ Շիրակը Փարիզի քաղաքավուսն էր:

գրադաւում էր արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության խնդիրներով, իսկ վարչապետը՝ ներքին քաղաքանության խնդիրներով:

Շիրակի կառավարությունը սկսեց լայնածավալ բարեփոխումներ իրականացնել քաղաքահրավական և սոցիալ-տնտեսական ոլորտներում: Կառավարության կողակիցիան հասավ նրան, որ 1985թ-ին փոխվեց ընտրական օրենքը, և վերականգնվեց ընտրությունների մեծամասնական հանձնարարությունը: Ներքին գործերի նախարար Շ.Պասկուայի ղեկավարությանը մշակվեցին օրենքներ, որոնք ավելի խստացրեցին տարրեր տեսակի հանցագործությունների հանար պատիժները և բանտարկնան ռեժիմը, ընդլայնեցին ոստիկանության և ազգային անվտանգության ծառայությունների լիազորությունները ահարեւէջության դեմ պայքարում: Նախապատրաստվեց քաղաքացիական իրավունքի բարեփոխումների նախագիծ, որը ֆրանսիայում ծնված ներգաղթածների երեխաներին գրկում էր քաղաքացիություն ստացման իրավունքից: Միայն հասարակության ճնշման արդյունքում նախագիծը հետ կանչվեց: Նույն ճակատագրին արժանացավ բարձրագույն կրթության բարեփոխումների մասին օրինագիծը, որը կտրուկ նվազեցնում էր ուսանողական ինքնակառավարման իրավունքները: Պետնախարար Ե.Քալարյուլը դարձավ տնտեսական բարեփոխումների հիմնական կազմակերպիչը: Դրա հիմնական ուղղություններն էին՝ 1/լայնածավալ ապաազգայնացում, 2/«ֆինանսական առողջություն» և 3/տնտեսության լիբերալիզացում: 1, 5 տարվա ընթացքում սեփականաշնորհվեց պետական հատվածի երրորդ մասը /65 կորպորացիաներ, որոնք ներառում էին 1100 ձեռնարկություններ/: Սեփականաշնորհման չեին ենթարկվել «բնական մենաշնորհները»՝ էլեկտրականությամբ, գազամատակարարման և հեռահաղորդակցության ձեռնարկությունները: Սեփականաշնորհումը իրականացվում էր յուրաքանչյուր ձեռնարկության համար մշակված առանձին ծրագրի համաձայն՝ արժեթղթերի ազատ վաճառքի եղանակով նվազագույնից բարձր, բայց շուկայականից ցածր գներով: Յուրաքանչյուր ձեռնարկության համար կառավարության կողմից ստեղծվում էր «կայուն ներդրողների» /«պինդ միջուկ»/ խումբ, որոնց արտոնյալ գներով վաճառկում էին արժեթղթերի 25%-ը, ~5% յուրաքանչյուրին: Մնացած արժեթղթերը գնում էին մանր ներդրողները: Սեփականատեր դարձան ավելի քան 40 մլն ֆրանսիացիներ: Գոլական կառավարությունը ֆինանսական առողջության համար որպես հիմք ընտրեց տնտեսության կոչտ խնայողության քաղաքանություն, ինչպես նաև սոցիալական ծրագրերի կրծատում: Կարևոր դեր ունեցան և սեփականաշնորհումից ստացած ֆինան-

սական միջոցները: Օրինակ՝ միայն 1986թ-ի նոյեմբերից մինչև 1988թ-ի հունվար ամիսը սեփականաշնորհումը բյուջեին բերեց 84 մլրդ ֆրանկ: Այդ գումարի 72%-ը ուղղվեց պետական պարտքերի մարմանը, իսկ մնացած 28%-ը՝ պետական ձեռնարկությունների մոդեռնիզացմանը: Կառավարության ակտիվ տնտեսական քաղաքականությունը բարենպաստ կողնուկտուրայի հետ միասին նկատելի աճ ապահովեց Ֆրանսիայի տնտեսությանը: 80-ական թթ-ի երկրորդ կեսը եղավ բավականին դիմամիկ: Ներքին համախառն արդյունքը և արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը կազմեցին տարեկան 3-4%: 50%-ով ավելացավ ներդրումների ծավալը արդյունաբերության հիմնական ճյուղերում: Սակայն «կոնսերվատիվ հեղափոխության» սոցիալ-հոգեբանական արդյունքները այդքան էլ դրական չեն:

Բարեփոխումների կտրուկ շրջադարձը, սոցիալական ապահովման համակարգի փլուզումը, ամբողջ տնտեսական մեխանիզմի վերափոխումը շատ հիվանդագին եղան հասարակության համար: Շիրակի քաղաքականությունը դժգոհություն առաջացրեց բնակչության այն խավերում, որոնք սովոր էին պետության կողմից հաստատված սոցիալական երաշխիքների համակարգին, կենսամակարդակի կայուն աճին: Դասարակության տրամադրությունը ևաբես փոխվեց, երբ 1987թ-ին տեղի ունեցավ համաշխարհային բորսային ճգնաժամը, որը ոչնչացրեց մանր ներդրողներից շատերի ներդրումները: Բացի այդ, տնտեսության լիբերալիզացումն էլ մասնակի էր: Այսպես, օրինակ, այն մեթոդները, որոնք կառավարությունը օգտագործում էր սեփականաշնորհնան համար՝ փակ բաժնետիրական խմբերի ստեղծում /«պինդ միջուկներ»/ և նրանց ձևավորումը՝ ելնելով անձնական նախապատվությունից, այլ ոչ թե մրցութային կարգի հիման վրա, միայն անրապնդեցին Ֆրանսիայի համար ավանդական դարձած «հսքերլիշնենթի/բարձր խավերի/ համերաշխության» համակարգը: Շիրակի հաշվարկները «կոնսերվատիվ հեղափոխության» գաղափարախոսական պարուսի վրա արդարացվեցին միայն մասնակիորեն: Ֆրանսիացիներից շատերը, որոնք դրական էին վերաբերվում ներգոլականների կողմից վարած քաղաքականությանը, միաժամանակ դեմ էին այն միջոցառումներին, որոնք ուղղված էին «սոցիալական կարգի ամրապնդմանը»: Քաղաքացիական օրենսգրքի և բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների կասեցումը խորհրդանշական էր: Չնայած իր նախկին ծրագրերին՝ Շիրակի կառավարությունը այդպես էլ չհամարձակվեց սկսել կենսաթոշակային ապահովության և առողջապահության համակարգի արմատական բարեփոխումները:

1988թ. նախագահական ընտրությունների համար բնութագրիչ էր քաղաքական պայքարի ակնհայտ ապագաղափարախոսությունը: Երկրի առաջատար կուսակցությունների՝ ՖՍԿ-ի, ՄՇԱ-ի և ԴԺԴ -ի կառավարման փորձը, որոնք հաջորդաբար դեկավարում էին և փորձում էին իրականացնել գլորալ գաղափարախոսական նախագծեր, եղան թիւ համոզիչ: Սոցիալ-ռեֆորմիստական ռազմավարությունը իրեն չարդարացրեց, իսկ նեոպահպանողական հեղափոխությունը ֆրանսիական հասարակությունը չընդունեց: Ազ ճամբարի թեկնածուների՝ Ծիրակի և Բարդի նախընտրական պլատֆորմը վկայում էր լիբերալ մաքսիմալիզմից վերջնական իրաժաման մասին: Երկուսն ել ձգտում էին սինթեզավորել պետշինարարության գոլական ավանդույթները տնտեսական բնագավառում պրագմատիկ կուրսի նպատակահարմարության, սոցիալական ավանդույթների և տեխնոկրատական ռացիոնալիզմի հետ: Նույն դիրքորոշումն ունեին նաև առաջատար քաղաքական գործիչները, որոնք պայքարում էին իրենց թեկնածուների առաջադրման համար /ՖՍԿ-ից՝ Ուկարը և Ֆարիուսը/: Առաջատար կուսակցությունների ռազմավարական նպատակների մոտեցումը կարող էր զգալի չափով փոխել քաղաքական ուժերի տեղաբաշխումը: Բերեգովուան նույնիսկ փորձ արեց պրոպագանիել նոր կուլտիվիայի գաղափարը, որը պետք է ընդունակ լիներ միավորել «լիբերալ-պրագմատիկներին» և «սոցիալիստ-ռեալիստներին»: Այդ գաղափարը բավականին հեռանկարային էր: Ֆրանսիան առաջատար արևմտյան երկրներից առաջինն էր, որ մոտեցավ հասարակության զարգացման նոր ռազմավարության ձևավորմանը: Այդ գաղափարը գերիշխող կդառնա մյուս առաջատար արևմտյան երկրներում արդեն 90-ական թթ.-ին: Սակայն Ֆրանսիայի ոչ քաղաքական էլիտան, ոչ էլ հասարակական գիտակցությունը պատրաստ չէին «նոր սինթեզին»: Ֆրանսիացիներին թիւ էր քավարարում առանց հիեալների պրագմատիզմը, ինչպես նաև մինչև արագմատիզմի հասցրած գաղափարախությունը: Համարյա երկու դար շարունակվող կրոնական, գաղափարախոսական պատերազմները քաղաքական ասպարեզում չէին կարող իր հետք չթողնել ազգային բնավորության վրա: 1988-1989թթ.-ին ֆրանսիացիների արդեն 58%-ը կողմ էին «նոր սինթեզի» գաղափարին, սակայն դեռևս 38%-ը պաշտպանում էին «ձախ» կամ «աջ» գաղափարները: Ավանդական կուսակցությունների և «քառակուսակցական նորելի» գաղափարաքաղաքական զգնաժամը, վառ գաղափարների բացակայությունը հանգեցրին ընտրությունների նկատմամբ հասարակական հետաքրքրության կտրուկ նվազման: Հարցուների հանաձայն՝

Կուսակցությունների հանդեպ վստահություն ուներ ֆրանսիացիների միայն 2%-ը: Որպես հետևանք տեղի ունեցավ քաղաքական պայքարի անձնականացումը: Նախագահական ընտրություններին թեկնածուները հանդես էին գալիս ավելի շուտ որպես անկախ քաղաքական գործիչներ, քան թե իրենց կուսակցությունների ղեկավարներ: Նախընտրական արշավները կառուցվուն էին անձնական իմիջի առանձնահատկությունների հիման վրա՝ օգտագործելով PR-ի ամբողջ տեխնոլոգիաները: Այդպիսի պայքարում իրեն ավելի հաջող դրսերեց Միտերանը: Ինչպես դը Գոլը արեց 1965թ-ին, այնպես էլ նա իր թեկնածությունը առաջ քաշեց վերջին պահին՝ ընտրություններից մեկ ամիս առաջ, երբ հիմնական հակառակորդները արդեն ակտիվ անցել էին «ճակատ առ ճակատ» պայքարին: Միտերանը կտրուկ փոխեց իր քաղաքական իմիջը և հանդես եկավ որպես համազգային առաջնորդ, որը հենվուն է քաղաքացիական համաձայնության գաղափարի և կայունության վրա: Նա հրաժարվեց ՖՍԿ-ի առաջնորդի դերից և սոցիալիստական գաղափարներից՝ փորձելով դը Գոլի պես «կուսակցություններից վեր» կանգնել: Միտերանի կոչերը՝ ուղղված «բոլոր ֆրանսիացիներին» փրկել Յանրապետությունը «կուսակցություններից, որոնք պատրաստ են զավթել իշխանությունը», «կլաներից և ավագակախմբերից», շատ էին հիշեցնում դրգոյսան քարոզարշավը: Սակայն, ի տարբերություն դասական գոլականությանը, միտերանիզմը դարձավ ոչ միայն ազգային միավորման, այլ նաև սահմանադրական հավասարակշռության, հասարակության մոդեռնիզմացման կայունության, արտաքին քաղաքականության գաղափարախոսություն: Տվյալ իրավիճակում ընտրությունների արդյունքը կանխորոշված էր: Արդեն առաջին փուլում Միտերանը ստացավ մեծ առավելություն իր հակառակորդների նկատմամբ՝ ստանալով ծայների 34%-ը /Շիրակը՝ 19, 9%, Բարոր՝ 16, 5%/: Կոնունիստների թեկնածուն՝ Ա.Լաժուանին ստացավ ընդամենը 6, 8%: Ուշագրավ է, որ ՖԿ-ի առաջնորդ ժորժ Մարշեն հրաժարվեց մասնակցել ընտրություններին: «Ազգային ճակատի» առաջնորդ Լե Փենը կարողացավ ստանալ ծայների 14%-ը, ինչը վերջնականապես նրան դարձրեց ազգային մասշտաբի քաղաքական գործիչ: Ընտրությունների երկրորդ փուլը հաջողություն բերեց Միտերանին՝ 54%/Շիրակը՝ 46%/: Պառլամենտը արձակվեց, և նոր ընտրությունները տեղի ունեցան արդեն մեկ ամիս հետո: Նրանք անցան քաղաքացիների մեջ պասիվության պայմաններում: Ընտրողների միայն 34%-ը մասնակցեց ընտրություններին: Արդյունքը հաստատեց «Ճախ» և «աջ» էլեկտորատի մոտավորապես հավասարությունը: ՖՍԿ-ն ստացավ 276 տեղ, ինչը թույլ տվեց

նրան ձևավորել պառլամենտում «նախագահական մեծամասնության» ֆրակցիա: Ընդդիմությունը/ԴՖԴ, ՄՀԱ, «Ազգային ճակատ», 13 «անկախներ»/ ունեցավ 272 պատգամավորներ: Կառավարությունը գլխավորեց Միշել Ռոկարը:

4. Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը 80-ական թթ-ին

Կանխատեսումներին հակառակ՝ Միտերանը իշխանության գլուխ անցնելուց հետո փորձեց ամրապնդել Ֆրանսիայի դիրքը Արևմտյան բլոկում և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում: Նշանակալիորեն ակտիվացավ Ֆրանսիայի համագործակցությունը ՍԱՏՕ-ի հետ: 1982-1983թթ-ի ընթացքում համաձայնագրեր ստորագրվեցին ԱՄՆ-ի հետ համակարգչային տեխնոլոգիաների փոխանակման մասին, ինչը բույս տվեց ավարտել առանձնացված գլխիկներով հրթիռների ստեղծումը և սկսել նեյտրոնային գենքի արտադրությունը: Միտերանը խրախուսեց Եվրոպայում միջին հեռավորության ամերիկյան միջուկային հրթիռների տեղադրումը: Նորացված ռազմական դոկտրինան, որը նախապատրաստվել էր գլխավոր շտաբի պետ Ժ.Լակագի ղեկավարությամբ և ընդունվել 1983թ-ին, նախատեսում էր հրաժարվել «Ազգային անվտանգություն» գոլական գաղափարից և անցնել «Եվրոպական պաշտպանություն» և «Յուստիսատլանտյան դաշնություն» գաղափարին: Դոկտրինայում արտացոլված էր ՆԱՏՕ-ի համար բնութագրիչ «գլորալ պահպանում» ռազմավարությունը:

1983թ-ին Ֆրանսիայի նախաձեռնությամբ առաջին անգամ երկար ժամանակից հետո գումարվեց ՆԱՏՕ-ի խորհրդի հերթական նիստը, և Ֆրանսիան մեկ տարով դարձավ Խորհրդի նախագահ: ԽՍԴՍ-ի հանդեպ պաշտոնական Փարիզը կոչտ դիրք գրավեց՝ ամբողջությամբ կիսելով արևմտյան երկրների միասնական պահանջները՝ դուրս բերել խորհրդային գործերը Աֆղանստանից, վերացնել ռազմական դորությունը Լեհաստանում, կրծատել Արևմտյան Եվրոպայում տեղաբաշխված խորհրդային զորքերի թվաքանակը: Ատլանտյան կողմնորոշումը հաջողություն չբերեց Ֆրանսիական դիվանագիտությանը: «Յոթնյակուն» Ֆրանսիան երկրորդական դիրքում էր՝ զիջելով քաղաքական և տնտեսական կշիռով ԱՄՆ-ին, նապանիային, Անգլիային և ԳՖՀ-ին: - Այդքան հաջող չէին նաև Ֆրանսիայի փորձերը ամրապնդվել «երրորդ աշխարհում»: Այսպես՝ երբ 1980թ-ին Չաղում, փաստորեն, քաղաքացիական պատերազմ է սկսվում նախագահ Գուկունի

ՈՒԵԴՐԵՒ գործերի և Յիսսեն Յաբրեի զինված ապստամբական ուժերի միջև, Փարիզը այդպես էլ չկարողացավ հաշտեցնել երկու կողմերին՝ պաշտպանելով սկզբից ՈՒԵԴՐԵՒ, իսկ երբ 1982թ-ին Յաբրեն գրավեց մայրաքաղաքը, ապա ճանաչեց նոր ռեժիմը և երկիր մտցրեց ռազմական ուժեր: Մերձավոր Արևելքում, հետևելով ատլանտյան համերաշխության կուրսին, Ֆրանսիան բարեկամական դիրք ընդունեց Իսրաելի նկատմամբ և չարձագանքեց՝ երբ վերջինս գրավեց Հոլանդի բարձրունքները: Դա հանգեցրեց սուր կոնֆլիկտի առաջացնանը Իսրաելի և Սիրիայի միջև: Կամպուչժ-այում, երբ այնտեղ տապալվեց Պոլ Փոսի ռեժիմը, Ֆրանսիան փորձ արեց երկիր վերադարձնել նախկին արքայազն Ն.Սիանուկին, ինչը տվյալ իրավիճակում սխալ էր:

Փարիզի կոչտ դիրքորոշումը այդ հարցում միայն ամրապնդեց Կամպուչժայի հարաբերությունները ԽՍՀՄ-ի և Վիետնամի հետ: Քննադատելով այդ տարիններին Ֆրանսիայի կողմից վարած արտաքին քաղաքականությունը՝ ժիսկար դ'Էսթենը ասում էր. «Միտերանի սխալը այն է, որ նա դուրս եկավ մեծ տերությունների մակարդակից, ինչին Ֆրանսիային հասցրեց դը Գոլը»: Ֆրանսիական դիվանագիտության մեջ բեկում առաջացավ 1984թ-ին, երբ փորձելով «ձախ էքսպերիմենտի» ծրագրի փլուզումից հետո վերականգնել անունը՝ Միտերանը արտաքին քաղաքականությունը վերցրեց իր անմիջական հսկողության տակ: Արդեն 1984թ-ին նա սկսում է բանակցությունները Սիրիայի հետ և հրաժարվում է Իսրաելին քաղաքական աջակցությունից: Միտերանը հայտարարեց Չաղից ֆրանսիական գործերի դուրսերման մասին, ինչպես նաև հասավ Լիբանանում ֆրանսիական զորաբաժնի փոխարիննանը ՄԱԿ-ի «երկնագույն զինագլխարկներով»: Ֆրանսիան փոխեց նաև իր հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Արդեն 1984թ-ին Միտերանը պաշտոնական այցով ժամանեց Մոսկվա, իսկ 1985թ-ին առաջարկեց Փարիզում անցկացնել ֆրանս-խորհրդային համագործակցության «մեծ համձնաժողովի» նիստ: Նույն տարում Փարիզ այցելեց Մ.Գորբաչովը: Միտերանը հանդես եկավ «նոր մտածողության» կոնցեպցիայի և խորհրդա-ամերիկյան բարձր մակարդակի երկխոսության օգտին: Բայց նույնքան վստահաբար ֆրանսիան բացառեց համընդհանուր զինաքավիման գաղափարը՝ համարելով,


*1976թ-ին Կամպուչժայում հաստատվեց, այդպես կոչված, «կարմիր քիմերների» դիկտատուրան Պոլ Փոսի և Յենգ Սարիի գլխավորությամբ: Նրանց իշխանության օրոք ոչնչացվեց կամ քաղցից մահացավ 351.մարդ: Հանցագործ ռեժիմը տապալվեց 1979թ-ին:

որ դա առաջին հերթին գերպետությունների խնդիրն է: Միտերանը հասուլ ուշադրություն սկսեց դարձնել Եվրոպական ինտեգրման խնդիրներին: Ժամանակավորապես առաջնությունը զիշելով Արևածագ Գերմանիային քաղաքական ինտեգրման հարցերում՝ Ֆրանսիան հանդիս եկավ Եվրոպական տնտեսական համագործակցության/ԵՏՀ / շրջանակներում գիտատեսնիկական համագործակցության հետագա զարգացման նախաձեռնությամբ: Օրինակ՝ ընդունվեցին «Եվրիկա», ԵՄՊՈՒՏ, ՖԱՍ տեխնոլոգիական հետազոտությունների համալիր ծրագրերը: Դրանց իրագործումը Եվրոպան դարձրեց համաշխարհային մակարդակի նորամուծական հետազոտությունների կենտրոն: 1984-1985թթ.-ին ֆրանսիական դիվանագիտությունը կարևորագույն դեր խաղաց ԵՏՀ-ի ընդլայնման/միացան Խապանիան և Պորտուգալիան/, ինչպես նաև ՆԱՏՕ-ից դուրս Արևածագավորապական Դաշինքի /ԱԴ / հովանու տակ արևածագավորապական երկրների միջև սերտ ռազմաքաղաքական համագործակցության վերսկսման գործում: Միտերանի վստահելի գործընկերն էր Շելմութ Քոլը, որը զբաղեցրեց ԳՖՀ-ի կանցլերի պաշտոնը 1982թ: Շենց ֆրանսիական և արևածագերմանական դիվանագիտությունների համատեղ ջանքերի շնորհիվ թույլ տվեցին 1983-1985թթ.-ին անցնել Եվրոպական Միության կոնցեպցիայի նախապատրաստման վերջին փուլին, ինչը իր արտացոլումը գտավ 1986թ.-ին ընդունված «Միասնական Եվրոպական ակտի» մեջ: 1986թ.-ն տեղի ունեցած պառլամենտական ընտրությունների արդյունքում ՄՇԱ-ի հաղթանակից հետո Շիրակը փորձեց իր ծեռօթը վերցնել արտաքին քաղաքականությունը: Ֆրանսիայի Սահմանադրությունը թույլ էր տալիս այս ոլորտի պատասխանատվությունը կիսել նախագահի և վարչապետի միջև: Միտերանը վճռաբար, թեև առանց առճակատման, կարողացավ պաշտպանել նախագահի իրավունքները արտաքին քաղաքականությանը վերաբերող կարևորագույն հարցերում: 1986-1987թթ.-ի ընթացքում Միտերանը իր ուժերը կենտրոնացրեց ԽՄՀՍ-ի կողմից առաջարկած խաղաղ նախաձեռնությունների աջակցությանը և Գորբաչովի հետ անձնական կապերի հաստատմանը, «Բոնն-Փարիզ»՝ որպես միասնական Եվրոպայի քաղաքական առանցքի ամրապնդմանը: Միտերանի հարաբերությունները Շելմութ Քոլի և Գորբաչովի հետ անձնական բնույթ էին կրում: Արաբական աշխարհում մեծ ռեզոնանս առաջացրեց Միտերանի՝ Ֆրանսիայի տարածքով Լիբիայի ռնճակոծման համար ամերիկյան ինքնարիունների թթչչի արգելման մասին որոշումը:

Վարչապետի իրավասությունների մեջ էին մտնում մեծ մասամբ արտաքին քաղաքականությանը վերաբերող մշակութա-

յին, ինչպես նաև տնտեսական հարցերը: Օգտագործելով Շիրակի ձգումը՝ բացահայտելու իրեն համաշխարհային ասպարեզում՝ Միտերանը զիջեց նրան մի շարք հիվանդագին հարցերում, որոնք իրենցից կտանգ էին ներկայացնում Շիրակի քաղաքական վարկանիշի համար: Այդ ռազմավարությունը Միտերանին հաջողություն բերեց: Ֆրանսիական հասարակության աչքերում հենց Շիրակը պատասխանատու գտնվեց 1986թ-ի գարնանը Զադում նոր ռազմական գործողություններ սկսելու համար: Շիրակի կարինետի ներքին գործերի նախարարությունը մեղադրվեց 1987թ-ին Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունների խզման մեջ Փարիզում ահարեկչական ակցիաներում իրանցիներին մեղադրելուց և, որպես պատասխան, Թեհրանում ֆրանսիական դիվանագետների ծերրակալումից հետո: Բացի այդ, Շիրակը և արտաքին գործերի նախարար Ռեմոնը ստիպված եղան ԱՄՆ-ի հետ ծանր բանակցություններ վարել «առևտրային պատերազմ» սկսելուց հետո:

5. Ֆրանսիայի ներքաղաքական և տնտեսական զարգացումը 90-ական թթ.



ՕՉԻ »Ի՞՞ Յ

Չնայած 1988թ-ին երկու ընտրարշավների բարեհաջող ավարտին՝ ՖՍԿ-ի շարքերում աճում էին կենտրոնախույս միտումները: Ուկարին հաջողվեց ամրապնդել իր դիրքերը «հանագոյացման» տարիներին և ծևավորել նեղիներալ բազմաթիվ հոսանքներ: Կուսակցության հեղինակավոր գործիչ Բերեգովուայի օգնությամբ Ռոկարը նույնիսկ հարց դրեց ԴՖԴ-ի ծախ ճյուղի կենտրոնամետ խմբավորումների հետ կոալիցիա ստեղծելու մասին: Միտերանը ստիպված եղավ իր ընդիմադիրին վարչապետի պաշտոն առաջարկել, բայց իր վրայից հանեց պատասխանատվությունը կառավարության գործողությունների համար: Որպես ռոկարյան խմբավորման այլընտրանք՝ ԴՖԴ -ում առանձնացավ Ժ.-Պ.Շեվեննանի գլխավորությամբ ծախ թեր, որը հանդես էր գալիս

մարզսիստական գաղափարախոսության պահպանման օգտին: Միտերանի կողմնակիցները կուսակցությունում բաժանվեցին երկու խմբի: Դրա նախադրյալը եղան 1988թ-ին տեղի ունեցած ՖՍԿ-ի նախագահի ընտրությունները, որտեղ՝ Պ.Մորուան հաղթանակ տարավ Լ.Ֆարիուսի նկատմամբ, որին պաշտպանում էր Միտերանը: Պառակտումը խորացավ 1990թ-ին կուսակցական համագումարի ժամանակ, երբ Ֆարիուսի ընդդիմադիրն էր կրթության, երիտասարդության և սպորտի նախարար Լեռնել Ժուպենը, որին պաշտպանեց Մորուան: Լ.Ֆարիուսի հոսանքը ձգուում էր պահպանել նախագահի մարտավարությունը՝ դրւս մնալ ձախերի և աջերի հականարտությունից, կազմել, այսպես կոչված, «մեծանասնության առանցքը»: Ժուպենը կոչ էր անուն արդիականացնել կուսակցական գաղափարախոսությունը սոցիալիզմի բազային արժեքների պահպանման և աջերի հետ միավորման բացառման պարագայում: Նա չէր բացառում նաև նոր կապերի հաստատումը կոնունիստների հետ: Ոոկարի կառավարությունը փորձ էր անում խուսափել սոցիալ-տնտեսական կուրսի կտրուկ շրջադարձներից: Այդպիսի քաղաքականությունը, որը նախապատվություն չէր տալիս մասնավոր ձեռներեցությանը, ինչպես նաև պետական հատվածի զարգացման համար, ստացավ «ոչ-ոչ» անվանումը: Ոոկարի կառավարության կողմից անցկացվող հանդարտ կուրսը քննադատության էր արժանանում ինչպես աջ կուսակցությունների կողմից, այնպես էլ ՖՍԿ-ում: Ընդդիմությունը հատկապես աշխուժացավ 1990թ-ին, երբ երկրում նորից տնտեսական ճգնաժամի նշաններ երևացին: Տնտեսական դրությունը սկսեց վատրարանալ մասամբ հանաշխարհային կոնյուկտուրայի, մասամբ գործարար ակտիվության պակասի հետևանքով: Չափազանց կոչտ դեֆյացիոն քաղաքականությունը, շուկայի ակտիվացման համար դրամային մեխանիզմների օգտագործումից հրաժարումը «սառեցրեցին» ֆրանսիական տնտեսությունը, բերեցին ներդրումային շուկան իներտ վիճակի: Խորնիկական խնդիր դարձավ գործազրկությունը: Նույնիսկ պաշտոնական տվյալներով այն հասավ ՅնԼ: 1990թ-ի աշնանից ՖՍԿ-ում ակտիվացավ հակառոկարյան ընդդիմությունը: Նրա առաջնորդն էր Եղիք Կրեսոնը, որը լրեց կառավարությունը՝ չիամաձայնվելով այն տնտեսական քաղաքականության հետ, որը վարում էին Ոոկարը և Բերեգովուան: Կրեսոնը նախարարի փորձ ուներ Մորուայի և Ֆարիուսի կաբինետներում, սակայն անհաջող: Չնայած դրան նախագահը հենց Կրեսոնի մեջ էր տեսնում այն անձին, որն ընդունակ կլիներ լիցքավորել ձախ կառավարությունը և, միևնույն ժամանակ, ամրապնդել կուսակցությունում նրա

դիրքերը: 1991թ-ի մայիսի 15-ին Կրեսոնը գբաղացրեց Վարչապետի աթոռը: Նա ամբիցիոն ծրագիր ներկայացրեց ֆրանսիական արդյունաբերության զարգացման համար: Նրա կողմից առաջ քաշած որոշ գաղափարները, փաստորեն, կրկնում էին տաս տարվա պատմություն ունեցող գոլիստական կոշտ հրետորությունը: Կրեսոնը հայտարարում էր ֆրանսիական արդյունաբերության բարձր տեխնոլոգիական ճյուղերի հովանավորչական պաշտպանության, ինչպես նաև Եվրոպայում և «Երրորդ աշխարհում» ագրեսիվ առևտորային եքսպանսիայի մասին: Կառավարության կազմում, որտեղից քշվել էին Ռոկարի կողմնակիցները, նա նախատեսում էր ստեղծել «տնտեսության գերնախարարություն», որը ընդունակ էր դառնալու «տնտեսական պատերազմ վարելու համար գլխավոր հրանանատարը»: Կրեսոնը ընդունեց «սողացող սեփականաշնորհման» գաղափարը՝ խրախուսելով 1991թ. պետական ծեռնարկությունների կողմից իրենց մասնաճյուղերի վաճառքը մասնավոր ընկերություններին: Վարչապետի հպարտությունն էր միջին և փոքր ծեռնարկությունների համար ընդունված զարգացման ծրագրը, որը շատ նման էր Թետչերի և Ռեյգանի գործողություններին: Սակայն Կրեսոյից չստացվեց «Երկարյա լեիի»: Նրա ամբիցիաները նյարդայնացնում էին հասարակությանը: Տարեկերջում նրա ռեյտինգը կազմում էր ընդամենը 20%: Միտերանի մոտ այն կազմեց քիչ ավել՝ 25%: Սոցիալիստական կուսակցության հեղինակության անկումը ակնառու դարձավ 1992թ-ի մարտին՝ տարածաշրջանային ընտրությունների ժամանակ: Սոցիալիստները ստացան 18%, մինչդեռ ՄՀԱՆ և ԴԺԴ -ն, որոնք դեռևս 1990թ-ին միավորվեցին «Շաշինք հանուն Ֆրանսիայի» կոնֆեդերացիայի մեջ, ստացան 30%, կոնդունիստներ՝ 8%: Նոր հաջողության հասան Լե Փենի կողմնակիցները՝ ստանալով ծայների 14%: «Ես չեմ հասկանում՝ ինչ է կատարվում կուսակցության հետ: Այն վերածվեց զրոյի: Այն այլևս գոյություն չունի», -ասում եր Միտերանը: Նախագահը ծեռնարկեց վերջին միջոցը՝ 1992թ-ի ապրիլին վարչապետի պաշտոնում նշանակելով Պիեռ Բերեգովուային: Բերեգովուան ֆարիտուի, Ռոկարի և Կրեսոնի կառավարություններում ամենապրոֆեսիոնալ նախարարներից մեկն էր: Իր կառավարության համար որպես իիմնական խնդիրներ նա հայտարարեց գործազրկության դեմ պայքարը, մասնավոր սեփականաշնորհման գործընթացի շարունակությունը, Մասսատրիխի պայմանագրի նախապատրաստումը: Սակայն ՖՍԿ-ի ջախջախումը կայանալիք պաշամնատական ընտրությունների ժամանակ նա կանխել արդեն չէր կարող: Սոցիալիստների կողմից վարած քաղաքականության ձախողումը ակնհայտ էր: Գործազրկության ա-

Ճը շարունակվում էր: Վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեի պակասորդը աճեց 90-ից մինչև 165նլոդ ֆրանկ: Արդյունաբերության աճը գտնվում էր համարյա զրոյի վրա:

1993թ-ի մարտին տեղի ունեցած պառամենտական ընտրությունները մեծ հաջողություն բերեցին աջ կուսակցություններին, որոնք հրաժարվեցին նախկին ռադիկալիզմից և իրենց ծրագիրը կառուցեցին «պատասխանատվություն» և «վստահություն» կարգախոսների, չափավոր բարեփոխումների, սոցիալական անհավասարության և գործազրկության, հանցագործության, ահաբեկչության դեմ պայքարի վրա: ՄՅԱ-ի 247 և ԴՖԴ -ի 213 պատգամավորներին գումարած նրանց աջակցող 24 պատգամավորները կազմեցին հսկայական մեծամասնություն՝ 484 տեղ 557-ից: ՖՍԿ-ն պահպանեց ընդամենը 54 մանդատ, ՖԿԿ-ն՝ 26: Ընտրությունների մեծամասնական համակարգը թույլ չտվեց պառամենտում տեղ ունենալ «Ազգային ճակատին» և էկոլոգիստներին, չնայած առաջին փուլում նրանց աջակցում էր ընտրողների 12, 4% և 7, 6% համապատասխան: Ընտրությունները անցան քաղաքացիների աննախադեպ պասիվության ներքո: Մասնակցեց ընտրողների միայն 30, 8%-ը: «Քառակուսակցական մոդելի» ճգնաժամը ակնհայտ էր: Զախ ճամբարը տապալված էր: Կոմինիստական կուսակցությունում տեղի ունեցավ դեկավարության փոփոխում: Նոր գլխավոր քարտուղար Ռոբեր Յուն ուղղություն վերցրեց դեպի ծրագրային, արմատական և կուսակցական իմիջի փոփոխման՝ կուսակցությունը ենթարկելով անխուսափելի պառակտման, և Թորեզի և Դյուկլի ավանդույթների հազարավոր կողմնակիցներ հեռացան: 1993թ-ին ՖՍԿ-ն լրեց ձախերի խմբավորումը Ժ.-Տ.Շեվեննանի գլխավորությամբ: Դա տեղի ունեցավ, երբ Լ.Ֆարիուսը հեռացվեց կուսակցության նախագահի պաշտոնից, և նրա տեղը ընտրվեց Ռոկարը: Ռոկարի բազմաթիվ հակառակորդները դա գնահատեցին որպես պութչ/հեղաշրջում/, իսկ նրա առաջարկությունը՝ ձևավորել նոր ձախկենտրոնամետ կոալիցիա էկոլոգիստների և կոմունիստ-ռեֆորմատորների հետ, առաջացրեց սուր բանավեճ Միտերանի հետ: Պառակտումը կուսակցությունում և խայտառակ պարտությունը հանգեցրին Բերեգովուայի ինքնքսապանությանը 1993թ-ի մայիսի 1-ին:

Աջ մեծամասնության կառավարությունը գլխավորեց Եղուարդ Բալայուրդը, որը երկար ժամանակ Շիրակի խորհրդականն էր ընտրաշավաների անցկացման գծով: Շիրակը մնում էր կոալիցիայի առաջնորդը, բայց պատրաստվում եր նախագահական ընտրություններին: Բալայուրդ որպես առաջնային խնդիր հայտարարեց կառավարության պայքարը գործազրկության դեմ,

սոցիալական ապահովագրման համակարգի փրկումը, որը գտնվում էր սննկացման եզրին: Նման քաղաքականության ֆինանսական բազայի ապահովման համար կառավարությունը բաց թողեց պետական պարտատոմս, որը հավաքեց 110 նլրդ ֆրանկ, բարձրացվեցին թենգինի և սպիրտի վրա անուղղակի հարկերը, «սոցկարիքների վրա» հարկը /հրանով հարկվում էին բոլոր եկամուտները/, արշավ սկսվեց պետապարատի վրա ծախսերի տնտեսվարման նպատակով: Բյուջեի եկամտային մասի ավելացման համար մեծ դեր խաղաց սեփականաշնորհման երկրորդ ալիքը: Այն սկսվեց 1993թ ամռանից և գրավեց պետհատվածի զգալի մասը: Սակայն, ի տարրերություն 1986-1987թթ անցկացրած սեփականաշնորհմանը, տեղի էր ունենում ոչ թե զանգվածային վաճառք, այլ պետական հատվածի կառուցվածքային բարեփոխում: Այնտեղ /այսինքն/ պետական հատվածում/ կենտրոնացվում էին ծեռնարկություններ, որոնք կապված էին հասարակական ծառայությունների համակարգի հետ: Կառավարությունը հրաժարվեց այսպես կոչված «պինդ միջուկների» ձևավորումից, հանեց Եվրոպական միության երկրների ներդրողների կողմից արժեթղթեր գնելու սահմանափակումները, ներդրեց արժեթղթերի ապահովված վճարման պրակտիկան: Այդ միջոցառումները թույլ տվեցին կրծատել բյուջեի պակասորոշ և ստեղծել նոր աշխատերեր /իհմնականում կապիտալ և բնակարային շինարարությունում/: Զբաղվածության աճի խրախուսման համար կառավարությունը կրծատեց նաև հարկը աշխատավարձի ֆոնդի վրա: Ֆինանսական միջոցներից մի մասը ուղղվեց հատուկ «Համերաշխության ֆոնդին», որն ստեղծվել էր գործազրկության ապահովագրման համակարգի աջակցության համար: Միաժամանակ կառավարությունը կոչտ միջոցներ կիրառեց ներգաղթի սահմանափակման, անօրինական ներգաղթածների դեմ պայքարի համար: Բոլոր այդ միջոցառումները հասարակության կողմից աջակցություն ստացան: Կառավարության օգտին էին խոսում և 1994թ-ի տնտեսական ցուցանիշները. սղաճը իջել էր մինչև 1, 8%, ՀԱՀ-ն /Համախառն ներքին արդյունք/ աճեց 2, 9%-ով, կրծատվեց բյուջեի պակասուրդը, նկատելի նվազեց գործազրկությունը: Ֆրանսիացիներին դուր էր գալիս վարչապետի անձնական իմիջը՝ նրա հավասարակշռվածությունը, վստահությունը, հեգնականությունը և նույնիսկ նրա հայտնի կարմիր գուլպաները: 1994թ-ին Բալայուրը դիտարկվում էր որպես ապագա նախագահական ընտրությունների հիմնական թեկնածու: Բալայուրը վերջնականապես հայտարարեց ընտրություններին մասնակցելու մասին 1994թ-ի դեկտեմբերին, երբ հայտնի դարձավ ՖՍԿ-ի կողմից հիմնական

թեկնածու Ժ.Դելորի՝ ընտրություններին մասնակցելոց հրաժարվելու մասին հայտարարությունը: Այդ պարագայում ՄՀԱ -ի էլեկտորատի պառակտունը այդքան էլ վտանգավոր չէր: Իսկ դա անխուսափելի էր, որովհետև փաստորեն կայանալիք ընտրություններին հիմնական հակառակորդները կլինեին ՄՀԱ-ի երկու առաջնորդները՝ Բալաբյուրը և Շիրակը /չնայած որ Բալաբյուրը հանդես էր գալիս, իբր, որպես անկախ թեկնածու/: Բալաբյուրի և Շիրակի միջև նախընտրական պայքարը ընդունեց անսպասելի բնույթ: Բալաբյուրը իր նախընտրական արշավում հենվում էր կառավարության նվաճումների վրա և խոստանում էր կուրսի շարունակություն: Սկզբից նա առաջատարի դերում էր: Այս վիճակում Շիրակը դիմում է ռիսկի. նա կտրուկ փոխում է իր նախընտրական ծրագրու՝ հանդես գալով հաճարյա որպես ձախ թեկնածու: Նա սկսում է քննադատել կառավարությունը, դիմում է ուղղակի պոպուլյատական քայլերի: Բացի դրանից, նրա դիրքերը ՄՀԱ-ում մնում էին անուր:

Ընտրությունների առաջին փուլը հաղթանակ բերեց ժուպենին: Նա հավաքեց ձայների 23, 3%: Սակայն այս հաղթանակը պայմանավորված էր աջ էլեկտորատի պառակտունով: ՄՀԱ-ի ընտրողների մի մասը իրենց ձայնը տվեցին սոցիալիստի օգտին՝ Բալաբյուր Շիրակ «եղբայրասպան» փուլից խուսափելու համար: Այս երկու քաղաքական գործիչների պայքարուն ծանր հաղթանակ տարավ Շիրակը: Նա ստացավ 20, 6%, իսկ Բալաբյուրը՝ 18, 5%: Զայների 15%-ը հասավ Լե Փենին, 8, 7%՝ Ռոբեր Ֆուլին: Երկրորդ փուլում Շիրակը հաղթեց ժուպենին և նվաճեց նախագահի պաշտոնը, սակայն արդեն շուտով նա ստիպված եղավ պատասխանատվություն կրել իր պոպուլյատական խոստումների համար:

Կենտրոնացնելով իր ճիգերը արտաքին քաղաքականության ոլորտում՝ Շիրակը վստահեց տնտեսական և սոցիալական քաղաքականությունների անցկացումը վարչապետ Ալեն Ժյուաթին, որը լիբերալիզմի և տեխնոլոգիատիզմի կողմնակիցն էր: Կառավարությունը հայտարարեց բյուջետային պակասուրդի և պետական պարտքի վերացման, ֆինանսա-արժութային համակարգի կայունացման, պետական հատվածի վերակազմակերպմանն ուղղված հետագա ճիգերի գործադրման անհրաժեշտության մասին: Սակայն արդեն իսկ կառավարության առաջին նախագիծը սոցիալական երաշխիքների՝ կենսաթոշակների և գործազրկության նպաստների կրծատման մասին դժգոհություն առաջընթաց հասարակության մեջ: Դրա հեղինակ՝ ֆինանսների և տնտեսության նախարար Ալեն Մադլենը աշխատանքից հեռացվեց 1995թ-ի

օգոստոսին: Այնուամենայնիվ ճգնաժամից հնարավոր չեղավ խուսափել: 1995թ-ին հրապարակված պետքառաջողների կենսաբոշակյահն ֆոնդ վճարումների ժամկետների ավելացման և դրանց սոցիալական արտօնությունների մի մասի վերացման մասին ժյուպեի ծրագիրը դժգոհությունների նոր ալիք առաջացրեց: Չնայած նրան, որ իրավիճակը սրվեց, ժյուպեն հայտարարեց Երկարուղային ճանապարհների Ազգային ընկերության կառուցվածքային վերակառուցման և մասնակի սեփականաշնորհման մասին: Երկարուղայինների պատասխան գործադուլը, ինչպես նաև տնտեսության մյուս ոլորտների աշխատավորների ելույթները Ֆրանսիայում 1995թ-ի նոյեմբերին քաղաքական ճգնաժամ առաջացրին: Կառավարությունը ստիպված եղավ գնալ զիջումների:

Միևնույն ժամանակ, տնտեսական և ֆինանսական պրոբլեմները լուծելու համար անհրաժեշտ էին հասարակության կողմից հանակրանք չվաելյող միջոցառումներ: Այս դրույթունուն Շիրակը դիմեց ռիսկի, ցրելով պառլամենտը: Նա հույս ուներ, որ աջերը նույնիսկ կորցնելով պատգամավորական տեղերից մի մասը, կկարողանան, այնուամենայնիվ, պահպանել ընտրողների վստահությունը և, վերջապես, անցկացնել այդքան կարևոր բարեփոխումները: Պառլամենտական ընտրությունները, որոնք տեղի ունեցան 1997թ-ի մայիս-հունիսին ավարտվեցին շատ անսպասելի: Կառավարող կուսակցությունները խոշոր պարտություն կրեցին՝ պահպանելով պառլամենտում ընդամենը 250տեղ: Սոցիալիստների առաջնորդ Լ.Ժոսպենը հաստատեց փաստորեն, որ նրա համենատական հաջողությունը նախագահական ընտրությունների ժամանակ պատահական չէր: Սոցիալիստական կուսակցությունը 252 պատգամավորներով կոմունիստների /39 պատգամավոր / և էկոլոգիստների / 7 պատգամավոր / աջակցությամբ հնարավորություն ստացավ ստեղծել կառավարության մեջամասնություն: Սոցիալիստական կուսակցության հաջողությունը պայմանավորված էր մասամբ ժյուպեի կառավարության կուրսի նկատմամբ հասարակության դժգոհությամբ, մասամբ՝ գրագետ և ակտիվ անցկացրած ընտրարջավով: Ժոսպենին հաջողվեց Երկար ժամանակից հետո միավորել ձախ թլուկը և համաձայնության գալ կոմունիստների հետ Երկրորդ փոլում համագործակցության մասին: Լե Փենը նույնպես կոչ արեց իր կողմնակիցներին Երկրորդ փոլում աջերի դեմ քվեարկել: Վերջապես ձախերին սկսեց աջակցել նաև կենտրոնամետ էլեկտորատը: Ակնհայտ էր դառնում Ֆրանսիայի քաղաքական կյանքում նոր միտումը: ԴժԴ -ի դեպի աջ թևը հեռացումից հետո կենտ-

բոնամետները գնալով սկսում են քվեարկել ոչ թե կոնկրետ կուսակցության համար, այլ, այսպես կոչված, «համագոյության» /նկատի է առնվում հակամարտող նախագահը և վարչապետը/ համակարգի համար: «Վարդա-կարմրա-կանաչների» միասնական կառավարությունը եղավ շատ գործունյա և ակտիվ: Դառնալով վարչապետ՝ Լ.Ժոսպենը դրսերեց իրեն որպես կոշտ, վճռական, բայց, միևնույն ժամանակ, նաև կշռադատ և զգուշ քաղաքական գործիչ: Գործողությունների կշռադատված, արիեստավարժ և ապագաղափարախոսականացված ոճը դարձավ նոր կարինետի հատկանիշը: Այս կուրսը ստացավ «ձախ ռեալիզմ» անվանումը: Ժոսպենին հաջողվեց գտնել այնպիսի հիվանդագին խնդիրների հավասարակշռված լուծուններ, ինչպիսին էին ներգաղթի օրենսդրության ճշգրտումը, նվազագույն աշխատավարձի բարձրացումը, զբաղվածության ընդլայնումը և այլն: Բոլոր դեպքերում կառավարությունը խուսափում էր ծայրահեղություններից և առաջարկում էր բարդ իրավիճակներից դուրսերման կառուցողական և փոխսփառունային տարրերակներ: Լրատվամիջոցները անվանեցին այս քաղաքականությունը «մարդկային դեմքով արդիականացում»: Պետական կարգավորման մեթոդների ծկուն օգտագործման օրինակ դարձավ կառավարության կողմից անցկացված հարկային քաղաքականությունը: Զնայած աջ ընդդիմության դիմադրության՝ Ժոսպենը 1997թ-ին հասավ հարկի աննախադեպ բարձրացմանը խոչոր արդյունաբերությունների եկամուտների վրա / 15%-ով / և պետական ձեռնարկություններին պատկանող «սառեցված» հաշիվներից մի քանի մլրդ ֆրանկի ուղղակի հանճանը: Այս միջոցառումները թույլ տվեցին նվազեցնել բյուջետային պակասուրդը և հանապատասխանեցնել այն եվրոպական արտաժույթի համակարգի պահանջներին: Արդեն 1998թ-ին հետևեց հարկային բեռի նվազեցում, ինչը բարձրացրեց գործարար ակտիվությունը: Ժոսպենի հաջողությանը նպաստեց արդյունաբերության արտադրության աճի սկիզբը/արդեն 1997թ-ին այն կազմեց 6, 7%, իսկ 1996թ-ին այդ ցուցանիշը կազմում էր ընդհանումը 1, 7% /, ներին պահանջարկի աճը, հանաշխարհային տնտեսական բարենպաստ պայմանները: Օգտվելով այս ստեղծված բարենպաստ վիճակից՝ Ժոսպենը հնարավորություն ստացավ օգտագործելու գործազրկության դեմ պայքարի ռադիկալ միջոցներ: Զգալի չափով ընդլայնվեցին հասարակական աշխատանքները: 2000թ-ին ուժի մեջ մտավ 35- ժամյա աշխատանքային շաբաթի մասին օրենքը, որը արգելում էր արտաժամյա աշխատանքները: Դա նպաստեց ֆրանսիական ապրանքների ինքնարժեքի աճին, սակայն թույլ տվեց ստեղծել

համարյա 100 հազար նոր աշխատատեղեր: Ընդհանուր առնամբ ժուպենի կառավարությանը հաջողվեց իջեցնել գործազրկության ճակարդակը ավելի քան 10%-ով: Երկրի տնտեսական դրության կայունացումը և բարեկիրք հարաբերությունները Շիրակի և ժուպենի միջև թուլացրին քաղաքական լարվածությունը երկրում: Սակայն «ավանդական կուսակցությունների» ճգնաժամը շարունակվում էր: 90-կան թթ-ի վերջում տեղի ունեցան աղմուկ հանած մի քանի քաղաքական սկանդալներ: Այսպես, օրինակ, հասարակությանը հայտնի դարձավ, որ Միտերանը կազմակերպել էր իր քաղաքական մրցակիցների հեռախոսային խոսակցությունների լուսները, ինչը, իհարկե, չէր կարող չափել ՖՄԿ-ի հեղինակության վրա: Բացի այդ, հայտնաբերվեց, որ միտերանյան նախկին ռազմական նախարար Շառլ Էռնյուն թուլդարական, ռումինական և սովետական հետախուզությունների լրտես էր: 2001թ-ի հունվարին դատարանի առջև կանգնեց արտաքին գործերի նախկին նախարար, Միտերանի նոտիկ ընկեր Ռոլան Դյունան, որը մեղադրվում էր կաշառակերության մեջ: Կոնունիստների առաջնորդները՝ Ժ.Մարշեն և Ռ.Յուն, մեղադրվեցին կուսակցության անօրինական ֆինանսավորման մեջ: Զնայած որ այդ գործը ավարտվեց նրանց համար հաջող կերպով, կուսակցությունը կանգնեց սնանկացման եզրին: ճգնաժամի մեջ ընկավ նաև «Հանուն Ֆրանսիայի» կոալիցիան: 2000թ-ին ժիսկար դ' Էսթենը առաջարկությունով ելույթ ունեցավ, որով նախագահական ժամկետները պետք է կրծատվեին մինչև իհնգ տարի: Այդ առաջարկությունը աջակցություն ստացավ կառավարության մեծամասնության կողմից: Քիչ անց այն ընդունվեց պաղամենտի կողմից, ինչը նշանակեց փաստորեն երկրի անցումը դեպի 6-րդ Հանրապետություն: ժուպենը իր հերթին լուրջ սխալ թույլ տվեց՝ համառորեն պնդելով Կորսիկային ազգային-քաղաքական ինքնավարության կարգավի ճակ տրամադրելու հարցում, որի արդյունքում համաձայն չլինելով վարչապետի հետ, հրաժարական տվեց ներքին գործերի նախարար Ժ.-Պ.Շեվեննանը: ճգնաժամից խուսափելու համար ժուպենը փորձեց 2000թ-ի դեկտեմբերին սահմանադրական բարեփոխում անցկացնել, որով սկզբից պարտադիր պետք է տեղի ունենային նախագահական, իսկ հետո միայն պառլամենտական ընտրությունները: Այդ ժրագիրը սուր քննադատնան ենթարկվեց Շիրակի կողմից: Այսպիսով, «խաղաղ գոյատնության» փուլը ավարտվեց:

6. Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը 90-ական թթ-ին

80-90-կան թթ-ի սահմանագծին ֆրանսիական դիվանագիտությունը մի շարք նոր խնդիրների առաջ կանգնեց: Սոցիալիստական ճանրարի փլուզումը, ԽՄՀՄ-ի հետ միասին, միանշանակ արձագանք չստացավ Փարիզում: Դեռևս Գորբաչովի օրոք Միտերանը աջակցում էր դեմոկրատացման գործընթացին, որը տեղի էր ունենում ԽՄՀՄ-ում, միևնույն ժամանակ դեմ դուրս գալով անջատողականության և ազգայնականության արտահայտմանը: Այդ իսկ պատճառով ֆրանսիական դիվանագիտությունը համառորեն աջակցում էր գորբաչովյան դեկավարությանը և չէր «նկատում» ռուսաստանյան նախագահ Բորիս Ելցինի աճող ազդեցությունը: 1992թ-ին՝ ԽՄՀՄ-ի փլուզումից հետո, Բ.Ելցինը արդեն Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնում ժամանում է Փարիզ: Բանակցությունների ընթացքում երկու կողմերը հաստատեցին իրենց ծգտումը՝ զարգացնել «վստահության և համագործակցության վրա իմանված հանձնայնության հարաբերությունները»: Սակայն նոր ռուսաստանյան ռեժիմի նկատմամբ Փարիզի նախախնամությունը պահպանվում էր: Նման դիրք ֆրանսիան գրավեց նաև Հարավսլավիայի փլուզման շրջանում: Ֆրանսիական դիվանագիտությունը դրական վերաբերմունք էր պահպանում Սերբիայի նկատնամբ նույնիսկ զինված կոնֆլիկտների սկսվելուց հետո: Երբ սկսվեց պատերազմը Բունիայում, Միտերանը վճռականորեն պահանջում էր, որ այնտեղ տեղաբաշխված խաղարարար ուժերը /նրանց մեջ կար նաև ֆրանսիական զորաբաժնի/ գործեն խիստ միայն նրանց տրված մանդատի շրջանակներում և չխառնվեն ռազմական գործողություններին: Միտերանը նույնիսկ, չնայած վտանգին, անձամբ այցելեց շրջափակված Սարայևոն:

ԽՄՀՄ-ի, իսկ հետո և Հարավսլավիայի փլուզումները ստիպեցին ֆրանսիային էակես փոխել իր արտաքին քաղաքականությունը: Միևնույն ժամանակ Փարիզը փորձում էր պահպանել իր ազդեցությունը Աֆրիկայում՝ ուղարկելով այնտեղ «Երրորդ աշխարհին» նախատեսված օգնության 60%-ը, չիրաժարվելով նաև ռազմական ներկայությունից: Չաղում ֆրանսիան ակտիվորեն աջակցեց նախագահ Խարբեկի հեռացմանը և նոր նախագահ Իդրիս Ղերիի խնդրանքով մեծացրեց իր ռազմական ուժերի ներկայությունը այդ երկրում: Սակայն այդ ժիգերը արդեն չէին կարող առաջվա պես տպավորություն գործել գլորալ քաղաքականության տեսակետից:

Միտերանը ստիպված եղավ Ֆրանսիայի տեղը գտնել միջազգային հարաբերությունների նոր համակարգում, որը բնութագրվում էր ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ազդեցության արագ աճով։ Պատերազմը Պարսից ծոցում ակնհայտորեն ցույց տվեց Եվրոպական պետությունների արտաքին քաղաքականության կախվածությունը Վաշինգտոնից։ Ֆրանսիան ստիպված եղավ նաև նախակցել հակաիրաքյան դաշինքի կողմից ձեռնարկված բոլոր գործողություններին, չնայած որ ուներ Իրաքի հետ կայուն տնտեսական և ռազմաքաղաքական հարաբերություններ։ Սկզբից Ֆրանսիան նախատեսել էր մասնակցել միայն այն ռազմական գործողություններին, որոնք ուղղված էին Քուվեյթի ազատագրմանը իրաքյան գործերից, սակայն ամերիկյան կառավարության ճնշման տակ ստիպված եղավ վերանայել նախնական ծրագիրը։ Հաջորդ տարիներին Միտերանը փորձեց գրավել ավելի անկախ դիրք։ ԱՄՆ-ի հետ հարաբերությունում նկատվեց զգալի սառեցում։ Արդեն 1991թ-ին Ֆրանսիայի նախագահը ցուցադրաբար հայտարարեց, որ ԱՄՆ-ի մասնակցությունը Եվրոպական խնդիրների, ներառյալ նախկին սոցիալիստական երկրներին օգնություն տրամադրելու որոշումներում ցանկանալի չէ։ 1992թ-ին Ֆրանսիայի և ԱՄՆ-ի միջև սկսվեց «առևտորային պատերազմ»։ Ընդառաջելով հակամերիկյան տրամադրություններին՝ ֆրանսիական կառավարությունը հայտարարեց, որ վետո կդնի իր տնտեսական շահերին հակասող ԵՏՀ-ի և ԱՄՆ-ի ցանկացած հանաձայնագրի վրա։ Խորհրդանշական էր 1992թ-ի Ֆրանսիայի և Կուբայի միջև կառուցղական հարաբերությունների հաստատումը։ Փարիզը քննադատորեն մոտեցավ «ձկուն արձագանքում» ՆԱՏՕ-ի դոկտրինայի փոփոխություններին, այդ կազմակերպության բազմազգային ուժերի ձևավորման որոշմանը և դեպի Արևելք նրա ընդլայնման հեռանկարին։ Միայն 1994թ-ին, երբ Միտերանը աստիճանաբար սկսեց նախաձեռնությունը տալ գոլիստներին, Ֆրանսիան աջակցեց «Դանագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին և արևելաԵվրոպական երկրների հետ ՆԱՏՕ-ի շփումների ակտիվացմանը։ Բայց նույն՝ 1994թ-ին Փարիզում լույս տեսավ «Սպիտակ գիրը պաշտպանության համար» անվանումով բրոշյուր, որը իրենից ներկայացնում էր նորացված ռազմական դոկտրինա, որով նախատեսվում էր ֆրանսիական միջուկային գենքի անկախ լինելու պահպանումը։ Ֆրանսիական կառավարությունը նախատեսում էր նաև հետազոտում ստեղծել միջուկային սանձահարման Եվրոպական ուժեր։ Այսիսով, կարելի է ասել, որ հիմնական չափորոշիչներով Ֆրանսիայի ռազմաքաղաքական ռազմավարությունը վերադարձավ դըգույան ավանդույթներին։



ԱՅ Ի ԲՇՅ Ի

Եվրոպական ուղղությունը շարունակում էր առաջնային մնալ Միտերանի համար: Ճենց Եվրոպական ինտեգրման ընթացքի պարագայուն Ֆրանսիան - կարող էր պահպանել համաշխարհային տերության կարգավիճակը: Միտերանը նշանակալի ներդրում ունեցավ Եվրոպական Միության ձևավորման - բանակցային գործընթացում և Մասստիկստյան համաձայնագրերի -

ստորագրման հարցում: Նա ստիպված եղավ հաղթահարել բավականին մեծ դիմադրությունը Ֆրանսիական քաղաքական էլիտան և հասարակությունը ինտեգրացման խորացման ժամանակակից վերաբերյալ պառակտվեց: Մասստիկստյան պայմանագրին կողմն էին ԴՖԴ -ն, ՄՀԱ -ի մի մասը՝ Շիրակի և Բալայուրի գլխավորությամբ, էկոլոգիստները: Դեմ դրւում եկան ՄՀԱ -ի մի մասը, ծախս սոցիալիստները Շեվեննանի խմբից, ինչպես նաև շատերը կողմունիստներից և «Ազգային ճակատից»: 1992թ -ի սեպտեմբերին տեղի ունեցած համազգային հանրաքվեի արդյունքում Եվրոպական Միության մասին պայմանագրիը վավերացվեց /«այո» ասացին 5-1% և «ոչ»՝ 49%/:

Ֆրանսիայի քաղաքական նեկավարության փոփոխումը 90-ական թթ -ի կեսին բերեց արտաքին քաղաքականության կուրսի եական ճշգրտման: Շիրակի առաջին իսկ քայլերից եղավ միջուկային գենքի փորձարկման համար արգելքի հանումը: Ֆրանսիան ակտիվորեն վերսկսեց ինտեգրումը ՆԱՏՕ -ի ռազմական կառույցի մեջ, իսկ 1996թ -ի սկզբին նույնիսկ հայտարարեց, որ մտադիր է բանակցություններ սկսել ազգային միջուկային ուժերի ընդհանուր հրամանատարությանը տրամադրելու մասին: Սակայն երբ Շիրակը հաղթեց նախագահական ընտրություններում, նա հրաժարվեց ատլանտյան կուրսից: Ֆրանսիան նորից սկսում է դատապարտել ԱՄՆ -ի գգտումը դեպի համաշխարհային գերիշխանություն և փորձեց ևս մեկ անգամ վերադառնալ անվտանգության ապահովման Եվրոպական ծրագրերին: Ֆրանս-ամերիկյան հակասությունների ամբողջ խորությունը բացահայտեց 1998թ. սկսած նոր հարավլավյան ճգնաժամը՝ կապված Կոսովոյի իրադարձությունների հետ:

Փարիզը առանց խանդավառության վերաբերվեց ՆԱՏՕ -ի կողմից անցկացված ռազմական գործողություններին և երկար ժամանակ փորձում էր կասեցնել Սերբիայի ռմբակությունը:

Պատերազմից հետո ամերիկյան գեներալները բացահայտորեն մեղադրեցին ֆրանսիացիներին ՆԱՏՕ-ի գործողություններին հակագդեցության մեջ:

Շիրակը շարունակեց իր նախորդի ջանքերը Եվրոպական ինտեգրացման բնագավառում: Չնայած տնտեսական և քաղաքական բարդություններին՝ Ֆրանսիան ձգտում էր պարտադիր ներգրավված լինել երկրների առաջին խնդրում, որոնք պետք է ձևավորեին արժութային միություն: Ի տարբերություն Մաստրիխսի պայմանագրի վավերացմանը՝ այս կարևորագույն որոշումը որևէ լուրջ քննարկումներ չառաջացրեց: Եվ ահա 1999թ-ի հունվարի 1-ին ծնվեց նոր համաԵվրոպական արժույթ՝ Եվրո, որը ֆրանսիայում փոխարինեց ազգային ֆրանկին:

Շիրակի նախագահության օրոք Ֆրանսիայի Եվրոպական քաղաքականության մեջ էական փոփոխություններ տեղի չունեցան: Կարելի է առանձնացնել միայն այն, որ Շիրակը, բացի ավանդական դարձած «Փարիզ-Բոն/Բեռլին/Ժերմ հարաբերությունների պահպանոմից, սկսեց մեծ ուշադրություն դարձնել նաև Լոնդոնի հետ հարաբերություններին, որոնք ստացան կոնստրուկտիվ բնույթ և միայն տարածայնությունները իրաքի դեմ պատերազմի հարցում /2003թ-ի ապրիլին ԱՄՆ պատերազմ է սկսում իրաքի դեմ, ինչը պառակտում է մցնում ՆԱՏՕ-ի անդամների միջև: Ֆրանսիան այդ պատերազմին դեմ դուրս եկավ, իսկ Մեծ Բրիտանիան, ընդհակառակը, պաշտպանեց/ նորից այդ պետությունները հեռացրեց իրարից:

Բացի Եվրոպական ուղղությունից, Շիրակը մեծ ակտիվությունն է ցուցաբերում նաև, այսպես կոչված, «տնտեսական դիվանագիտության» մեջ: Շիրակը իր առջև խնդիր էր դրել օգտագործել ֆրանսիական դիվանագիտությունը ազգային արդյունաբերության և առևտի շահերը պաշտպանելու համար: Միայն 1996թ-ին նա կատարեց 15 պաշտոնական այց տարբեր եկրներ, որոնց հիմնական նպատակը առաջին հերթին տնտեսական բանակցություններն էին: Լրատվական միջոցները հաշվեցին, որ տարվա ընթացքում Ֆրանսիայի կողմից կնքված տնտեսական պայմանագրերի գումարից / 100 մլրդֆրանկ /, համարյա 16 մլրդ Շիրակի վատակն է: Առանձնապես մեծ արձագանք ունեցավ Շիրակի այցը ճապոնիա 1996թ-ին, որը վերջ դրեց երկու երկրների միջև եղած լարվածությանը: Դրա ապացույցն էր նաև 1997թ-ին Ֆրանսիայում ճապոնիայի և 1998թ-ին ճապոնիայում Ֆրանսիայի տարիների հայտարարումը: ճապոնիան և Ֆրանսիան պայմանավորվեցին ոչ միայն երկողմ հարաբերությունների ընդլայնման, այլև «երրորդ երկրների» շուկաների ուսումնասիրման բնագավա-

ռում համագործակցության նասին: Նույնքան հաջող Շիրակը անցկացրեց բանակցություններ 1996թ-ին Փարիզ ժամանած Չինաստանի վարչապետ Լի Փենի հետ: Պատասխան այցը Պեկին Շիրակը կատարեց 1997թ-ին: Այս պահից սկսվեց Ֆրանսիայի և Չինաստանի միջև ակտիվ համագործակցությունը ավիաշինության, տիեզերական տեխնոլոգիաների, արդյունաբերական օբյեկտների շինարարության բնագավառներում: Դանուն Չինաստանի հետ տնտեսական կապերի պահպաննանը՝ Ֆրանսիան նույնիսկ չպաշտպանեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունված բանաձևը, որը բնադրասում էր այս բնագավառում Չինաստանի կողմից վարած քաղաքականությունը:

1997-1998թ-ից սկսած ակտիվանոն են Ֆրանսիայի հարաբերությունները նաև արաբական երկրների հետ: Նախագահի անձնական նախակցության շնորհիվ հաջողությամբ ավարտվեցին բանակցությունները Սաուդյան Արաբիայի, Միացյալ Արաբական Էմիրությունների և Միրիայի հետ՝ այդ պետություններին սպառազինումներ վաճառելու մասին: Շիրակը կողմ է Գոլանյան բարձրունքները Միրիային վերադարձնելուն և Պաղեստինյան պետության ստեղծմանը*: Շիրակը անձնական լավ հարաբերություններ ուներ Միրիայի նախկին նախագահ Յաֆեզ Ասադի հետ, որի մահը, իհարկ», շատ բացասաբար ազդեց անբողջ տարածաշրջանի քաղաքական վիճակի վրա: Բարեկամական հարաբերություններ ուներ Շիրակը Լիբանանի նշանավոր քաղաքական գործիչ, նախկին վարչապետ Ռաֆիկ Ջարիրի հետ: Ջարիրին մեծ ներդրում ունեցավ երկրում քաղաքացիական պատերազմին վերջ տալու գործում/Ջարիրին սպանվեց 2005թ. Վետրվարին Բեյրութում ահաբեկչության արդյունքում, ինչը սրեց քաղաքական դրությունը ինչպես Լիբանանում, այդպես էլ տարածաշրջանում/: Այդպիսի ջերմ հարաբերությունները շատ արաբական պետությունների հետ չեն կարող չանդրադառնալ Խորայելի հետ հարաբերությունների վրա: 90-ական թթ-ի վերջում նրանք էլ ավելի վատացան, իսկ Շիրակի այցը Խորայել թիւ էր մնում հանգեցներ դիվանագիտական սկանդալի, երբ խորայելյան հատուկ ծառայությունները փորձեցին խանգարել Շիրակին արար բնակչության հետ նրա ոչ ֆորմալ շփումների համար: Պաշտպանելով ՆԱՏՕ-ի և Եվրոպական Միության ընդլայնման

* Եթե 2004թ-ի նոյեմբերին Պաղեստինի առաջնորդ Յասիր Արաֆաթը ծանր իհվանդացավ, Շիրակը հրավիրեց նրան բուժվելու Ֆրանսիայում և նույնիսկ ինքնաթիր ուղարկեց նրա հետևից: Արաֆաթին տեղափողեցին ֆրանսիական ռազմական ուժերին պատկանող հոսպիտալում: Բայց արդեն ուշ էր. Արաֆաթին չհաջողվեց փրկել և նա շուտով մահացավ:

Ժրագրերը Ֆրանսիան 90-ական թթ-ի երկրորդ կեսին ամրապնդեց իր դիրքերը Արևելյան Եվրոպայում: Ֆրանսիական դիվանագիտությունը ակտիվ է նաև անդրկովկասայան պետություններում: Մասնավորապես Ֆրանսիան առաջին պետություններից էր, որն ճանաչեց Հայաստանի անկախությունը, հաստատեց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ և բացեց Երևանում իր դեսպանատունը: Մինչ այդ՝ 1987թ-ի հունիսի 18-ին, Ստրասբուրգում Եվրոպական պառլամենտում ընդունվեց «Հայկական հարցի քաղաքական լուծման վերաբերյալ» նշանավոր քանաձնը, որում Թուրքիայից պահանջվում էր ճանաչել ցեղասպանության փաստը, և դա հնարավոր եղավ անել, առաջին հերթին, ֆրանսիական պատգամավորների ջանքերի շնորհիվ/ հիմնականում՝ սոցիալիստների և կոմունիստների/: Ֆրանսիան դասվում է այն պետությունների շարքը, որոնք ճանաչել են 1915թ-ին տեղի ունեցած ցեղասպանությունը: Դրա վերաբերյալ պառլամենտի կողմից ընդունված հատուկ օրենքը ստորագրեց նախագահ Շիրակը: Ֆրանսիան Լեռնային Ղարաբաղի հարցով ԱՄՆ-ի և Ռուսաստանի հետ միասին Մինսկի խմբի համանախագահներից մեկն է: Հայաստանի հետ շատ լավ հարաբերություններ ունենալով՝ Ֆրանսիան միևնույն ժամանակ նորմալ տնտեսական և քաղաքական հարաբերություններ է պահպանում Արդրեշանի հետ՝ պաշտպանելով նրա «տարածքային ամբողջականության և սահմանների անփոփոխականության» սկզբունքը:

Սկզբից շատ դրական էին զարգանում հարաբերությունները Ռուսաստանի հետ: Շիրակի այցը Մոսկվա 1997թ-ի սեպտեմբերին, որը համընկավ «տնտեսական դիվանագիտության» վերելքի հետ, անցավ բացառապես բարյացական մրնուրութում: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը շտապեց Շիրակի հետ հարաբերություններին անձնական բարեկամության տեսանելիություն տալ՝ իրեն ավելի լավ զգալով «բարեկամ ժակի» շրջապատում, քան «սփինքս» Միտերանի կողքին: Նույն ոճով անցան Շիրակի և Ելցինի համբիկումները 1998թ-ին Մերձմուսկովյան վայրերում ռուս-ֆրանս-գերմանական համաժողովի և Բիրմինգեմում «ութնյակի» հանդիպման ժամանակ: Սակայն շուտով այդ բարեկամական հարաբերությունները կտրուկ վատացան: Շրջադարձային եղավ Չեչենական պատերազմի սկիզբը Ռուսաստանում, որը բացահիկ բացասաբար ընդունվեց ֆրանսիական դիվանագիտության և հասարակության կողմից: 1999թ-ի նոյեմբերին Ստամբուլում ԵԱՀԽ-ի համաժողովի ժամանակ հենց Ֆրանսիան դարձավ ռուսական հարցի վերաբերյալ կոշտ բանաձևի ընդունման նախաձեռնողը: Քիչ անց նա իր այդ դիրքորոշումը հաստատեց նաև Հելսին-

կիում տեղի ունեցած Եվրոպական Խորհրդի համաժողովի ժամանակ: Միայն 2000թ-ի հոկտեմբերին, երբ Փարիզ այցելեց Ռուսաստանի նոր նախագահ Վ.Պուտինը, երևացին ռուս-ֆրանսիական հարաբերությունների բարելավման նշանները:

Այսպիսով Ֆրանսիան Շիրակի գլխավորությամբ վարում է շատ ակտիվ արտաքին քաղաքականություն բոլոր ուղղություններով:

ՄԵՐ ԲՐԵՄԱՆԻ



ԳԼՈՒԽ ԶՈՐՈՌՈՇ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ՔԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ /1945-1950/: «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՍԿԻԶԲԸ

1. 1945թ. «Բրիտանական հեղափոխությունը»: Լեյբորիստ- ների հաղթանակը:

Երկրորդ համաշխարհային պատերազմը մեծ վնաս հասցեց Անգլիայի տնտեսությանը: Արտադրության անկումը կազմեց 10%: Պետական պարտքը, որը 1939թ. կազմում էր 7, 2 մլրդ. ֆունտ ստերլինգ, 1949թ. հավաք մինչև 23, 7 մլրդ. ֆունտ ստերլինգ, որից 3.5մլրդ. ֆունտ ստերլինգը կազմում էր արտաքին պարտքը: Իր արտասահմանյան ներդրումներից միայն 1 մլրդ. ֆ. ս. Անգլիան ստիպված եղավ փոխանցել ԱՄՆ-ին ռազմական մատակարարումների դիմաց: Մեծ կորուստներ ունեցավ անգլիական առևտրական նավատորմը: Վատացան հարաբերությունները գաղութերի հետ: Բրիտանական դրմինիոնները, որոնք Անգլիայի հետ միասին պատերազմում էին Գերմանիայի դեմ, ձգտում էին ստանալ տնտեսական և քաղաքական լիովին անկախության: Գաղութներում գնալով ընդլայնվում էր ազգային-ազատագրական շարժումը: Ընդհանուր առնամբ պատերազմի ընթացքում Անգլիան կորցրեց իր ազգային հարստության շուրջ 25 %: Սակայն բոլոր արևմտաեվրոպական երկրներից նա, այնուամենայնիվ, ամենին վատ դրության մեջ չէր գտնվում: Սարդկային կորուստները համարյա չորս անգամ ավելի քիչ էին, քան 1 համաշխարհային պատերազմի տարիներին՝ 245 000 զոհված, 278000 վիրավոր և 53000 անհայտ կորածներ: Իսկ ավերածությունները գերմանական ռմբակոծություններից իրենց մասշտարներով անհամենատեղի քիչ էին, քան նայոցանաքում: Անգլիայի հաղթանակի մեջ շատ կարևոր և մեծ դեր խաղաց կուալիցիոն կառավարությունը պահպանողական Ու. Չերչիլի ղեկավարությամբ: Այդ պատճառով շատ անսպասելի էին 1945թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած պառլամենտական ընտությունները, որոնց արդյունքում հաղթանակ տարան լեյբորիստները: Չերչիլի ձգտում՝ անցկացնել պառլամենտական ընտրությունները մինչև համաշխարհային պատերազմի ավարտը, բացատրվում էր մի քանի պատճառներով: Իշխանությունը գտնվում էր պառլամենտի ծեռքերում, որը ընտրվել էր դեռ 1935թ., և նրա լիազորությունները երկարացվում էին պատերազմի պատճառով: Սակայն իհմա, երբ Եվրոպայում պատերազմը ավարտվել էր, ընտրությունները հետաձգելու

համար արդեն պատճառ չկար: Ինքը՝ կառավարությունը, կողալիցիոն էր, «ազգային»: Չերքիլը վայելում էր ժողովրդականություն և իր ձեռքերում էր կենտրոնացրնել իշխանությունը, այնուամենայնիվ նրա ղեկավարության տակ պահպանողականները երբեք ընտրություններին չեին մասնակցել և չեին հաղթել, իսկ պահպանողական կուսակցության առաջնորդը նա դարձավ արդեն այն բանից հետո, երբ գլխավորեց կառավարությունը: Բացի այդ Չերքիլը ձգտում էր ընտրություններ անցկացնել «հաղթանակի ալիքի» վրա՝ օգտագործելով բարենպաստ հոգեբանական կլիման:

1945թ. մայիսի 23-ին Չերքիլը հայտարեց իր պաշտոնաթողության մասին և խնդրեց թագավորին ցրել համայնքների պալատը: Պահպանողականների նախընտրական կամպանիայի մեջ կենտրոնական տեղը գրադացնում էր Չերքիլի փառաբանումը: Միևնույն ժամանակ Չերքիլի ելույթներում մեծ տեղ էին գրադացնում հակալեյբորիստական և հակասովետական հարձակումները: Օրինակ՝ ելույթներից մեկում նա ուղղակի հայտարարեց, որ «ոչ մի սոցիալիստական համակարգ չի կարող ստեղծվել առանց քաղաքական ոստիկանությանը»: Եթե լեյբորիստները հաղթեն, Անգլիայում կլիմի գետապն: Իսկ Լեյբորիստների ծրագիրը տարբերվում էր իր քաղաքական արմատականությամբ: Նրանք իրենց ներկայացնում էին որպես «սոցիալիստական կուսակցություն», որի վերջնական նպատակն է «Մեծ Բրիտանիայի սոցիալիստական ընկերակցությունը»: Լեյբորիստները կողմնակից էին «խառը տնտեսությանը», կարողագույն արդյունաբերական արտադրությունների ազգայնացմանը, ինչպես նաև ակտիվ սոցիալական քաղաքականության անցկացմանը:

Ընտրությունների արդյունքը շշմեցուցիչ էր. լեյբորիստները ոչ միայն հաղթեցին, այլ նաև առաջին անգամ համայնքների պալատում ստացան բացարձակ մեծամասնություն՝ 393 տեղ, պահպանողականների 213 տեղերի դիմաց:

2. Լեյբորիստական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը: «Սառը պատերազմ» սկիզբը:

Լեյբորիստների առաջնորդ Կլեմենտ Էթլին գլխավորեց երրորդ լեյբորիստական կառավարությունը: Էթլին հաջողվեց կառավարությունում ընդգրկել փորձառու և պրոֆեսիոնալ քաղաքական գործիչներին: Վարչապետը իր դերը տեսնում էր ոչ թե ղեկավարության, այլ ավելի շատ կառավարության գործունեության կողրդինացման մեջ: Իզուր չէ, որ նոր վարչապետը սիրում էր ասել. «Ե-

թե ձեր մոտ կա լավ շուն, ինքներդ մի հաչեք»: Կառավարությունը սկսում է կյանքի կոչել նախընտրական ծրագիրը: Այսպես՝ 1946թ. փետրվարին ազգայնացվեց Անգլիական Բանկը: 1946թ.-ից մինչև 1948թ. ազգայնացվեցին երկարուղային ճանապարհները, քաղաքացիական ավիացիան, տրանսպորտը, կարելային և հեռագրային կապը, ինչպես նաև էլեկտրոտեխնիկական և ածխահանության արդյունաբերությունները: Արդյունքում պետական սեկտորում կենտրոնացվեց արդյունաբերության 20%: Դրա հետ մեկտեղ կառավարությունը բազմիցս կրկնում էր, որ մտադրություններ չունի «սոտալ ազգայնացման» քաղաքականություն անցկացնել: Սեփականության ձևությունում չափանիշը պետք է լինի առաջին հերթին տնտեսական արդյունավետության սկզբունքը: Մեծ ակտիվություն լեյբորիստական կառավարությունը ցուցաբերեց սոցիալական քաղաքականության բնագավառում: Վերականգնվեց արհմիությունների՝ գործադրության անցկացնելու իրավունքը: Ընդունվեցին օրենքներ, որոնք երաշխավորում էին ամբողջ բնակչությանը թոշակների (տղամարդիկ 65 տարեկանից, կանայք՝ 60 տարեկանից) և գործազրկության նպաստների ստացումը: Սյուրբական օգնություն պետք է տրվեր նաև մահվան, հիվանդության կան հոլիության դեպքում: Բարեփոխման արդյունքում պետության ծախսերը սոցիալական ապահովագրության բնագավառում ավելացան 2, 5 անգամ: Մտցվեց նաև անվճար բժշկական օգնություն բնակչությանը: Կարծ ժամանակվա ընթացքում կառուցվեցին ավելի քան 1 մլն. մունիցիպալ շենքեր, որտեղ պետությունը հսկողության տակ էր վեցրել վարձը, որը չպիտի անցներ պատերազմական տարիներին հաստատված չափը:

Լեյբորիստական կառավարության գործունեությունը թույլ տվեց արդեն 1948թ. հասնել տնտեսական զարգացման նախապատերազմական նակարդակին և կայունացնել սոցիալական վիճակը: Արդյունաբերական արտադրության աճը կազմում էր տարեկան 6%: Սակայն կտրուկ անցումը լայն պետական կարգավորմանը բարդացրեց նաև ավելի ծեռնարկատիրական գործունեությունը և բերեց մասնավոր ներդրումների կրծատմանը: Գնալով կառավարությունը նժվարությունների է հանդիպում իր ծրագրերի ֆինանսավորման հարցերում: Առևտրական բալանսի պասիվությունը և կախվածությունը ներմուծումից, ռազմական պարտքերի դիմաց վճարումները արագ կերպով բերում էին երկրի արժութային պաշարների կրծատմանը: Տեղի էր ունենում ֆունտ ստերլինգի արժեզրկում, ինչը իր հերթին բացասական էր ազդրում ինվեստիցիոն շուկայի վրա: Այս պայմաններում կառավարությունը ստիպված եղավ փոխառություն վերցնել ԱՄՆ-ից՝ միևնույն ժամանակ իր վրա

Վերցնելով ֆունտ ստերլինգի՝ դոլարի վրա ազատ փոխանակում մտցնելու պարտավորությունը: Դա տեղի ունեցավ 1945թ., սակայն արդեն 1946թ. ԱՄՆ-ում գները բաց թողնվեցին, ինչը բերեց արտահանվող ապրանքների կտրուկ թանկացմանը: Այդ պատճառով Անգլիան, որը ներմուծվող ապրանքների մեջ մասը ստանում էր ԱՄՆ-ից, մեկ տարվա ընթացքում ծախսեց ԱՄՆ-ից վերցրած փոխառությունը: Երկրում սկսվեց սուր ֆինանսական ճգնաժամ: Լեյբորստական կառավարությունը ստիպված եղավ 1949թ. սեպտեմբերին անցկացնել ֆունտ ստերլինգի դեվալվացիա 30, 5%: Ֆունտի արժեքը իջավ 4, 03-ից մինչև 2, 8 դոլարի: 1950թ. կառավարությունը նույնիսկ ստիպված եղավ հրաժարվել Մարշալի ծրագրին հետագա մասնակցությունից (այդ ծրագրի շրջանակներում Մեծ Բրիտանիան ստացավ 2, 3 մլրդ դոլար), որովհետև ամերիկյան օգնությունը ստանալու համար պարտադիր պայմանն էր արժուքաֆինանսական գործունեության բացարձակ ազատությունը ներքին շուկայում, իսկ դա սպառնում էր անգլիական տնտեսության կայունությանը: Իհարկե», այդ ֆունտ ստերլինգի անկումը չի կարելի համարել որպես միայն կառավարության սխալների հետևանք, սակայն ֆինանսական ճգնաժամը կտրուկ բարդացրեց երկրի տնտեսության դրությունը: Լեյբորիստական կառավարության հեղինակությունը ընկնում էր:

Եթին և նրա կառավարությունը, ինչպես նաև պահպանողականները, կողմնակից էին «ատլանտիկ համերաշխության» քաղաքականությանը: Եվրոպայի վրա սկսում է իջնել «Երկաքյա վարագույրը»: Այդ քաղաքականության սկիզբը դնում է Ու. Չերչիլը իր հայտնի ճառով, որը տեղի է ունենում 1946թ. մարտի 5-ին ամերիկյան Ֆուլբրոն քաղաքի Կեսրմիստերյան կողեզրում 30000 մարդկանց ներկայությամբ: Այդ ելույթի առիթը դարձավ Իրանում ստեղծված քաղաքական ճգնաժամը: Յանաձայն 1942թ. կնքված պայմանագրի՝ խորհրդային զորքերը իրավունք ունեին Իրանի տարածքում պատրազմից հետո մնալ ևս վեց ամիս: Ժամկետը լրանում էր 1946թ. մարտի 2-ին: Սակայն ԽՍՀՄ-ը հայտարարեց, որ դուրս կրերի իր զորքերը Իրանից, բացի իրանական Ադրբեջանի տարածքից: Արևմտյան երկրները գնահատեցին ԽՍՀՄ-ի այդ քայլը՝ որպես ադրբեջանական անջատողական ուժերին ռազմական օգնության և Իրանի տարածքի մի մասում ԽՍՀՄ-ին կողմ վարչակարգ ստեղծելու փորձ: Ըստ Չերչիլի՝ նոր աշխարհի կարգավիճակի հիմքը պետք է դառնա «ամերիկյան դեմոկրատիան»: Ամերիկյան դեմոկրատիա ասելով Չերչիլը նկատի ուներ Արևմտյանքի ընդհանուր մշակութային և բարոյական արժեքները: Նրա կարծիքով, ամբողջ քրիստոնեական քաղաքակրթությունը վտանգի մեջ էր, և ամբողջ

աշխարհին սպառնում էր բռնակալության հաստատման վտանգը: Եվ այդ սպառնալիքը գալիս էր ԽՍՀՄ-ից, խորհրդային կոմունիզմից: Չերչիլը կոչ էր ամուս բոլոր դեմոկրատական երկրներին, որ պեսզի նրանք միասնական ուժերով պաշտպանեն իրենց ազատությունը: Փաստորեն խոսքը վերաբերում էր ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ռազմաստրատեգիական դաշինքի ստեղծմանը, որը «Երկարյա Վարագույր» կիֆեցներ կոմունիստական սպառնալիքի առջև: «Երկարյա Վարագույր» տերմինը Չերչիլը առաջին անգամ օգտագործեց պառլամենտում 1945թ. օգոստոսի 16-ին իր ելույթի ժամանակ: Ֆուլքրոնյան ճառից հետո այդ հասկացությունը դաշնում է «սառը պատերազմի» խորհրդանշը: Չերչիլի ելույթը նաև նոր աշխարհայացքային փիլխովայության արտահայտումն էր, որը գնալով մեծ տարածում ամբողջ Արևմուտքում: Դրա հիմքում ընկած էր աշխարհի նոր բաժանումն երկու հակադիր համակարգերի, որոնք պատրաստ էին բախվելու իրար հետ: Եվ որպեսզի խուսափեն «տաք» պատերազմից, պետք էր անմիջապես մեկուսացնել հակառակորդին՝ սկսելով «սառը պատերազմ»: Արևմտյան երկոների համար դա նշանակում էր ԱՄՆ-ի ռազմաքաղաքական գերիշխանության ճանաչումը: Անգլիայի համար «հատուկ հարաբերությունները» ԱՄՆ-ի հետ, ինչպես նաև նվիրվածությունը ատլանտիկ համերաշխությանը, դաշնում են արտաքին հարաբերությունների համար կարևորագույն ուղղությունները: Անգլիան պետք է գտներ իր նոր տեղը աշխարհում:

Չերչիլի կողմից հրչակված կուրսը համապատասխանում էր լեյբորիստների նպատակներին: Ամերիկյան ֆինանսական օգնությունը շատ էր անհրաժեշտ Անգլիային տնտեսական և ֆինանսական զգնաժամից դուրս գալու համար: Բացի այդ, լեյբորիստները հանգիստ էին ընդունում այն հանգանանքը, որ Մեծ Բրիտանիան գնալով դաշնալու է Վաշինգտոնի «փոքր խաղընկերը»: Ի տարբերություն պահպանողականների՝ նրանք ընդունում էին «Բրիտանիայի մեծությունը»՝ որպես արդեն պատնության փակ է: Արդեն 1946թ. եթիի կառավարությունը սկզբունքորեն անցնում է ատլանտիկ համերաշխության քաղաքականությանը և ԱՄՆ-ի նախագահ Թրումենի հետ միասին դաշնում է «սառը պատերազմի» նախաձեռնողը: Չնայած ֆինանսական զգնաժամին՝ Անգլիան մեծ ուշադրություն էր դարձնում սպառազինության հարցին: Արդեն 1946թ. որոշում ընդունվեց բրիտանական ատոմային ռումբի արտադրության նախնին: 50-ական թթ. սկզբին ռազմական ծախսերը կազմեցին ազգային եկամուտի 10-11% (30-ական թթ. կեսերին այն կազմում էր ընդամենը 2, 5 %): 1949թ. ԱՄՆ-ի և Անգլիայի նախաձեռնությամբ ստեղծվեց ՆԱՏՕ-ն: Գերմանիան բաժանվեց երկու պետություննե-

ոի՝ արևանտյան մասում, որտեղ գտնվում էին Անգլիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի օկուպացիոն գոտիները, 1949թ. սեպտեմբերին ստեղծվեց Գերմանական Ֆեդերատիվ Հանրապետությունը (ԳՖՌ), իսկ արևելյան մասում, որտեղ գտնվում էին խորհրդային զորքերը, 1949թ. հոկտեմբերին՝ Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԳԴՌ): Բեռլինը նույնպես բաժանվեց արևանտյան և արևելյան մասերի: Սկզբնավորվում է Բրիտանական գաղութային կայսրության փլուզման գործընթացը: 1946թ. գարնանը լեյբորիստական կառավարությունը ստիպված եղավ Հնդկաստանին տրամադրել դրմինիոնի կարգավիճակ: 1947թ. օգոստոսի 15-ին Հնդկաստանը կրոնական հատկանիշի հիման վրա բաժանվեց երկու պետությունների՝ Հնդկաստանի և Պակիստանի, որոնք մտան Ազգերի Բրիտանական համագործակցության կազմի մեջ: Հնդկաստանի անկախությունը բրիտանական համագործակցության գարգաման մեջ նոր փուլի սկիզբ է դնում:

«Բրիտանիայի հպատակ» հասկացողությանը փոխարինում է նորը՝ «Հանագործակցության քաղաքացի»: 1947թ. սկսած «դոմինոն» տերմինը փոխարինվում է «Հանագործակցության անդամ» տերմինով («դոմինոն» տերմինը վերացավ 1952թ.): 1948թ. անկախություն ստացան 8երրորդ և Բիրման, Վերջինը, սակայն, դուրս մնաց Հանագործակցությունից: 1949թ. անկախություն է ստանում Իռլանդական Հանրապետությունը: Նույն թվականին անկախություն ձեռք բերեց Անդր-Հորդանանը: Անգլիան մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Պաղեստինի նկատմամբ, որի վրա նա մանդատ ուներ: Մինչև 2-րդ համաշխարհային պատերազմը Անգլիան իր վրա պատասխանատվություն էր վերցրել հրեա գաղթականներին «պատմական հայրենիքում» վերաբնակեցնելու համար: Սակայն Պաղեստինի անգլիական վարչության փորձը՝ հսկել հրեա գաղթականների հոսքը, ոչ մի արդյունքի շքերեց: Արաբական բնակչությունը թշնամաբար էր ընդունում հրեաներին: Անգլիական կառավարությունը, ելնելով ստեղծված վիճակից, առաջարկեց բաժանել Պաղեստինը երկու անկախ պետությունների: Սակայն այդ հարցի շուրջ լեյբորիստական կուսակցության մեջ կային լուրջ տարածայնություններ: Տեսնելով, որ այլևս արաբ-խսրանական հակամարտության դեմ ուժերը չեն բավարարում, անգլիական կառավարությունը 1947թ. փետրվարի 14-ին հայտարարեց, որ հրաժարվում է միջնորդի ներից և փոխանցում ՍՍԿ-ին: Ստեղծված դրությունից օգտվում են հրեաները: 1948թ. մայիսի 14-ին հրեաների առաջնորդ՝ Դավիդ Բեն-Գուրիոնը հշչակեց իսրաելական Հանրապետության ստեղծման մասին: Դա Անգլիայի և լեյբորիստական կառավարության արտաքին քաղաքականության նոր անհաջողութ-

յունն էր: Լեյբորիստական կառավարությունը մասնակցեց նաև կորեական պատերազմին՝ ՍԱԿ-ի դրոշի ներքո՝ կորցնելով 686 զինվոր սպանվածներով և 2498՝ վիրավորներով։ Այդ պատերազմին մասնակցելը լեյբորիստական կուսակցությանը դրական համբավ չբերեց։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ 50-70ԹԹ.

1. *Պահպանողականների կառավարումը (1951-1964 թթ.):*

1945թ. կրած պարտությունը ստիպում է պահպանողականներին արդիականացնել անգլիական պահպանողականության գաղափարախոսությունը, ինչից առաջացավ «Նոր պահպանողականություն» հասկացությունը: Նոր 30-ական թթ. Չեմբերլենի և Չերչիլի միջև պայքարի ֆոնի վրա կուսակցությունում սկսում էր կազմակորվել նոր «տեխնոլոգատու» թերթ, որի հիմքը կազմեց «Երիտասարդ պահպանողականներ» խունքը՝ Շարուլդ Մակմիլանի գլխավորությամբ: Նրանք կողմնակից էին այդպես կոչված «կազմակերպված կապիտալիզմի» ստեղծնանը, ինչը ենթադրում էր ակտիվ պետական կարգավորում՝ ինչպես արտադրության, այնպես էլ սոցիալական բնագավառում: Չերչիլը աշխատեց միավորել իր շուրջը կուսակցության նոր գախափարախոսուներին: 1946թ. տեղի ունեցավ պահպանողականների կոնֆերանսը, որտեղ բարձրացվեց կուսակցական ծրագրի բարեփոխման հարցը: Չերչիլի ագրեցության տակ «Նոր պահպանողականությունը» ընդունեց ավելի չափավոր բնույթ: Չերչիլը կողմ էր, որ կուսակցությունը կառուցի իր քաղաքականությունը՝ ելնելով արդի հասարակության իրականությունից, սակայն նա դեմ էր լեյբորիստական ռեֆորմիզմին, ինչի հիմքը հանդիսանում էր պետական կարգավորումը: «Նոր պահպանողականության» չափավոր տարրերակը դարձավ կուսակցության ծրագրի հիմքը: Այսպես՝ պահպանողականները ևս մի անգամ ճանաչում էին մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների անանցողիկ սկզբունքները: Սակայն, միևնույն ժամանակ, ընդգծվում էր պետական կարգավորման մասնակի պահպանման նպատակահարմարությունը: «Պահպանողականները համարում էին, որ լեյբորիստների կողմից անցկացվող ազգայնացման քաղաքականությունը անհրաժեշտ է վերանայել, իսկ ձեռնարկությունների արդյունավետությունը պետք է որոշվի միայն մրցակցության ճանապարհով: Պետությունն իր կողմից պետք է ապահովի ազգայնացված ձեռնարկությունների և մասնավոր ֆիրմաների միջև արդար մրցակցություն: Լեյբորիստական կուսակցությունը չկարողացավ պահպանողականների նման մշակել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման երկարատև ծրագիր, ինչը, իհարկ», թուլացնում էր նրա դիրքերը ընտրությունների շեմին: Պառլամենտական

ընտրությունները տեղի ունեցան 1950թ. փետրվարի 23-ին, որոնց արդյունում լեյբորիստները ստացան 315 տեղ, պահպանողականները՝ 298: Այսպիսով լեյբորիստները նորից ստացան կառավարություն կազմելու իրավունքը, սակայն նրանք համայնքների պալատում կորցրեցին 78 տեղ, ինչպես նաև բացարձակ մեծամասնությունը: Բացի այդ, լեյբորիստական կուսակցության ներսում սրվում են հարաբերությունները «աջ» և «ձախ» խմբավորումների միջև, ինչը և պատճառ է դաշնում, որ 1951թ. սեպտեմբերին չորրորդ լեյբորիստական կառավարությունը հրաժարական է տալիս: 1951թ. հոկտեմբերի 25-ին տեղի են ունենում նոր՝ վաղաժամկետ ընտրություններ, որի արդյունում հաղթող են դուրս գալիս պահպանողականները՝ ստանալով 321 տեղ համայնքների պալատում:

Լեյբորիստները ստացան 295 տեղ, լիբերալները՝ 6: Այսպիսով՝ պահպանողականներին հաջողվեց նաև պառամենտում բացարձակ մեծամասնության հասնել: Կառավարությունը գլխավորեց 77ամյա Ուկինստոն Չերչիլը (1951-1955թ.): Գալով իշխանության և հայտարարելով, որ անց է կացնելու «հանդուրժողականության և կոնստրուկտիվության» կուրսը, Չերչիլը, այնուամենայնիվ, արմատական փոփոխություններ կատարեց լեյբորիստների կողմից անցկացված սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ: Դեռևսելով իր նախընտրական խոստումներին՝ Չերչիլի կառավարությունը չղիմեց պետական ծերնարկությունների լայնածավալ մասնավորեցմանը: Ազագգայնացման ենթարկվեցին միայն ավտոճանապարհային տրանսպորտը և պողպատաճուլական արդյունաբերությունը: Սեփականության ձևի որոշման համար վճռական նշանակություն ուներ արտադրության արդյունավետության սկզբունքը: Արտադրությունը, թեև դանդաղ, աճում էր, նամանավանդ է՝ լեկտրական երգետիկայի, մեքենաշինության, քիմիական արդյունաբերությունները: Դրա հետևանքն էր գործազրկության նվազումը: Այսպես՝ 1953թ. գործազրկության թիվը կազմում էր 0, 5 մլն. մարդ, իսկ 1955թ.՝ 298 000: Մեծ Բրիտանիան արդյունաբերության արտադրությամբ դեռ պահպանում էր երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո: Այսպիսով կարելի է ասել, որ Չերչիլի կառավարությունը տնտեսության մեջ ակտիվ խառնվելու սուր անհրաժեշտություն չուներ: Սակայն պետության կողմից այդպիսի պասիվությունը ուներ երկրի հետագա զարգացման համար և բացասական ազդեցություն: Գիտաժեխնիկական հեղափոխության պայմաններում փոխվում էին առանձին պետությունների տնտեսական բարեկեցության չափանիշները: Տնտեսությունում կտրուկ անկումների և ճգնաժամների բացակայությունը դեռ երաշխիք չէր համաշխարհային շուկայուն

առաջատար դիրքերը պահպանելու համար: Անհրաժեշտ էր տնտեսության աճի տեմպերը մշտապես ուժեղացնել, նորագույն տեխնիկական միջոցներ ներդնել արտադրության մեջ և այլն: Այդպիսի բարդ խնդիրներ մասնավոր սեկտորը միայնակ լուծել արդեն չէր կարող: Միայն պետությունը իր հզոր ֆինանսական, ինտելեկտուալ քաղաքական կարողություններով կարող էր իր վրա վերցնել նվազ շահութաբեր, սակայն կարևորագույն ֆունդամենտալ հետազոտությունների շահագործումը, ռազմավարական մեծ նշանակություն ունեցող գիտությանը պատկանող ճյուղերի զարգացումը, որոնք պահանջում էին մեծ ֆինանսական ներդրումներ: Իսկ այդ ժամանակ Անգլիայի պահպանողական կառավարությունը այդպիսի խնդիրների լուծում չէր նախատեսում և տնտեսության մեջ ակտիվ պետական կարգավորման քաղաքականություն չէր անցկացնում՝ վախենալով վնաս տալ «ազատ ձեռնարկատիրությանը»:

Պահպանողականներին անհրաժեշտ չէր նաև սկզբունքային փոփոխություններ մտցնել արտաքին քաղաքականության մեջ: Դեռ լինելով ընդդիմության մեջ՝ Չերչիլը և Իդենը (Չերչիլի կառավարությունում նա զբաղեցրեց արտգործնախարարի պաշտոնը) մշակեցին այսպես կոչված «Երեք շրջանակների» կոնցեպցիա, որով բրիտանական արտաքին քաղաքականությունը երկրի աշխարհագրական դիրքի և պատմական ավանդույթների համաձայն պետք է կառուցվի երեք ուղղությամբ՝ ատլանտյան միություն, Եվրոպա և Բրիտանական ազգերի ընկերակցություն: 1954թ. նոյեմբերին մեծ շրեղությամբ Անգլիայում տոնեցին Չերչիլի 80 ամյակը: Սակայն տարիքը պահանջում էր արդեն գնալ հանգիստի, և 1955թ. ապրիլի 5-ին Չերչիլը էլիզարեթ II թագուհուն իր պաշտոնաթողության վերաբերյալ գրավոր խնդրանք ուղարկեց: Կառավարությունը գլխավորեց Ենտոնի Իդենը (1955-1957թթ.), որը միանգամից դիմում է անսպասելի քայլի նա ցրում է պառլամենտը՝ նշանակելով վաղաժամկետ ընտրություններ: Ընտրությունների արդյունքում համոզիչ հաղթանակ նորից տարան պահպանողականները՝ ստանալով 345 տեղ, իսկ լեյբորիստները՝ 277: Իդենի կառավարության համար առաջին ժժվարությունները սկսեցին արդեն վեց ամիս հետո: Երկրում տնտեսական զգնաժամի նշաններ սկսեցին դրսևովել և կառավարությունը ստիպված եղավ գնալ մի քանի սոցիալական ծրագրերի կրծատմանը, անուղղակի հարկերի բարձրացմանը: Այդ բոլոր ձեռնարկած միջոցները տեղին էին, սակայն հակասում էին պահպանողականների նախընտրական կանխատեսություններին: Բացի այդ, սրվում է միջազգային դրությունը Մերձավոր Արևելքում: Այդ ռեգիոնը 50-ական թթ.սկզբին դառնում է կարևորագույններից մեկը համաշխարհային քաղաքականության մեջ: Անգլիան ձգտում

Էր այստեղ ստեղծել խոշոր արաբական պետությունների մասնակցությամբ անգլիանետ ռազմաստրատեգիական բլոկ: Եվ 1955թ. Անգլիայի նախաձեռնությամբ ստեղծվեց ՍԵՆՏՕ կամ Բաղդադի պակտ ռազմաստրատեգիական բլոկը, որի մեջ մտան բացի Անգլիայից, Թուրքիան, Իրաքը, Իրանը և Պակիստանը (այդ բլոկը գոյություն ունեցավ մինչև 1978թ): ՍԵՆՏՕ-ի կազմում Անգլիան ցանկանում էր տեսնել նաև Եգիպտոսին, սակայն Նասերի կառավարությունը, որը Եգիպտոսում իշխանության գործու անցավ ազգային հեղափոխությունից հետո, ոչ միայն չմիացավ ՍԵՆՏՕ-ին, այլև 1956թ. հուլիսին հայտարարում է Սուլեյման ջրանցքի ազգայնացման մասին, որը Անգլիայի հակողության տակ էր գտնվում: Դա մեծ հարված էր Անգլիայի և նրա քաղաքական ու տնտեսական շահերին: Իդենի կառավարությունը աջակցություն չստանալով ԱՄՆ-ից՝ այնուամենայնիվ Ֆրանսիայի, որը Սուլեյման ջրանցքի բաժնետոմսերի տեր էր, և Խորայելի հետ միասին որոշում ընդունեց ռազմական գործողություններ սկսել Եգիպտոսի դեմ: Դա ուղղակի ագրեսիա էր անկախ պետության նկատմամբ: Եգիպտոսին անմիջապես պաշտպանեց ԽՄՀՍ-ը, և Խորուսչչովը Իդենին իր ուղերձում գգուշացնում է, որ եթե ագրեսիան շարունակվի ապա ԽՄՀՍ-ը պատրաստ է նույնիսկ ատոմային զենք օգտագործել: Այսպիսով, Իդենի կողմից ձեռնարկած արկածախնդրությունը երկիրը կանգնեցրեց միջուկային կոնֆլիկտի եզրին: Անգլիան և Ֆրանսիան ստիպված եղան 1956թ. դեկտեմբերի 22-ին բռնել Եգիպտոսի տարածքը: Անգլիայի և Ֆրանսիայի հեղինակությունը խստ ընկավ միջազգային ասպարեզում և հատկապես արաբական աշխարհում: Անգլիան շատ մեծ տնտեսական և քաղաքական կորուստներ ունեցավ նավթառատ և ռազմավարական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող Սերծավոր և Միջին Արևելքում: Իսկ Անգլիայի տեղը շտապեց գրադարձնել ԱՄՆ-ը, որը չեզոք դիրք էր բռնել այդ պատերազմի ժամանակ: Ինչ Վերաբերում է Անգլիայի քաղաքանությանը Եվրոպայի նկատմամբ, ապա այստեղ առաջին հերթին պետք է նշել 1954թ. հոկտեմբերին Փարիզում ստորագրված համաձայնագրերը, որոնց հիման վրա ԳՖՀ-ն նտար ՆԱՏՕ-ի մեջ (1955թ): Այսպիսով, Անգլիան համաձայնվում էր Արևմտյան Գերմանիայի Վերազինմանը: Սուլեյման գգնաժամը ծանր քաղաքական հարված հասցրեց պահպանողականներին, և Իդենի կառավարությունը հրաժարական տվեց: Մեծ Բրիտանիայի նոր վարչապետ դարձավ Ջարոլդ Սակմիլանը (1957-1963թք.), որը պետական կուրսի թարմացման կողմնակիցն էր: Նա հայտարարում է «փոփոխությունների քամիներ» լոգունգը, կոչ անելով կուսակցությանը ակտիվացնել դիմանիկ և առաջադեմ ազգային զարգացման մոդելի ստեղծման աշխատանքը: Սակայն նա

շարունակում էր վարել «Նոր պահպանողականություն» չափավոր տարբերակի քաղաքականությունը:

Պահպանողակաների համար բարենպաստ տնտեսական պայմաններում 1959թ. տեղի ունեցան պարզամենտական ընտրություններ, որոնց արդյունում պահպանողականները նորից համոզիչ հաղթանակ են տանում: Սակայն արդեն 1960-1961թթ. երկրի տնտեսության վիճակը վատացավ ֆունտ ստերլինգի նոր ուժեղ արժեզրկման պատճառով, ինչը տեղի ունեցավ արժութա-ֆինանսական միջազգային շուկայում: Սակայն ֆունտ ստերլինգի նոր անկումը բրիտանական տնտեսության ներքին խորը անհամաշափության հետևանքն էր: Չնայած որ անգլիական արդյունաբերությունը պատերազմից հետո իր զարգացման մեջ բավականին մեծ հաջողություններ էր ունեցել, սակայն նա զգայի չափով զիջում էր ԱՄՆ-ին, ԳՖԴ-ին և ճապոնիային նորագույն տեխնիկական նիշոցների ներդրումներով, ինչը բերում էր նրան, որ անգլիական ապրանքները ունեն բարձր ինքնարժեք: Բացի այդ, Անգլիան հետ էր մնում ԱՄՆ-ից, ԳՖԴ-ից և ճապոնիայից նաև արտադրության աճի տեսներով: Այստեղ գլխավոր պատճառներն էին կապիտալի ներդրումների ցածր մակարդակը, ինչպես նաև նորից նորագույն տեխնիկական նիշոցների թերոգտագործումը: Ինչպես արդեն նշվել է, հիմնական կապիտալի նորոգումը, բարձր արտադրողական տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրումը պահանջում էին զգալի ծախսեր, և այդ բարդ խնդիրները մասնավոր սեկտորը միայնակ լուծել չեր կարող, իսկ պահպանողական կառավարությունները տնտեսության պետական կարգավորումով թիւ էին զբաղվում: Անգլիայի արտադրությունը շարունակում էր կախման մեջ մնալ ներմուծումից (հումքից և պարենից) և, հետևաբար, պատրաստի արտադրանքի արտահանությունից, որը շատ դեպքերում իր ծավալներով ավելի թիւ էր, քան ներմուծումը, իսկ դրա հետևանքներն էին՝ բյուջեի դեֆիցիտը և արժեզրկումը: Պետք է նաև հաշվի առնել, որ Անգլիայի տնտեսության համար շատ ծանր հետևանքներ ունեցավ նրա զաղութային կայսրության փլուզումը: Անգլիան չկարողացավ նաև լիարժեք մասնակից դառնալ եվրոպական ինտեգրացիոն գործընթացին: Մի կողմից նա վախենում էր, որ, դառնալով եվրոպական տնտեսական համագործակցության անդամ, նրա կապը համագործակցության երկրների հետ կարող էր թուլանալ, իսկ մյուս կողմից, Անգլիան, համուն եվրոպական շահերի, չեր ուզում հրաժարվել ԱՄՆ-ի հետ հաստատված «հասուլկ հարաբերություններից»: Ի հակակիո «Ընդհանուր շուկայի»՝ Անգլիան 1960թ. ստեղծեց «Ազատ առևտորի եվրոպական ասոցիացիան», որի կազմի մեջ մտան այն արևմտաԵվրոպական երկրները, որոնք դուրս էին

մնացել «ընդհանուր շուկայից» (Շվեյխա, Դանիա, Ավստրիա, Շվեյշարիա, Նորվեգիա, Պորտուգալիա): Սակայն այդ կազմակերպությունը չկարողացավ արժանի նրանքից դառնալ «ընդհանուր շուկային» և շուտով լուծարվեց: Շարունակվում էր Մեծ Բրիտանիայի գաղութային կայսրության փլուզման գործընթացը: Անգլիան ճանաչեց Մալյահ, Սինգապուրի, Կիպրոսի, Մալթայի, Նիդերլանդի, Հարավային Ռոդեզիայի, Հարավային Աֆրիկայի անկախությունը:

1963թ. հոկտեմբերին ծանր հիվանդության պատճառով Մակմիլանը պաշտոնարող եղավ, և Անգլիայի նոր վարչապետ դարձավ Ալեկ Շուգլաս-Ջյումը (1963-1964թթ.): Շուգլաս-Ջյումի վարչապետ դառնալը կապված էր բրիտանական պետականության իրավագիտական հիմքի մեջ տեղի ունեցած կարևոր փոփոխությունների հետ: Դեռ 1958թ. Մակմիլանի կառավարությունը լորդերի պալատի բարեփոխում անցկացրեց: Ընդունվեց ցմահ պերերի մասին ակտը: Այսուհետև ցմահ պեր կոչումի շնորհումը նայվում էր որպես անձնական մեծ արժանիքների ճանաչում: Վերին պալատը համալրվում էր արժանի քաղաքական և հասարակական գործիչների հաշվին: Այս բարեփոխումը ունեցավ շարունակություն: 1963թ. նորից Մակմիլանի նախաձեռնությամբ ընդունվեց պերերի մասին ակտը, որով ցմահ պերերը իրավունք էին ստանում իրաժարվել այդ տիտղոսից: Բանն այն էր, որ սկսած XXդ. սկզբից՝ վարչապետը որպես կանոն պետք է լիներ համայնքների պալատից, որովհետև ավանդույթի համաձայն՝ լորդ իրավունք չուներ մտնել ներքին պալատ: Այսպիսով, հեղինակավոր քաղաքական գործիչները պահպանողական կուսակցությունից, որոնք ունեին պերի տիտղոսը, այսուհետև իրավունք ստացան հավակնել վարչապետի պաշտոնին: Լորդ Շուգլաս-Ջյումը առաջիններից էր, ով օգտվեց այս իրավունքից և, իրաժարվելով պերի տիտղոսից, դարձավ Անգլիայի վարչապետ, ճիշտ է շատ կարծ ժամանակվա ընթացքում: Շուգլաս-Ջյումի վարչապետության ժամանակ Բրիտանիայի տնտեսական և քաղաքական կյանքում եական փոփոխություններ տեղի չունեցան: Անգլիայի տնտեսությունը զարգացման տեմպերով շարունակում էր զիջել արևմուտքի մի շարք երկրներին: Օրինակ՝ 50-60-ական թթ. Մեծ Բրիտանիայի արդյունաբերական արտադրանքի միջին տարեկան աճը կազմում էր ընդամենը 3%, ԱՄՆ-ում՝ 4%, ԳՖՀ-ում և Իտալիայում՝ 7, 4 %, Պորտուգալիայում՝ 6, 2%, Իսպանիայում և Հունաստանում՝ 7, 5%, ճապոնիայում՝ 15, 2%: Կրկնուտքի առաջատար երկրներից Անգլիան ուներ նաև կրթության մակարդակի ամենացածր ցուցանիշը: Աշխատանքի շուկայում գոյություն ուներ ցածրորակ աշխատավորների ավելցուկ: Անգլիացիները հիվանդագին էին

ընդունում իրենց երկրի միջազգային հեղինակության անկումը, զարգացման տեմպերի նվազումը, Արևմուտքի առաջատար երկրների մեջ դեպի երկրորդ շարք հետսահումը: Նամանավանդ աճգլխացիների համար վշտացուցիչ էր այն հանգանաճը, որ երեկվա հակառակորդները՝ Գերմանիան, ճապոնիան, Իտալիան, տնտեսական մեծ վերելք էին ապրում: Անգլիացիներից շատերը բոլոր անհաջողությունների մեջ սկսում են մեղադրել պահպանողականներին, իսկ, լեյբորիստները ուղղակի ասում էին որ Անգլիան «իզուր տեղը 13 տարի կորցրեց»:

2. Դարուդ Վիլսոնի լեյբորիստական կառավարությունը (1964-1970թթ.):



і CleáY

50-ական թթ. վերջում տեղի ունեցավ փոփոխություն լեյբորիստական կուսակցության ղեկավարության մեջ: 1963թ. կայացած ներքին կուսակցական ընտրությունների ժամանակ հաղթեց Դարուդ Վիլսոնը, որը նախկինում օքսֆորդում տնտեսագիտություն էր դասավանդում: Վիլսոնը «գիտության և տնտեսական պլանավորման միացման» կողմնակից էր՝ համարելով, որ դա ոչ միայն կառողջացնի բրիտանական տնտեսությունը, այլ նաև միակ ճիշտ ճանապարհն է դեպի սոցիալիզմի հիեալների լիակատար հաղթանակը: 1964թ. հրապարակ հջավ լեյբորիստների նախընտրական ծրագիրը, որտեղ ամփոփվում էին «տեխնոկրատական հեղափոխության» հիմնական գաղափարները: Պետությունը համարվում էր գիտա-տեխնիկական հեղափոխության հիմնական շարժիչը: Լեյբորիստները ընդունում էին բրիտանական արդյունաբերության բազմակողմանի նողերնիզացման և ֆինանսաբյուջետային համակարգի ամրապնդման անհրաժեշտությունը: Ներքական պառլամենտական ընտրությունները տեղի ունեցան 1964թ. հոկտեմբերի 15-ին, որոնց արդյունքում լեյբորիստները ստացան 317 տեղ, պահպանողականները՝ 303 տեղ: Վիլսոնը, դառնալով վարչապետ, ընգծում էր, որ կառավարությունը գրադՎելու է տնտեսական զարգացման հարցերով, «ռեալ քաղաքականությունվ»: Նա հայտարարեց, որ «վերացակ գաղափարախոսության դարաշրջանը»՝ իրաժարվելով լեյբորիստներին բնորոշ սոցիալիստական դարձվածաբանությունից (ֆրազերլոգիայից): Անենադժվար արորելում, որի հետ հանդիպեց Վիլսոնի կառավարությունը, վճարային հաշվեկշռի խրոնիկական պակասուրդն էր (դեֆիցիտը) և սղաճը

(ինֆյացիա): Օրյեկտիվորեն գոյություն ուներ երկու ճանապարհ պրոբլեմը լուծելու համար՝ ազգային դրամի արժեզրկում (դեվալվացիա) կամ կոչտ դեֆյացիոն քաղաքականություն, որը նախատեսում էր գործարարական ակտիվության և դրամային շրջանառության մասշտաբների սահմանափակում: Սկզբից Վիլսոնի կառավարությունը ընտրեց երկրորդ տարրերակը: Դեֆյացիոն քաղաքականության շրջանակներում կառավարությունը ավելացրեց տուրքեր ապահովագրության և բենզինի վրա, իսկ 1965թ. գարնանից ավելացավ շահութահարկը: Կառավարությունը դիմեց նաև աշխատավարձերի և գների բարձրացման կասեցմանը: Այսպես՝ աշխատավարձը տարեկան կարող էր ավելանալ 3, 5%, ոչ ավել, իսկ գները՝ բարձրանալ՝ 4%-ից ոչ ավել: Բայց դեֆյացիոն քաղաքականությունը կարող էր էֆեկտիվ լինել միայն պետական բյուջեյի սպառնան մասի կրծատման պայմանով: Սակայն լեյբորիստները ստիպված եղան հաշվի առնել սեփական էլեկտորատի շահերը և այն խոստումները, որոնք նրանք տվել էին նախընտրական փուլում: Այս վիճակում Վիլսոնի կառավարությունը չհամարձակվեց կրծատել բյուջետային ծրագրերը: Յակառակը՝ 1964թ. վերջում կառավարությունը բարձրացրեց թոշակները, սկսեց մեծածավալ մունիցիպալ տների կառուցումը: Կառավարության կողմից անցկացված այդպիսի հակասական քաղաքականությունը կարող էր բերել վճարման հաշվեկշռի նոր պակասուրդի առաջացմանը: Վիլսոնը համարում էր, որ այդ վտանգից կարելի է խուսափել՝ ունենալով տնտեսական արագ աճ: Բացի այդ, նա զգուում էր ամրապնդել տնտեսության պլանավորման սկզբունքը: Տնտեսության զարգացման համար ստեղծվեց հատուկ Ազգային խորհուրդ, որը 1965թ. պատրաստեց հինգ տարվա համար «Ազգային տնտեսական պլան»: Նախատեսվում էր տարեկան 4-5% արտադրության աճ, գործազրկության վերացում: Կառավարությանը հաջողվեց 1965թ. ընթացքում պահպանել երկրում կայուն տնտեսական վիճակ, ինչը թույլ տվեց Վիլսոնին 1966թ. փետրվարի 28-ին խնդրել թագուհուն ցրել պառամենտը և նշանակել նոր ընտրություններ, որոնք տեղի ունեցան մարտի 31-ին: Լեյբորիստները համայնքների պալատում ստացան 364 տեղ, պահպանողականները՝ 253 տեղ, լիբերալները՝ 12 տեղ: 1966թ. երկրորդ կեսից երկրում նորից սկսվում է սղաճ (ինֆյացիա), ինչը իր հերթին կարող էր բերել ֆինանսական և տնտեսական ճնշաժամ: Վիլսոնի կառավարությունը փորձ էր անում բոլոր միջոցներով պայքարել արժեզրկման դեմ և թույլ չտալ ֆունտ ստերլինգի անկումը: 1966թ. երկրորդ կեսին ծեռնարկվեցին մի շարք միջոցներ, որոնք գնահատվեցին որպես «ամենակոշտ դեֆյացիա 1949թ. հետո»: 40% բարձրացվեցին ավտոմեքենաների

գները, ընդհանուր առմամբ 10%-ով ավելացան անուղղակի հարկերը ալկոհոլային խմչքների, նավթի և բենզինի, փոստային ծառայությունների վրա: Կրճատվեցին պետության կողմից ֆինանսական ներդրումները ազգայնացված արդյունաբերական ճյուղերի մեջ, նոցվեցին լրացուցիչ սահմանափակումներ աշխատավարձի և գների բարձրացման համար, կրճատվեցին շատ բյուջետային ծրագրեր և այլն: Բացի այդ, կառավարությունը փորձում էր լավացնել երկրի վճարման հաշվեկշիռ ապրանքների արտահաննան հաշվին: Այստեղ դրական մեծ դեր կարող էր խաղալ Մեծ Բրիտանիայի ընդգրկումը Եվրոպական «ընդհանուր շուկայի» մեջ: 1967թ. մայիսին Դանիայի և Նորվեգիայի հետ միասին կառավարությունը դիմում պատրաստեց Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) մեջ մտնելու խնդրանքով: Սակայն Ֆրանսիան կտրականապես դեմ էր, և Անգլիան մերժում ստացավ: ԵՏՀին անդամակցելու նոր փորձի ծախողումը ժամանակով համընկավ միջազգային դրության սրման հետ: 1967թ. հունիսին տեղի ունեցավ «Վեցօրյա պատերազմ» իսրայելի և Եգիպտոսի միջև, որի հետևանքն էր համաշխարհային շուկայի ապակայունացումը: Արաբական երկրների կողմից մի քանի անհսների ընթացքում էնքարգո դրվեց Անգլիա նավթի ներմուծման վրա, ինչը շատ բացասական ազդեցություն ունեցավ բրիտանական արտաքին առևտորի համար: Այդ ծանր վիճակից դուրս գալու համար Վիլսոնի կառավարությունը ստիպված եղավ գնալ ազգային դրամի դեվալվացիայի: 1967թ. նոյեմբերի 18-ին հայտարարվեց, որ ֆունտ ստերլինգի կուրսը իջնում է 14, 3%-ով: Սակայն, մյուս կողմից, ֆունտ ստերլինգի դեվալվացիան կարող էր աշխուժացնել արտադրությունը, որովհետև տեղի էր ունենում բրիտանական ապրանքների ինքնարժեքի իջնում, ինչը իր հերթին պետք է դրդեր արտահանման ծավալների ընդլայնումը և ներմուծման էժանացումը: Բայց այդ ծրագրի իրականացումը կախված էր բրիտանական արդյունաբերության զարգացման տեմպերն ուժեղացնելուց: Անհրաժեշտ էին նոր, լրացուցիչ ֆինանսական ներդրումներ, ինչը կառավարությունը հնարավորություն չուներ անելու: Այդ պատճառով կառավարությունը ստիպված եղավ դիմել Միջազգային արժույթի ֆոնդին և կատարել նոր կողմից ներկայացրած մի շարք պահանջներ: Կրճատվեցին բյուջետային ծախսերը ոչ արտադրական պահանջների վրա, բարձրացվեցին հարկերը բենզինի, սիգարետների, վիսկիի վրա: Ֆինանսական և քաղաքական աջակցություն էին ստանում առաջին հերթին խոշորագույն բրիտանական մենաշնորհները, որոնք կարող էին մոցակցել համաշխարհային շուկայում: Վիլսոնի կառավարության կողմից վարած ծիշտ տնտեսական քաղաքականության շնորհիվ երկրի վճա-

րային հաշվեկշիռի դեֆիցիտը կրճատվեց: 1968թ. Վարչապետը նույնիսկ խոսեց ապագա տնտեսական հրաշքի մասին, ինչը, իհարկ», մեծ չափազանցում էր, որովհետև Մեծ Բրիտանիան շարունակում էր տնտեսական զարգացման տեմպերով հետ մնալ Արևոտքի մյուս առաջատար երկրներից:

Պետք է նշել, որ Վիլսոնի կառավարությունը 60-ական թթ. վերջում ընդհարվեց այդպիսի սոցիալական պրեբլեմների հետ, որոնք բնորոշ էին ոչ միայն Անգլիայի, այլ նաև անբողջ արևմտյան երկրների համար: Խոսքը վերաբերում է ուսանողական և հակապատերազմյան շարժումների ռարիկահզարմանը: Առաջացավ այլընտրանքային (ալտերնատիվ) երիտասարդական մշակույթ, տեղի ունեցավ այդպատես կոչված սեքսուալ հեղափոխություն: Անգլիայում, օդինակ 1967թ. ընդունվեց օրենք, որով օրինականացվում էին հոնոսեքսուալ հարաբերությունները:

1960-ական թթ. վերջին Անգլիան հայտնվեց իին պրոբլեմի առօն: Դա Օլսթերի հարցն էր, ավելի ծիչո՞ւ՝ կրոնաքաղաքական սուր ընդհարում տեղի ունեցավ Յուլսիսային հոլանդայում, որը փաստորեն որոշեց Վիլսոնի կառավարության ճակատագիրը: Սկսած 1921թ. Օլսթերում անգլիացիների նպատակասլաց քաղաքականության հետևանքով լուրջ ժողովրդագրական փոփոխություններ տեղի ունեցան: Տեղի բնակչությունը՝ կարողիկ հոլանդացիները, կազմում են բնակչության 1/3, իսկ 2/3-ը՝ բողոքականներ էին՝ հիմնականում շոտլանդացիները և ուելսցիները: Իոլանդացիները Օլսթերի համեմատաբար չունենոր և բողոքականների համեմատությամբ արհամարհված և իրավագործկան մասն էին: Այս հոլի վրա ծագեց Օլսթերի կարողիկ բնակչության պայքարը քաղաքացիական իրավունքների համար, որը, իհարկ», զուտ կրոնական չէր և ուներ ազգային ու սոցիալական երանգավորում: Կրոնական հողի վրա բախումները հաճախակի են դառնում 1968թ. և իր գագաթնակետին են հասնում հոկտեմբերին, երբ Լոնդոնի հերիում խոշոր ընդհարումներ եղան ոստիկանության հետ: 1969թ. օգոստոսին կառավարությունը ստիպված է լինում Յուլսիսային հոլանդայի տարածք մտցնել բանակային զորամասեր: Ի պատասխան դրան՝ հոլանդայի Ազգատագրական հանրապետական զաղտնի բանակը ծավալեց ահարեկչական գործողություններ: Այսպիսին էր տնտեսական և քաղաքական դրույթունը, երբ 1970թ. հունիսի 18-ին տեղի ունեցան պառականենտական ընտրություններ, որոնց արդյունքների վրա մեծ ազդեցություն ունեցան Օլսթերի իրադարձությունները: Յաղթեցին պահպանողականները՝ սուանալով 330 տեղ, իսկ լեյբորիստները ունեցան 287 տեղ:

3. Եղվարդ Շիրի պահպանողական կառավարությունը (1970-1974թթ.):



ԹՀԱ Կառավարությունը գլխավորեց պահպանողական կուսակցության նոր առաջնորդ Եղվարդ Շիրը, որը պատկանում էր «նոր պահպանողականեր» հոսանքին:

Ի տարբերություն լեյբորիստների՝ «նոր պահպանողականները» չէին տեսնում պետության մեջ այն ուժը, որը կարող էր իր վրա վեցցնլ ամբողջ պատասխանատվությունը հասարակական զարգացման պրոբլեմների լուծման համար: Նրանք անհրաժեշտ էին գտնում նյութական և սոցիալական պայմաններ ստեղծել կոնկրետ նարդու բարեկեցության համար: Դրան հասնելու համար, որպես կարևորագույն միջոց, պահպանողականները հաճարում էին սեփականատերերի կատեգորիայի ընդլայնումը, որովհետև սեփականությունը, նրանց կարծիքով, ապահովում է անձի իսկական ազատությունը և անկախությունը և դրա հետ մեկտեղ ստեղծում է նաև անհրաժեշտ պայմաններ հասարակության ստեղծագործական զարգացման համար գիտատեխնիկական հեղափոխության ժամանակաշրջանում: Կառավարության առջև խնդիր էր դրվում կրօնատել պետական ծախսերն առաջին հերթին սոցիալական բնագավառում և, միևնույն ժամանակ, ամեն կերպ օգնել մասնավոր հատվածին: Հետևելով այդ քաղաքականությանը՝ 1973թ. անցկացվեց բարեփոխում առողջապահությունը և երկու սեկտորները՝ պետականը և մասնավորը, միավորվեցին՝ ստեղծելով միասնական ազգային առողջապահության ծառայություն, որտեղ գնալով տարածվում էին շուկայական հարաբերությունները: Մ. Թետչերի գլխավորությամբ անցկացվեց նաև բարեփոխում կրթության բնագավառում, որտեղ ուշադրություն էր դարձվում մասնավոր կրթությանը: Նա շարունակում էր մնալ էլիտար, իսկ բյուջետային ծախսերը պետական դպրոցների համար զգալի չափով կրօնատվեցին: Կրօնատվեցին նաև բյուջետային ծախսերը մունիցիպալ շինարարության համար և, միևնույն ժամանակ, զարգանում էր մասնավոր շինարարությունը, ինչի համար կառավարությունը ստեղծում էր բարենպաստ պայմաններ:

Սոցիալական ծրագրերի կրօնատումը Շիրի կառավարությունը անց էր կացնում «ազատել տնտեսությունը պետության ավելորդ ազեցությունից» կարօպախոսով: Այդ նույն գիծը իրականացվում էր նաև արդյունաբերությունում, որտեղ կառավարությունը ապագայնացման քաղաքականություն էր վարում: Շիրի կառավարութ-

յունը միջոցներ ձեռնարկեց հարկային համակարգի բարեփոխման գործում: Կրօնատվեցին ուղիղ և ավելացան անուղղակի հարկերը, ինչը պետք էր խթաներ տնտեսության «ռեալ հատվածը»: Իջեցվեց նաև խոշոր մենաշնորհների համար սահմանված շահութահարկը: Կառավարությունը հրաժարվեց լայնածավալ ծրագրերից, որոնք ուղղված էին գործազրկության դեմ պայքարելուն: Աստիճանաբար վերացվում էին լեյբորիստների կողմից եկամուտների և գների վրա վերահսկման մասին բոլոր ընդունված որոշումները: Սակայն Յիթի կառավարությանը այդպես էլ չհաջողվեց գտնել արդյունավետ միջոցներ սղածի դեմ պայքարելու համար, իմը նորից բերեց վճարային հաշվեկշիռ պակասուրդին: Բացի այդ, Մեծ Բրիտանիայի դիրքերը համաշխարհային շուկայում, չնայած արդյունաբերության արտադրության աճի դրական դինամիկայի, շարունակում էին վատանալ: Նրա բաժինը համաշխարհային արտահանման մեջ 1973թ. իջավ մինչև 6, 6%: 1973թ. հուվարի 1-ից Մեծ Բրիտանիան Դանիայի և Իռլանդիայի հետ միասին դարձավ Եվրոպական համագործակցությունների համակարգի լիարժեք անդամ: Սակայն այդ քայլի տնտեսական արդյունավետությունը պետք է երևար միայն մի քանի տարի հետո: Իրավիճակը Յյուսիսային Իռլանդիայում շարունակում էր մնալ բարդ: Անգլիական զորաբաժնը, որը տեղակայված էր Օլսթերում, գնալով ընկալվում էր կարողիկ փոքրանասնության կողմից որպես Օկուպանտների բանակ: 1972թ. Յիթի կառավարությունը Յյուսիսային Իռլանդիայում նտցնում է ուղիղ կառավարման վարչակարգ: 1972թ. դեկտեմբերի 30-ին անգլիական զորքերը կարողիկների վրա կրակ բացեցին Լոնդոնիների քաղաքում, ինչի հետևանքով սպանվեց 13 մարդ: Ի պատասխան Իրլանդիայի մայրաքաղաք Դուրլիխում զայրացած ամրոխը ներխուժեց և այրեց անգլիական դեսպանատունը: Այս պահից իրլանդական գաղթնի բանակը հրաժարվում է զինադադարից և ահաբեկչական պատրազմ է սկսում անգլիական կառավարության դեմ: Միայն 1972-1975թթ. Յյուսիսային Իռլանդիայում զոհվեցին 475 մարդ: Յիթի կառավարությունը լարվածությունը թուլացնելու համար որոշում է 1973թ. մարտի 8-ին Յյուսիսային Իռլանդիայում հանրաքվե անցկացնել հետևյալ հարցադրումով՝ համաձայն են Յյուսիսային Իռլանդիայի բնակչիները, որ Օլսթերը անջատվի Մեծ Բրիտանիայից և միավորվի Իռլանդական Հանրապետության հետ: Սակայն այդ քայլի քաղաքական էֆֆեկտը մինիմալ էր, որովհետև, բնականաբար, բողոքական մեծանասնությունը դեմ քվեարկեց, իսկ կարողիկ փոքրանասնությունը ընդիանրապես դիմեց բոյկոտի, որովհետև նախապես ամեն ինչ պարզ էր: Այսպիսով, պահպանողականների

ժամանակ Օլսթերի պրոբլեմը ոչ միայն չլուծվեց, այլ ավելի բարդացավ:

1973թ. վերջուն բրիտանական տնտեսությունը նոր ցնցուն ապրեց: 1973թ. հոկտեմբերին ՕՊԵԿ-ը աննախաղեա որոշում է ընդունում նավթի գինը բարձրացնելու մասին՝ 3 դոլարից մինչև 11, 65 դոլար մեկ բարելի համար: Այդ քայլը արևանտյան երկրների տնտեսությունները կանգնեցրեց գլոբալ էներգետիկ ճգնաժամի եզրին: «Նավթային շոկը» ոչ միայն բերեց հսկայական վնասներ, արտադրության աճուրս, ներդրումների կրծատում, այլ նաև ստիպեց որոշ ժամանակով վերակառուցել արտադրության ամբողջ տեխնոլոգիական բազան: Այդ գործընթացը ձգվեց մոտ տաս տարի և դարձավ ինդուստրիալ տնտեսական մոդելի կառուցվածքային ճգնաժամի պատճառը: Սակայն առայժմ էներգետիկական ճգնաժամի հետևանքով բարձրացավ համարյա բոլոր արտադրանքի ինքնարժեքը, ինչից հետո կտրուկ բարձրացան մեծածախ և մանրածախ գները: Բնակչության վճարումնակությունը իր հերթին կտրուկ ընկել էր, ինչը վերարտադրության ճգնաժամի սպառնալիք ստեղծեց երկրում: Այսպիսով, Մեծ Բրիտանիան, որը իր նավթի պահանջների 2/3 ապահովում էր Միջին Արևելքի ներմուծման միջոցով, հայտնվում է այն երկրների ցուցակում, որոնք ամենաշատ կորուստներ ունեցան «Նավթային շոկից»: Այս տնտեսական և ներքաղաքական բարդ վիճակում Նիքոլ որոշում է ընդունում անցկացնել վաղաժամկետ պառանանենտական ընտրություններ: Ընտրողները պետք է որոշեին, թե ում են իրենք վստահում երկիրը ճգնաժամից դուրս բերլու համար:

4. Դարույղ Վիլսոնի լեյբորիստական կառավարության (1974-1976թթ.) և Թեյմս Քաղաքամի կառավարության (1976-1979թթ.) քաղաքականությունը:



Ժ. Կալանջան
Մարտի 4-ին և

1970թ. կրած պարտությունից հետո լեյբորիստական կուսակցության ղեկավարությունը որոշեց վերադարձնալ կուսակցության համար ավանդական «ձախ» քաղաքականությանը: Եվ հիմա էլ լեյբորիստների նախընտրական ծրագիրը կրում էր ռադիկալ բնույթ:

Ծրագիրը նախատեսում էր անցկացնել լայն ազգայնացում, պետական կարգավորման համակարգի ամրապնդում, ռազմական ծախսերի կրծատում: Ընտրությունները կայացան 1974թ. բերեցին հետևյալ արդյունքներ՝ լեյբորիստները

ստացան 301 տեղ, պահպանողականները՝ 296 տեղ: Այսպիսով, ոչ
մի կուսակցություն համայնքների պալատում չստացավ բացար-
ձակ մեծամասնություն: Յիթի՝ լիբերալների հետ կոալիցիոն կառա-
վարություն ստեղծելու փորձերը ավարտվեցին ապարդյուն, որից
հետո նրա կառավարությունը հրաժարական տվեց, և Վիլսոնը կազ-
մում է իր նոր լեյբորիստական կառավարությունը: Զգտելով ամ-
րապնդել իր դիրքերը՝ Վիլսոնը մի քանի ամիսների ընթացքում
անցկացրեց մի շարք միջոցառումներ, որոնք համընկնում էին նա-
խնատրական խոստումների հետ. բարձրացվեց հանքափորների
աշխատավարձը, ավելացան թշչակները, «սարեցվեցին» ժամա-
նակավոր գները պարենային ապրանքների վրա: Օգտվելով երկ-
րում ստեղծված ներքաղաքական և տնտեսական բարենպաստ
պայմաններից՝ Վիլսոնը խնդրում է բագուհուն ցրել պառլամենտը և
նշանակել նոր վաղաժամկետ ընտրություններ, որոնք և տեղի են
ունենում 1974թ. հոկտեմբերի 10-ին: Ընտրությունների արդյուն-
քում լեյբորիստներին հաջողվում է նվաճել պառլամենտում բա-
ցարձակ մեծամասնություն՝ 319 տեղ, 296 տեղերի դիմաց, որոնք
ստացել են պահպանողականները: Լեյբորիստների ծրագրի մեջ
տեղ գտավ միայն մեկ նոր դրույթ, որը առաջարկել էր կուսակցութ-
յան նախագահ Ջեյմս Քալաֆիանը: Այն կոչվեց «սոցիալական
կոնտրակտ», որը ենթարկում էր արիմիությունների և կառավա-
րության միջև սերտ համագործակցության վերականգնումը, ինչը
մտնում էր լեյբորիստների «Բարեկեցության պետություն» գաղա-
փարի շրջանակի մեջ: Սակայն սկսած 1975թ. ամռանից՝ Վիլսոնի
կառավարությունը ստիպված լինելով պայքարել սղածի ածի դեմ՝
բարձրացրեց հարկերը սպառողական ապրանքների վրա, կրծատ-
վեցին սոցիալական ծրագրերի համար հատկացված պետական
ծախսերը: Այսինքն՝ «սոցիալական կոնտրակտ» ծրագրով ծախսող-
վեց, ինչը և ստիպեց Վիլսոնին 1976թ. պաշտոնաթող լինել: Անգ-
լիայի վարչապետ է դառնում Ջեյմս Քալաֆիանը: Քալաֆիանը, լի-
նելով «սոցիալական կոնտրակտ» ծրագրի հեղինակը, այնուամե-
նայնիվ հայտարարեց դեպի պետական միջոցների խնայողության
քաղաքականությունը անցնելու մասին, պայքար սղածի դեմ, ազ-
գայնացման ծրագրերից հրաժարում: Լեյբորիստական կառավա-
րությունը վերջնականապես հրաժարվում էր իր «սոցիալական
կոնտրակտ» ծրագրից: Դա, ինչպես նաև լեյբորիստների տնտեսա-
կան և սոցիալական քաղաքականությունը, ոժգոհություն է առա-
ջացնում առաջին հերթին բանվոր դասակարգի շրջանում և դրա
հետևանքը եղավ այն, որ կրծատվեց լեյբորիստների ընտրողների
խավը: Սակայն 1977թ. կեսից, երբ ճգնաժամային լարվածությունը
ընկնում է, արդյունաբերության արտադրության մակարդակը

սկսում է կամաց բարձրանալ, իսկ սղաճը իշնում է մինչև 16%, 1978թ.՝ 8%: Սակայն և այս բարենպաստ տնտեսական վիճակում լեյբորիստական կառավարությունը չի փոխում իր սոցիալական քաղաքականությունը, ինչը բերեց բանվոր դասակարգի դժգոհության նոր ալիքի բարձրացմանը: 1978թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Բրիտանիայի տրեյլ-յունիոնների կոնգրեսը, որտեղ կառավարության դեմ ուղղված բանաձև ընդունվեց: Սկսվեցին մասայական գործադուլներ, որոնք ապակայունացրեցին երկրի վիճակը, իսկ տարվա վերջում ներքաղաքական իրավիճակը ավելի է սրվեց: Քայլագիւնը ստիպված եղավ ցրել պաշտամենտը և օճակ վարաժամկետ ընտրությունների: Նրանք տեղի ունեցան 1979թ. մայիսի 3-ին և բերեցին հետևյալ արդյունքների՝ պահպանողականները ստացան պառամենտում 339 տեղ, լեյբորիստները՝ 268 տեղ: Պահպանողականների կառավարությունը գլխավորեց Մարզարետ Թետչերը:

5. Մեծ Բրիտանիան և 60-70թթ. միջազգային հարաբերությունները:

60-ական թթ. «առանձնահատուկ» հարաբերությունների ինտենսիվությունը Լոնդոնի և Վաշինգտոնի միջև նվազել էր: Չմերժելով ատլանտյան համերաշխության սկզբունքը Վիլսոնը միևնույն ժամանակ սկզբունքորեն հրաժարվում էր ԱՄՆ-ի «կրտսեր պարտնյորի» դերից: Անգլո-ամերիկյան հարաբերությունների համար որոշիչ է դառնում այն հանգամանքը, որ Լոնդոնը հրաժարվում է Վիետնամ ուղարկել գոնե սինվոլիկ զորաբաժին: Դիրի կառավարության ժամանակ անգլո-ամերիկյան հարաբերությունների մեջ փոփոխություն տեղի չունեցավ: 1971թ. Ճնշվաստանի և Պակիստանի միջև երկրորդ պատերազմի ժամանակ ԱՄՆ աջակցում էր Պակիստանին՝ չնայած Մեծ Բրիտանիայի կողմից ձեռնարկած բոլոր փորձերին չեղոք դիրք պահպանել և միջնորդի դեր խաղալ: Այդ ժամանակ ԱՄՆ նաև առանձին քաղաքական բանակցություններ է սկսում վարել Չինաստանի հետ՝ հաշվի չառնելով Անգլիայի շահերը հարավ-ասիական ռեգիոնում: Իր հերթին Անգլիան չպաշտպանեց կոչտ հակաարաբական դիրքը, որը Վաշինգտոնը բռնել էր երկու արաբահարայելական պատերազմների ժամանակ 1967թ. և 1973 թթ: Միայն սկսած 1974 թ-ից անգլո-ամերիկյան հարաբերությունները նորից սկսում են ջերմանալ:

Անգլո-խորհրդային հարաբերությունները զգալի չափով լավացան վարչապետ Վիլսոնի 1974թ. Սուկվա կատարված այցից հետո: Անգլիան ակտիվ մասնակցեց համաեվրոպական անվտան-

գության համակարգի կազմավորման գործընթացի մեջ: 1975թ. օգոստոսի 1-ին վարչապետ Վիլսոնը մյուս պետությունների ղեկավարների հետ միասին ստորագրեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության Շելսինկյան խորհրդակցության եզրափակիչ ակտը: Անգլիան գնալով կորցնում էր իր դիրքերը երրորդ աշխարհում: 1965թ. Յնդկաստանի և Պակիստանի միջև տեղի ունեցավ առաջին պատերազմը, որը Անգլիային այդպես էլ չհաջողվեց կանխել: Երկրորդ պատերազմն այդ երկրների միջև տեղի ունեցավ 1971թ. դեկտեմբերին, որի ժամանակ ԽՍՀՄ-ը պաշտպանեց Յնդկաստանին, իսկ ԱՄՆ-ը՝ Պակիստանին: Յնդկաստանը հաղթանակ տարավ, որից հետո Պակիստանից անջատվեց և անկախացավ Բանգլադեշը: Այդ պահից Պակիստանը դարձնում է ԱՄՆ-ի դաշնակիցը, Յնդկաստանը՝ ԽՍՀՄ-ի, իսկ Անգլիայի ազդեցությունը այդ տարածաշրջանում զգալի չափով թուլացավ:

Աֆրիկայում Անգլիան չկարողացավ գտնել Յարավային Ռուեգիայի և Յարավ-Աֆրիկյան Յանրապետության պրոբլեմների լուծումը, որտեղ սպիտակամորթ փոքրամասնության կողմից հաստատվել էին ռասիստական վարչակարգեր: Դա դժգոհություն էր առաջացնում Բիհիտանական ազգերի համագործակցության մեջ մտնող աֆրիկյան պետությունների շրջանում:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ 80-90ԹԹ.

**1. Մեծ Բրիտանիան Ս. Թետչերի (1979-1990թթ.) և
Զոն Մեյջորի (1990-1997թ.) կառավարման տարիներին:**



Մարգարետ Թետչերը ծնվել էր 1925թ. նպարավաճառի ընտանիքում, ստացել է քիմիկոսի մասնագիտություն: Սակայն դեռ քոլեջում Թետչերը արդեն ընդգրկվեց պահպանողական-ների շարքերում և ակտիվ մասնակցություն ունեցավ քաղաքական կյանքում: Այդ պահից Թետչերը իրեն լիովին նվիրեց քաղաքական կարիերային: Արդեն 60-ական թթ. վերջում նա մեծ հեղինակություն էր վայելում կուսակցությունում և 1975թ. ներկուսակցական պայքարում հաղթող դրւյս եկավ և դարձավ պահպանողական կուսակցության առաջնորդը՝ փոխարինելով Չիթին: Պետք է նշել, որ կուսակցությունը այդ ժամանակ գտնվում էր զգնաժամի մեջ տարբեր խմբակների մրցակցության պատճառով: Ընկնում էր ընտրողների կստահությունը: Կուսակցության թիվը 50-ական թթ. համենատությանք նվազել էր երկու անգամ: Պետք էր համախմբել կուսակցության բոլոր անդամներին: Այդ պատճառով Թետչերը փոխում է ղեկավարության ոճը: Նա համոզված էր, որ առանց հարյուրավոր կուսակցական ակտիվիստների աջակցության հնարավոր չէր ռադիկալ բարեփոխումներ անցկացնել: Կուսակցությանը հարկավոր էր նոր տիպի առաջնորդ՝ կոչում մարտիկ, վճռական քաղաքական գործիչ: Թետչերը իր վրա վերցրեց «գեներալի» դերը, որը «զորքը ճակատամարտի է տանում» հանուն «ազգի փրկության»: Սակայն, նվաճելով «երկարյա լեդի» համբավը, Թետչերը մյուս կողմից աշխատում էր պահպանել «մեր մարտը» իմիջը կուսակցության շարքային անդամների համար: Այդպիսի քաղաքական ոճը դառնում է բրիտանական նեոպահպանողականության առանձնահատուկ գիծը:

Փ³ Ռ³ Ա»Ռ Ճ»Ռ

Նը այդ ժամանակ գտնվում էր զգնաժամի մեջ տարբեր խմբակների մրցակցության պատճառով: Ընկնում էր ընտրողների կստահությունը: Կուսակցության թիվը 50-ական թթ. համենատությանք նվազել էր երկու անգամ: Պետք էր համախմբել կուսակցության բոլոր անդամներին: Այդ պատճառով Թետչերը փոխում է ղեկավարության ոճը: Նա համոզված էր, որ առանց հարյուրավոր կուսակցական ակտիվիստների աջակցության հնարավոր չէր ռադիկալ բարեփոխումներ անցկացնել: Կուսակցությանը հարկավոր էր նոր տիպի առաջնորդ՝ կոչում մարտիկ, վճռական քաղաքական գործիչ: Թետչերը իր վրա վերցրեց «գեներալի» դերը, որը «զորքը ճակատամարտի է տանում» հանուն «ազգի փրկության»: Սակայն, նվաճելով «երկարյա լեդի» համբավը, Թետչերը մյուս կողմից աշխատում էր պահպանել «մեր մարտը» իմիջը կուսակցության շարքային անդամների համար: Այդպիսի քաղաքական ոճը դառնում է բրիտանական նեոպահպանողականության առանձնահատուկ գիծը:

Թետչերը միշտ արհամարհանքով էր վերաբերվում լեյբորիստների սոցիալիստական համարվող ալլաներին ու գործողութ-

յուններին: «Դակակոմունիզմն իմ արյան մեջ է», - ասում էր Թետչերը և իր առջև խնդիր էր դրել կանգնեցնել «Անգլիայի սովոր դեպի սոցիալիզմ»: Թետչերը փաստորեն հանդես եկավ որպես Անգլիան «դասական կապիտալիզմի հիմունքներին» վերադարձնելու վճռական կողմանկից: Թետչերի և նրա կառավարության կողմից մշակած սոցիալ-տնտեսական ծրագիրը հետագայում կոչվեց «թետչերիզմ»: «Թետչերիզմը» և նեռափականողականությունը հիմնվել էին արդի տնտեսական գաղափարախոսության վրա: Այդ գաղափարախոսության հիմքը կազմեց «մոնետարիստական» տեսությունը, որի հեղինակն էր ամերիկայն տնտեսագետ ալոֆեսոր Միլրոն Ֆրիդմանը Չիկագոյի մոնետարիզմի դպրոցից: Անգլիայում մոնետարիստական տեսությունը իր զարգացումը ունեցավ դեռ 60-ական թթ. Մանչեստերի համալսարանում: Այդ տեսության և «թետչերիզմի» հիմնական դրույթները հետևյալն են՝ 1. Քրաժարվել տնտեսությունը պետության կողմից կարգավորելու գաղափարից; 2. Պետությունը պետք է հրաժարվի անեկամտաբեր ձեռնարկությունների բյուջետային ֆինանսավորումից; 3. Պետության հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի սղածի դեմ պայքարը; 4. Տնտեսության պետական հատվածի լրիվ և անվերապահ ապազգայնացում; 5. Տնտեսական բարեկեցության հիմքը պետք է դառնային մասնավոր ձեռնարկությունները, շուկայական ձեռնարկասիրական գործունեությունը: Իսկ պետությունը պետք է ապահովի այդ տնտեսական համակարգի կայուն կենսագործունեությունը; 6. Սոցիալական ծրագրերի համար ֆինանսավորման կտրուկ կրծատում; 7. Արիմիությունների իրավունքների սահմանափակում:

Թետչերի և նրա համախոնների կարևորագույն արժանիքը կայանում էր «մոնետարիզմի» տնտեսական տեսությունը ամբողջական սոցիալ-քաղաքական գաղափարախոսության վերածնան մեջ: Բացի շուկայական արդյունավետությունից, որը պետք է տար տնտեսական զարգացման նոր մոդելը, նեռափականողականները ձգուում էին վերականգնել անձի սոցիալական ակտիվությունը և պատասխանատվությունը, աջակցել կոնկրետ մարդու շահերին, որը պայքարում է իր կյանքի բարեկարգման համար, այլ ոչ թե հույսը դնում է պետության վրա: Թետչերի խոսքերը, որ «Անվճար պանիրը լինում է միայն մկան թակարդի մեջ», դառնում են այդ սոցիալական գաղափարախոսության խորհրդանիշը: Բրիտանական նեռափականողական գաղափարի առանձնահատկությունն այն էր, որ մեծ դեր էր հատկացվում անգլիացիների «բնական» կոնսերվատիզմին, բրիտանական հասարակության հոգեկան հարստություններին՝ հարգանք ընտանիքի և եկեղեցու, օրենքի և կարգապահության, աշխատասիրության և խնայողության հանդեպ: «Օրենք և կարգա-

պահություն» կարգախոսը Թետչերի քաղաքական ծրագրի մեջ զբաղացրեց կենտրոնական տեղերից մեկը:

Թետչերի կառավարությանը բաժին է ընկնում շատ բարդ պրոբլեմներ սոցիալական և տնտեսական քաղաքականության բնագավառներում: Ակսած 1979թ. կեսից տնտեսությունը զգալի անկում է ունենում: Ինչպես ասվեց, «նավթային շոկը» շատ մեծ բացասական ազդեցություն ունեցավ Անգլիայի աճքողջ տնտեսության վրա: Սակայն անախոժությունները Անգլիայի համար դրանով չափարտվեցին: 1979թ. Իրանում տապալվում է շահի վարչակարգը, և շուտով սկսվում է Իրան-Իրաք պատերազմը, որի հետևանքով ՕՊԵԿ-ը երկու անգամ բարձրացրեց նավթի գինը: Անգլիայում արդյունաբերության արտադրության ընդհանուր անկումը կազմեց 12%, ընդ որում թերև արդյունաբերությունում 27%: ճգնաժամը ուղեցվում էր սղաճի և գործազրկության կտրուկ աճով: Գործազրկությունը թիվը 1980-1981թթ. ավելացավ 1, 5-ից մինչև 3, 3 մլն. մարդ: Սակայն, չնայած այդպիսի անբարենպաստ պայմաններին, Թետչերի կառավարությունը չնահանջեց տնտեսության մեջ ստրուկտուրային բարեփոխում անցկացնելու ծրագրից: Ինչպես և նախատեսվել էր, պետությունը հրաժարվեց արդյունաբերական ձեռնարկություններին դոտացիաներ տալու քաղաքականությունից: Բարեփոխման ենթարկվեց և հարկադրումի համակարգը: Իշեցվեց եկամտահարկը, իսկ ուղղակի հարկերը խոչոր եկամուտների վրա կրճատվեցին 3, 5 մլրդ. ֆունտ ստերլինգով, միևնույն ժամանակ բարձրացվեցին անուղղակի հարկերը: 8%-ից մինչև 15% բարձրացվեց նաև ավելացված արժեքի հարկը: Այդ հարկով հարկադրվում էին մի շարք սպառողական ապրանքներ, կենցաղային սպասարկումներ և այլն: Բոլոր այդ միջոցառումները ուղեցվում էին ակտիվ պողպատճանիստական կամպանիայով՝ անձնական սպառման կրճատման ուղղությամբ: Կառավարությունը կոչ էր անում ազգին «ապրել ըստ միջոցների»: Թետչերը կտրուկ կրճատեց պետական ծախսերը կոմունալ և ճանապարհային տնտեսությունների վրա, մշակույթի և կրթության բնագավառներում՝ խնայելով 1980-1981թթ. 4 մլրդ. ֆունտ ստերլինգ: Միևնույն ժամանակ կրճատվում էր և պետական ապարատը: Անց էր կացվում պետական ձեռնարկությունների ապահովականացումը, ինչից բյուջեն մեծ համալրում ստացավ: Հակասղաճային և կառուցվածքային քաղաքականությունը, որը անց էր կացնում Թետչերի կառավարությունը, թույլ տվեց 1981-1982թթ. հասնել դրական արդյունքների: Սղաճը իջավ մինչև 4%, տնտեսության մեջ աճի նշաններ երևացին, իսկ 1983թ. սկսած նկատվեց արտադրության զգալի աճ: Կտրուկ բարձրացան անգլիական խոչոր մենաշնորհների բաժնե-

տիրական տոմսերի կուրսերը, զգալի աճ էին ապրում մասնավոր ներդրումները: Սակայն, մյուս կողմից, «ցնցումային թերապիան» ուներ նաև բացասական հետևանքներ՝ ձեռնարկությունների ապապետականացումը ուղեկցվում էր գործազրկության կտրուկ աճով: Միայն 1980-1983թ. ընթացքում գործազրկությունների թիվը 2 մլն-ից հասավ մինչև 3 մլն. նարդ: Տեղի էին ունենում մեծ թվով հակակառավարական բողոքի ցույցեր աշխատանքից զրկվող բանվորների կողմից, որոնք հաճախակի ավարտվում էին ոստիկանության հետ բախումներով: Ի պատասխան՝ կառավարությունը ընդունում է մի շարք օրենքներ, որոնք ուղղված էին արհմիությունների իրավունքների և գործադրությունների դեմ:

Թետչերի կառավարության համար մեծ փորձություն եղավ 1982թ. Արգենտինայի դեմ պատերազմը Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիների համար: Այդ պատերազմը շովիմիստական նոլուցը առաջացրեց Անգլիայում, որը Թետչերը կարողացավ հմտորեն օգտագործել: Այդ պատերազմի ընթացքում Թետչերը անձամբ դեկավարում էր բոլոր քաղաքական, դիվանագիտական և ռազմական գործողությունները, ավելորդ անգամ հաստատելով «Երկարե լեդիի» համբավը: Հայրանակն այդ պատերազմում նպաստեց Թետչերի և նրա կառավարության հեղինակության բարձրացմանը և դիրքերի ամրապնդմանը: Օգտվելով ստեղծված բարենպաստ պայմաններից՝ Թետչերը որոշեց անցկացնել վաղաժամկետ ընտրություններ: Ընտրությունները տեղի ունեցան 1983թ. հունիսի 9-ին և ավարտվեցին պահպանողականների համոզիչ հաղթանակով: Նրանք ստացան 397 տեղ, լեյբորիստները՝ 209 տեղ: Լեյբորիստների այդպիսի անհաջողությունը կապված էր կուսակցության տրոհման հետ, որը տեղի ունեցավ 1981թ-ին: Լեյբորիստական կուսակցությունից անջատվեց Ռոյ Ջենկինսի գլխավորած խումբը, որը ստեղծեց նոր՝ Մեծ Բրիտանիյաի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը:

80-ական թթ. կեսին Թետչերի կառավարությունը անցկացրեց ամենալայնածավալ և հետևողական բարեփոխումներ: 1984-1987թ. ապապետականացվեց արդյունաբերական հիմնարկների 1/3, այդ թվում հեռուստականունիկացիաներ, պողպատաձուլման ձեռնարկություններ, զագի արդյունաբերությունը, էլեկտրաէներգետիկան: Բացի ապապետականացումից, Թետչերի կառավարությունը կտրուկ կրճատեց ամեն տեսակի օգնությունը պետական հիմնարկներին (շուրջ 10 անգամ 1980-1987թթ. ընթացքում): Ընդհանուր պետական ներդրումների ծավալը կրճատվեց 50-ից մինչև 25%: Դա հնարավորություն տվեց կայունացնել բյուջեն և թույլ չտալ տնտեսական վերելքի պայմաններում սղածի նոր աճ: Միևնույն ժամանակ կառավարությունը մեծ ուշադրություն էր հատ-

կացնում անգլիական խոշոր մենաշնորհներին, որոնք ներկայացնում էին անգլիական կապիտալը համաշխարհային շուկաներում, նրանց անհրաժեշտության դեպքում տրամադրելով ֆինանսական օգնություն: Կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում նաև միջին և մասն բիզնեսի զարգացման վրա: Արդյունքում 1980-1987թ. ընթացքում սեփական գործ ունեցողների թիվը 1, 9-ից հասավ մինչև 3 մլն. մարդ: Բացի այդ, մասշտաբային ապագետականացումը թույլ տվեց բնակչության լայն զանգվածներին դառնալ բաժնետեր: 80-ական թթ. վերջում Անգլիան բաժնետերերի թվաքանակությամբ գրադացնում էր 2-րդ տեղը ԱՍՄ-ից հետո: Թետչերի կառավարության գործողությունների հետևանքով Անգլիայի տնտեսությունը այդ տարիներին վերելք է ապրում՝ տարեկան աճը կազմում էր 3-4%, իսկ աշխատանքի արտադրողականությամբ Անգլիան զիջում էր միայն նապանհային:

Կրծատվեց գործազուրկների թիվը՝ 2, 6 մլն. 1979թ. մինչև 1,9 մլն. 1987թ: Տնտեսական վերելքը ուղեկցվում էր անգլիացիների բարեկեցության բարձրացումով: Բնակչության եկամուտները այդ տարիներին աճում էին տարեկան մոտ 5%: Այդ ժամանակվա ընթացքում արդեն անգլիացիների 64% ունեին սեփական տներ, 70%-ից ավելին՝ ավտոմեքենաներ, շուրջ 50%-ը հնարավորություն ուներ, որ իրենց երեխաները կրթություն ստանան վճարովի ոսումնական հաստատություններում, որոնք ապահովում էին կրթություն ստանալու համար ավելի բարձր մակարդակ: Բնակչության այդ շերտը իրեն անվանում էր «միջին դասակարգ»:

Տնտեսական ածի ֆոնի վրա թետչերը որոշում է ցույլ պառլամենտը: Նոր ընտրությունները կայացան 1987թ. հունիսի 11-ին, և ինչպես սպասվում էր, պահպանողականները նորից մեծ առավելությամբ հաղթում են՝ ստանալով 376 տեղ, լեյբորիստները, որոնց ներկուսակցական ճգնաժամը շարունակվում էր, ստացան 229 պատգամովարական տեղ: 1988-1989թթ. կառավարությունը շարունակում է կենսագործել իր կուրսը. ապագետականցվեցին նոր ձեռնարկություններ, օդանավակայաններ, մունիցիպալ շենքեր: Շարունակվեց նաև առողջապահության և կրթության բնագավառներում շուկայական հարաբերությունների հաստատման գործընթացը: Սակայն 1989թ. ներքին սոցիալ-քաղաքական դրությունը երկրում սրվում է: Դրա պատճառն է դատնում թետչերի կողմից ձեռնարկած «օլիսահարկի» մասին օրենքի փոփոխությունը: Այդ հարկը մունիցիպալիտետները գանձում էին 18 տարեկան լրացած յուրաքանչյուր բնակչից և հավաքված միջոցները ծախսում էին հասարակական ծառայությունների համար: Եթե նախկինում «օլիսահարկը» գանձում էին ամբողջ ընտանիքից՝ հաշվի առնելով նրա

կազմը, Եկամուտները, բնակարանի կամ տան արժեքը, ապա նոր օրենքով այդ հարկը սահմանվում էր բոլորի համար հավասարա-չափ, ինչից տուժում էին բազմամարդ ընտանիքները, բայց շահում էին նաև սահմանավոր տների միայնակ հարուստ բնակիչները: Օգտվելով նոր օրենքից՝ մունիցիպալիտետները սահմանում էին գլխահարկի բարձր չափեր: Դա տեղիք տվեց բողոքի ցույցերի և հանրահավաք-ների տարբեր քաղաքներում, որոնց դեմ սկսեցին կիրառել ոստի-կանական ուժեր: Օրինակ՝ Լոնդոնում բողոքի ցույցին նաև ակցեց մոտ 200.000 մարդ, որը ավարտվեց Տրաֆալգարյան հրապարա-կում բախտումով ցուցարարների և ոստիկանության միջև (անգլիա-կան նաև անգլիական այն անվանեց «Տրաֆալգարյան ճակատանարտ»): Այդ իրադարձությունները մեծ հարված հասցին թետչերի հեղի-նակությանը: Բացի այդ, բարեփոխումների հետևանքով հասարա-կությունում տեղի ունեցավ խորը սոցիալական բներացում՝ ընտա-նիքների մոտավորապես 20% հայտնվեցին աղքատության պայ-մաններում: Եվ, վերջապես, անգլիական հասարակության զգալի մասը հոգնել էր թետչերի քաղաքական ոժից, անհաշտությունից, ավտորիտարիզմից: Դժգոհություն էին արտահայտում նաև թետչ-նի մերձավոր շրջապատից շատերը: Դասկանալով, որ կուսակցությունը կանգնած է տրոհման եզրին, թետչերը 1990թ. աշնանը պաշ-տոնարոտ է լինում, կուսակցության առաջնորդի և վարչապետի ոե-րո գիշելով Զոհն Մեյջըրին: Մեյջըրը փոխեց պահպանողական կու-սակցության ղեկավարության իմիջը: Լինելով երիտասարդ (47 տա-րեկան), հմայիչ, միշտ բարյացակամ, հանգիստ, ունենալով թույլ ձայն՝ Մեյջըրը դուր էր գալիս ընտրողներին, որոնք հոգնել էին «եր-կարե լեռիի» ոժից: Մեյջըրը չէր շտապում ցրել պառլամենտը: Մեծ քարոզչական տպավորություն ունեցավ գլխահարկի մասին օրեն-քի չեղալ հայտարարումը: 1992թ. ապրիլի 2-ին կայացան հերթա-կան պառլամենտական ընտրությունները, որոնք նորից (4-րդ ան-գամ) հաղթանակ բերեցին պահպանողական կուսակցությանը՝ 338 տեղ հանայնքների պալատում: Լեյբորիստները, որոնք ստացան միայն 271 տեղ, այդպես էլ չկարողացան ձևավորել լեյբորիզմի նոր գաղափարախոսությունը: Պետք է նշել, որ 1988թ. միավորվեցին լիբերալ և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, և նոր կուսակցությունը կոչվեց լիբերալ դեմոկրատների կուսակցություն, որը 1992թ. ընտրություններին ստացավ 20 տեղ:

1992թ-ից երկրը նոր տնտեսական վերելք է սկսում ապրել, որը իր ինտենսիվությանը նինջև 1997թ. երկրորդ կեսը գերազան-ցում էր Եվրոպական համագործակցության (ԵՀ) մյուս երկրների զարգացման դինամիկան: Գործազրկության մակարդակը ցածր էր: Նոր տնտեսական վերելքի հիմնական պատճառներն էին՝ 1980-ա-

կան թթ. անցկացված բրիտանական տնտեսության մեջ կառուցվածքային վերակառուցումը, բրիտանական ապրանքների արտահանման ուժեղացումը, նավի և գազի արդյունահանման ընդլայնումը Հյուսիսային ծովում և նրանց արտահանումը: Աշխատանքի արտադրողականության տեմպերը արդյունաբերությունում հասնում է տարեկան 3-4%: Մեյջըրի կառավարությունը շարունակում էր վարել փոքր բիզնեսի աջակցության, ինչպես նաև ապահետականացման քաղաքականությունը: Ավարտվեց էլեկտրաէներգետիկայի ձեռնարկությունների ապահանականացման գործընթաց և շարունակվեց երկարուղային տրանսպորտի և հանքահորերի ապահետականացումը: Բրիտանական ապրանքների արտահանումը ավելի է ուժեղանում 1994-1995թթ: Այդ տարիներին ներմուծման աճի տեմպերը կազմում էին տարեկան 4-5%, իսկ արտահանման՝ տարեկան 10% (դեպի Եվ երկրներ՝ 14%): Եվ, ամենազիստավորը, տնտեսական աճը տեղի էր ունենում առանց սղածի: Պատերազմից հետո առաջին անգամ տնտեսական աճի տեմպերը կայուն կերպով գերազանցում էին գների աճի տեմպերը:

Մեյջըրի կառավարման ժամանակ ակտիվացավ ռեգիոնալ քաղաքականությունը: Այսպես՝ 1994թ. Շոտլանդիայում անցկացվեց տեղական իշխանության բարեփոխումը, ինչից հետո կառավարման ռեգիոնալ մարմինները էկոլոգիական քաղաքականության, ճանապարհային և բնակարանային շինարարության, կրթության և առողջապահության բնագավառներում ստացան ավելի լայն լիազորություններ և իրավունքներ: Ուելսում հաստատվեց մայրենի լեզվի արտոնությունը, նրա պարտադիր ուսումնասիրումը Ուելսի դպրոցներում: Ստեղծվեցին մայրենի լեզվով հեռուստավիճակներ և այլն: Քաղաքական դրույթունը Հյուսիսային հռլանդիայում շարունակում էր մնալ բարդ, Լոնդոնի բոլոր փորձերը, ինչ-որ չափով թուլացնել լարվածությունը, մնացին ապարդյուն:

1997թ. մայիսին տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որոնց արդյունքները շատ անսպասելի էին՝ լեյբորիստները ստացան 419 տեղ, պահպանողականները՝ 165, ինչը այդ կուսակցության համար ամենավատ արդյունքն էր վերջին 90 տարվա ընթացքում: Անզիստավի նոր վարչապետ է դառնում լեյբորիստական կուսակցության առաջնորդ Էնտոնի Բլերը:

2. Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությունը 80-90-ական թթ.:

Թետչերի արտաքին քաղաքականության ռազմավարությունը նախատեսում էր Մեծ Բրիտանիայի՝ որպես Մեծ տերության կարգավիճակ ունեցող երկրի վերականգնումը: 1979թ. Լուսակայում տեղի ունեցավ Համագործակցության կոնֆերանս, որտեղ անենասուր պրոբլեմն էր՝ Հարավային Ռոդեզիայի հարցը: Բրիտանական կողմը երաշխավորեց, որ Հարավային Ռոդեզիայում կանցկացվեն սահմանադրական բարեփոխումներ և ընդիանուր ընտրություններ: Անգլիան կատարեց իր խոստումը, և արդեն 1980թ. Հարավային Ռոդեզիայի փոխարեն առաջացավ նոր պետություն՝ Զիմբաբվեի Հանրապետությունը, որը դարձավ Համագործակցության անդամը: Սակայն Թետչերը դեմ էր, որպիսզի Հարավ-Աֆրիկյան Հանրապետության նկատմամբ որևէ պատժամիջոցներ կիրառվեն՝ չնայած նրան, որ այդ երկրում տիրում էր ապարտեիտի համակարգը: Բայց իրականում Թետչերը առաջնորդվում էր Անգլիայի շահերով, որն առաջին տեղում էր Հարավային Աֆրիկյան ներդրված կապիտալի ծավալով, և պատժամիջոցները կիարվածին անգլիական անդրազգային մենաշնորհների շահույթներին: Թետչերի և Մեյջըրի կառավարման ժամանակ Մեծ Բրիտանիայի առաջատար դիրքը Համագործակցությունում ավելի ամրապնդվեց:

Արդեն ասվել էր, որ 1982թ. տեղի ունեցավ կարճատև պատերազմ Անգլիայի և Արգենտինայի միջև Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիների համար, որոնք գտնվում են Ալտանտիկ օվկիանոսի հարավարևմտյան մասում և 1833թ.-ից անգլիացիների հսկողության տակ են: Պատերազմը սկսվեց 1982թ. ապրիլի 2-ին, երբ արգենտինյան զորքերը ափ իջան և կալանավորեցին կղզիների նահանգապետին և կայազորին: Նույն օրը Անգլիան խզում է բոլոր հարաբերությունները Արգենտինայի հետ և ուղարկում է դեպի կղզիներ 40 նավերից բախկացած ռազմական նավախումը: Պատերազմը տևեց 10 շաբաթ և ավարտվեց անգլիացիների հաղթանակով: Արգենտինացիները կորցրեցին սպանվածներով 1300 մարդ, անգլիացիները՝ 250: Ֆոլկլենդյան ճգնաժամը եապես ամրապնդեց անգլո-ամերիկյան դաշնակցային հարաբերությունները: Երբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում առաջ քաշվեց բանաձև, որով կողմները պետք է կանգնեցնեին ռազմական զործողությունները և սկսեին բանակցություններ վարել, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ վետո դրեցին այդ բանաձևի վրա: ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի բարեկամական հարաբերությունները պայմանավորված էին նաև Թետչերի և նախագահ Ուեյգանի անձնական ջերմ փոխհարաբերություններով: Անգ-

լիան պաշտպանում էր ԱՄՆ-ին բոլոր տարածքային կոնֆլիկտների հարցերում՝ իրանի դեմ պայքարում, ինչպես նաև խորհրդային զորքերի դեմ՝ Աֆղանիստանում: Թետչերը պաշտպանեց մուկով-յան օլիմպիադայի բոյկոտը, կրօնատեց տնտեսական և մշակութային համագործակցությունը ԽՍՀՄ-ի հետ: Անգլիան պաշտպանեց ԱՄՆ-ի ռազմական գործողությունը Լիբիայի դեմ 1986թ, երբ ամերիկյան ինքնաթիռները օգտագործում էին բրիտանական ռազմական օդանավակայացաները: Թետչերը մնում էր ՆԱՏՕ-ի հզորության ամրապնդման համար կողմնակից՝ դիտելով այն որպես միջազգային լավվածության բոլացմանը նպաստող գործոն: Նա միջուկային գենքը համարում էր խաղաղություն անրապնդող, համաշխարհային պատերազմը կանխարգելող միջոց և դեմ էր միջուկային լիակատար զինաթափնանը: Թետչերը չհամաձայնվեց իշեցնել բրիտանական միջուկային հզորության մակարդակը, երբ ԱՄՆ և ԽՍՀՄ-ը որոշեցին ոչնչացնել իրենց՝ եվրոպայի տարածքում տեղակայված միջին հեռահարության միջուկային գենքը:

Չնայած դրան, որ Թետչերը իր կառավարման առաջին տարիներին բռնել էր կոչու հակախորհրդական դիրք, նա արևանտյան առաջնորդներից առաջինն էր, որը ողջունեց ԽՍՀՄ-ում սկսած վերակառուցման քաղաքականությունը: Թետչերն առանձնահատուկ հարգանքով էր վերաբերվում Գորբաչովին, որի հետ բոլոր պաշտոնական և անպաշտոն հանդիպումներն անցնում էին սրտագին փոխըմբռնման մթնոլորտում:

Չոն Մեյջըրը հիմնականում հետևում էր իր նախորդի արտաքին քաղաքականության գծին: Նա հավանություն տվեց Երկու Գերմանիաների միավորնանը, սակայն առանց ավելորդ ոգևորության ընդունեց ԽՍՀՄ-ի փլուզումը: Ի տարբերություն Միտերանի և Քոլի, որոնք դատապարտեցին Չեչնիյաի իրադարձությունները, Մեյջըրը միայն արտահայտեց այդ կապակցությամբ «մտահոգություն»: Անգլիայի կողմից այդպիսի կորեկտ դիրքը Ռուսաստանի նկատմամբ թույլ տվեց Երկու պետությունների միջև հաստատել կառուցողական հարաբերություններ, սակայն «քացարիկ» փոխհարաբերություններ Մեյջըրի և Ելցինի միջև այդպես էլ չհաստատվեցին: Անգլիական զորքերը մասնակցեցին 1991թ. Իրաքի դեմ Պարսից ծոցի պատերազմին: Այդ պատերազմն էլ ավելի սերտացրեց Մեծ Բրիտանիյաի և ԱՄՆ-ի հարաբերությունները:

Անգլիան ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում Եվրոպական ինտեգրացիայի հետագա խորացման հետ կապված բոլոր միջոցառումներին: Նա պաշտպանեց Մաաստրիխտի պայմանագիրը Եվրոպական Միության (ԵՄ) ստեղծման մասին, սակայն Անգլիան ունի իր «հատուկ» կարծիքը ինտեգրացիայի գործընթացի տեսակե-

ոի վերաբերյալ: Օրինակ՝ երբ 2001թ. հունվարին Եվրոպական Միությունում մտցվեց ընդհանուր արժույթ՝ Եվրոն, Մեծ Բրիտանիան չմիացավ այդ որոշմանը:

Մեյջըրի կառավարման ժամանակ՝ 1994թ., տեղի ունեցավ Անգլիայի և Ֆրանսիայի միջև Լամանշի ճեղուցի տակով անցկացված քունելի բացումը, որը կարելի է համարել դարի խոշորագույն կառույցներից մեկը:

3. Ենտոմի Բլերը և «Նոր լեյբորիզմ»



ՑԱՌ ԱՅՑ ՇԵՌ

մավորման վրա: Այդ հարցերին էր նվիրված 1995թ. կայացած լեյբորիստական կուսակցության կոնֆերանսը: Փոխվեց կուսակցության կանոնադրությունը: Ըստ նոր կանոնադրության՝ լեյբորիստական կուսակցությունը դատնում էր «դեմոկրատական և սոցիալիստական», որի գործունեությունը պետք է ուղղված լինի «արդար հասարակության» ստեղծմանը: Իսկ այդ «արդար հասարակության» հիմքում պետք է լինեին դիմանմզմը և մրցակցությունը, որոնք պետք է ապահովեին հնարավորությունների հավասարություն, ինչպես նաև երաշխիք դառնային աղքատության դեմ: Պետք է նշել նաև, որ դեռ մինչև կոնֆերանսը լեյբորիստները փոխեցին իրենց կուսակցության խորհրդանշից՝ կարմիր դրոշը փոխարինվեց կարմիր վարդով: Այդ էին հիմնականում «Նոր լեյբորիզմի» դրույթները, որոնք թույլ տվեցին կուսակցությանը հաղթել ընտրություններում:

Եվ այսպես, 1997թ. մայիսին կայացած ընտրություններից հետո պահպանողական-ների 18 տարվա իշխանությունը վերջացավ: Իշխանության գլուխ անցան լեյբորիստները Ենտոմի Բլերի գլխավորությամբ: Բլերը լեյբորիստների առաջնորդ է դառնում 1994թ., 40 տարեկան հասակում: Բլերը մարմնավորում էր բրիտանական քաղաքական գործիչների նոր սերունդը: Նա իր հիմնական ճիգերը կենտրոնացրեց լեյբորիստական կուսակցության իմշտի փոփոխման, «նոր» գաղափարախոսության կազմավորման վրա: Այդ հարցերին էր նվիրված 1995թ. կայացած լեյ-

բորիստական կուսակցության կոնֆերանսը: Փոխվեց կուսակցության կանոնադրությունը: Ըստ նոր կանոնադրության՝ լեյբորիստական կուսակցությունը դատնում էր «դեմոկրատական և սոցիալիստական», որի գործունեությունը պետք է ուղղված լինի «արդար հասարակության» ստեղծմանը: Իսկ այդ «արդար հասարակության» հիմքում պետք է լինեին դիմանմզմը և մրցակցությունը, որոնք պետք է ապահովեին հնարավորությունների հավասարություն, ինչպես նաև երաշխիք դառնային աղքատության դեմ: Պետք է նշել նաև, որ դեռ մինչև կոնֆերանսը լեյբորիստները փոխեցին իրենց կուսակցության խորհրդանշից՝ կարմիր դրոշը փոխարինվեց կարմիր վարդով: Այդ էին հիմնականում «Նոր լեյբորիզմի» դրույթները, որոնք թույլ տվեցին կուսակցությանը հաղթել ընտրություններում:

Բայց ամենահետաքրքիրը այն է, որ Բլերը փաստորեն չփոխեց տնտեսական քաղաքականությունը: Ինչպես և պահպանողական-ների ժամանակ, առավելությունը տրվում էր նասնակոր հատվածին, պետությունը հաճարյա չէր խառնվում տնտեսական ընթացքի մեջ՝ միևնույն ժամանակ ամեն տեսակ աջակցություն ցույց տալով ձեռնարկատիրությանը, արտադրության բազայի տեխնիկական և տեխնոլոգիական մոդերնիզացմանը: XX-րդ դարում Մեծ Բրիտանիայի տնտեսությունը պահպանում էր ածի տեսակի կայունությունը, ինչպես նաև շուկայի բարենպաստ վիճակը և լավ պայմաններ ֆինանսական ներդրումների համար: Բոլոր երկրներից, որոնք մտնում են Եվրոպական համագործակցության մեջ, Մեծ Բրիտանիան արտասահմանյան ֆինանսական ներդրումների մակարդակով գրադեցնում է առաջին տեղը: Անգլիայում գործում են ավելի քան 13 000 արտասահմանյան ֆիրմաներ, այդ թվում նաև խոշորագույն անդրազգային մենաշնորհներ՝ բարձր տեխնոլոգիական արտադրության բնագավառում: Անցկացվող ֆինանսական քաղաքականությունը, որը նույնական Մեջքը կառավարության քաղաքականության շարունակությունն է, թույլ տվեց գգալի չափով իշեցնել պետական բյուջեի պակասուրդը, ինչը, իր հերթին, նպաստեց Մեծ Բրիտանիայի ամբողջ ֆինանսաարժութային համակարգի կայունացմանը: Սηամի մակարդակը 1999թ. կազմեց ընդամենը 3,4%:

1999թ. Անգլիայում անցկացվեց լորդերի պալատի բարեփոխում, որով պերը (լորդը) գրկվեց իր տիտղոսը որպես ժառանգություն թողնելու իրավունքից: Պերի (լորդի) տիտղոսի շնորհումը մնում է որպես թագավորին տրվող արտօնություն, սակայն թեկնածուների ընտրությունը պետք է կատարի հատուկ և անկախ հանձնաժողովը: Այդ բարեփոխման հետևանքը եղավ այն, որ վերին պալատի կազմը ենթարկվեց ռադիկալ փոփոխությունների. հեռացվեցին բոլոր ժառանգական լորդերը:

1997թ. Ուելսում և Շոտլանդիայում տեղի ունեցան հանրաքվեներ տեղական օրենսդիր ժողովների ստեղծման վերաբերյալ: Ուելսում հանրաքվեին նաև անցկացվեց բնակչության 50%, այդ պատճառով սահմանադրական բարեփոխումը այստեղ անցկացվեց ոչ լորիվ ծավալով: Ստեղծվեց ասամբլեա, որը իրավունք չունի ընդունել տարածքային օրենքներ և հարկեր հաստատել: Նրա իրավասության մեջ մտան միայն ռեգիոնալ տնտեսական զարգացման, գյուղատնտեսության, կրթության և բնապահպանության (էկոլոգիայի) հետ կապված հարցերը: Շոտլանդիայում սահմանադրական բարեփոխումը հավանություն ստացավ բնակչության 74%-ի կողմից: Շոտլանդիական պառլամենտը ստացավ լայն լիազորութ-

յուններ, այդ թվում նաև տարածքային օրենքների ընդունում, որոնք չպետք է հակասեն կենտրոնական օրենսդրությանը: Պարլամենտը իրավունք ստացավ նաև հաստատել և հավաքել հարկերը: Շոտլանդական պառլամենտի վերականգնումից հետո կարող է հետևել նաև Շոտլանդիայի անջատումը Միացյալ Թագավորությունից: Սակայն ընտրությունների ժամանակ շոտլանդական Ազգային կուսակցությունը՝ անջատման կողմնակիցները, առայժմ պարտություն կրեց: Շոտլանդական պառլամենտի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1999թ. հուլիսի 1-ին:

Մեծ Բրիտանիայի համար իրեն ծանրագույն քաղաքական խնդիր է մնում Յոյուսիսային Իռլանդիայի հարցը: Բլերը համաձայնվեց, որ բանակցություններում մասնակցեն Շին Ֆեյն կուսակցության ներկայացուցիչները, և 1998թ. ապրիլին ԱՄՆ-ի միջնորդությամբ ստորագրվեց Եռակողմնական պայմանգիր, որով՝ 1. վերականգնվում էր Յոյուսիսային Իռլանդիայի քաղաքական ինքնավարության կարգավիճակը, 2. ստեղծվեց Յոյուսիսային Իռլանդիայի ազգային ասամբլեա, որը պետք է աշխատի «երկողմանի համաձայնության» կանոններով, այսինքն՝ ամեն մի որոշում ընդունելու համար պահանջվում է ինչպես կաթոլիկ, այդպես էլ բողոքական պատգամավորների համաձայնությունը 3. Իռլանդիան պարտավորվեց հրաժարվել Օլյսթերից. 4. Անգլիան համաձայնվեց համախումբական տեղական ինքնավար մարմինների ստեղծմանը: Քաշտության պայմանագիրը հաստատվեց 1998թ. նայիսի 22-ին՝ հանրաքվեի ժամանակ: Յոյուսիսային Իռլանդիայում «կողմ» քվեարկեց բնակչության 71%, Իռլանդիայում 94%: 1998թ. հունիսին տեղի ունեցան ընտրություններ Ազգային ասամբլեա, որը պետք է կազմեր կառավարությունը: Սակայն 1999թ. Իռլանդական հանրապետական բանակը հրաժարվեց կատարել իր կողմից տրված գինաբափման խոստումը և ահաբեկչական գործողությունները շարունակվեցին: Այսիսով, պրոբլեմը, չնայած բոլոր ջանքերին, այդպես էլ մնաց չլուծված:

Արտաքին քաղաքանությունում Բլերը գնաց ԱՄՆ-ի հետ «առանձնահատուկ հարաբերությունների» էլ ավելի ամրապնդման ուղիով: Բլերը ցերմ անձնական հարաբերություններ ուներ նախագահ դեմոկրատ Բիլ Քլինտոնի հետ: 1998թ. փաստորեն միայն Լոնդոնը պաշտպանեց ԱՄՆ-ի՝ Սուրդանի և Աֆղանստանի այսպես կոչված «հակաահաբեկչական» ոմբակոծությունները: 1998թ. դեկտեմբերին տեղի ունեցան անգլո-աներիկյան հանատեղ ռազմական գործողություններ Իրաքի դեմ, իսկ 1999թ. Մեծ Բրիտանիան ԱՄՆ-ի հետ միասին Զարավսլավիայի դեմ ամենակոշտ գործողությունների կողմնակիցն էր:



Բրիտանական ռազմական ուժերը մասնակցություն ունեցան Սերբիայի ռմբակողություններին: Մեծ Բրիտանիան կողմնակից է «ՆԱՏՕ-ի դեպի արևելք ընդլայնման» գործընթացին: Պետք է նշել նաև, որ հաջողվել է անձնական ջերմ հարաբերություններ հաստատել նաև ներկայիս ԱՄՆ-ի նախագահ՝ հանրապետական Ջորջ Բուչի հետ և «առանձնահատուկ հարաբերությունները» երկու երկրների միջև գտնվում են ծաղկման մեջ: 2001թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո Բլերը անձանբ միանգամից ժամանեց Վաշինգտոն՝ ցույց տալով, որ Մեծ Բրիտանիան միշտ Ամերիկայի կողքին է: Նոր լեյբորիստական կառավարության սկզբում 1997թ. հուլիսի 1-ից, հայուր հիսունվեց տարվա տիրապետությունից հետո Մեծ Բրիտանիան վերադարձեց Զինաստանին Դոնկոնգը: Համաձայնությունը Զինաստանի հետ

կնքվեց դեռ 1984թ. Թետչերի իշխանության ժամանակ: Ըստ կնքված համաձայնագրի չինացիները՝ 50 տարվա ընթացքում անփոփոխ պետք է բողմեն Հոնկոնգի հասարակական կարգը:

1997թ. տեղի ունեցավ իրադարձություն, որը ցնցեց ամբողջ Անգլիան. օգոստոսի 31-ին գահաժառանգ Չարլզի նախկին կինը՝ արքայազնուհի Դիանան զոհվեց ավտովթարում իր սիրելկան՝ Եգիպտացի միլիարդատեր Շոդի Ալ Ֆայեդի հետ միասին Փարիզի կենտրոնում:

2001թ. գարնանը տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որոնք հաղթանակ բերեցին լեյբորիստներին, և Ենտոնի Բլերը նորից գլխավորեց լեյբորիստական կառավարությունը:

Անգլիայի և Սեծ Բրիտանիայի թագավորները և արքայաստիհմերը

Նորմանութեական արքայատոհմ

- Վիլհելմ I Նվաճողը (1066 - 1087)
 - Վիլհելմ II (1087 - 1100)
 - Ռենի I (1100 - 1135) բարոնների խռովության տարի-ները (1135-1153)
 - Ստեֆան (1153 - 1154)

Պյանտագենետների արքայատոհմ

1. Հենրի II (1154 - 1189)
 2. Ոհյարդ I Արյուծի Սիրտ (1189 - 1199)
 3. Զոն I (1199 - 1216)
 4. Հենրի III (1216 - 1272)
 5. Էդվարդ I (1272 - 1307)
 6. Էդվարդ II (1307 - 1327)
 7. Էդվարդ III (1327 - 1377)
 8. Ոհյարդ I (1377 - 1399)

Հանկաստերների արքայատոհմ

1. Տեղի IV (1399 - 1413)
 2. Տեղի V (1413 - 1422)
 3. Տեղի VI (1422 - 1461)

Յորբերի առայատուհի

1. Εηψαρη IV (1461 - 1483)
 2. Εηψαρη V (1483)
 3. Οηξαρη III (1483 - 1485)

Թյուլղորների արքայատոհմ

1. Հենրի VII (1485 - 1509)
 2. Հենրի VIII (1509 - 1547)
 3. Էդվարդ VI (1547 - 1553)
 4. Սարժա (1553 - 1558)
 5. Էլիզաբեթ I (1558 - 1603)

Ստյուարտների առայատուիմ

1. Զեյնու I (1603 - 1625)
 2. Կառլոս I (1625 - 1649) - զիշատվեց
1649 - 1653` հանրապետություն

- 1653 - 1658՝ Կրոնվելի պրոտեկտորատ
3. Կառլոս II (1660 - 1685)
 4. Ֆեյմս II (1685 - 1688)` գահազրկում է 1688թ. «փառավոր հեղափոխություն»
 5. Վիլհելմ III (1688 - 1702)
 6. Աննա Ստյուարտ (1702 - 1714)

Դանուբերյան արքայատոհներ

1. Ջորջ I (1714 - 1727)
2. Ջորջ II (1727 - 1760)
3. Ջորջ III (1760 - 1820)
4. Ջորջ IV (1820 - 1830)
5. Վիլհելմ IV (1830 - 1837)
6. Վիկտորիա (1837 - 1901)

Վինդզորների արքայատոհներ

1. Եղիշարդ VII (1901 - 1910)
2. Ջորջ V (1910 -1936)
3. Եղիշարդ VIII (1936թ Դրաժմարվեց գահից)
4. Ջորջ VI (1936 - 1952)
5. Ելիզաբեթ II (1952-)



ՀԱՇՎՅ Ա»Ա II

Անգլիայի վարչապետները (XIXդ. վերջ - XXդ.)

- | | |
|-----|--|
| կան | 1. Բենժամեն Դիզրաելի (1874 - 1880) – պահպանողա- |
| | 2. Ուիլյամ Գլադսթոն (1880 - 1885) – լիբերալ |
| | 3. Որեթու Սոլսբերի (1885 - 1892) – պահպանողական |
| | 4. Ուիլյամ Գլադսթոն (1892 - 1894) – լիբերալ |
| | 5. Որեթու Սոլսբերի (1894 - 1902) – պահպանողական |
| | 6. Արթուր Քալֆուր (1902 - 1905) – պահպանողական |
| | 7. Ջեմի Քեմփրել – Բաներման (1905 - 1908) – լիբերալ |
| | 8. Ջերերդ Էսքիթ (1908 - 1916) – լիբերալ |
| | 9. Դեվիդ Լոյդ Ջորջ (1916 - 1922) – լիբերալ |
| | 10. Մթենի Բոլդուին (1923 - 1924) – պահպանողական |
| | 11. Ուամսեյ Մակդոնալդ (1924) – լեյբորիստ |
| | 12. Մթենի Բոլդուին (1924 - 1929) – պահպանողական |
| | 13. Ուամսեյ Մակդոնալդ (1929 - 1931) – լեյբորիստ |
| | 14. Ուամսեյ Մակդոնալդ (1931 - 1935) – դուրս եկավ լեյ-
ցիոն կառավարությունը» |
| | 15. Մթենի Բոլդուին (1935 - 1937) – պահպանողական |
| | 16. Նեվի Չեմբերլեն (1937 - 1940) – պահպանողական |
| | 17. Ուինսթոն Չերչիլ (1940 - 1945) – պահպանողական |
| | 18. Կլեմենթ Էթլի (1945 - 1951) – լեյբորիստ |
| | 19. Ուինսթոն Չերչիլ (1951 - 1955) – պահպանողական |
| | 20. Արթուր Իդեն (1955 - 1957) – պահպանողական |
| | 21. Ջարոլ Մակմիլան (1957 - 1963) – պահպանողական |
| | 22. Ալեկ Ռուգլաս – Ջյում (1963 - 1964) – պահպանողա- |
| կան | 23. Ջարոլ Վիլսոն (1964 - 1970) – լեյբորիստ |
| | 24. Էդվարդ Շիր (1970 - 1974) – պահպանողական |
| | 25. Ջարոլ Վիլսոն (1974 - 1976) – լեյբորիստ |
| | 26. Ջեյմս Թալագիան (1976 - 1979) – լեյբորիստ |
| | 27. Մարգարետ Թետչեր (1979 - 1990) – պահպանողա- |
| կան | 28. Ջոն Մեյջըր (1990 - 1997) – պահպանողական |
| | 29. Էնտոնի Բլեր (1997 -) – լեյբորիստ |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին

Ֆրանսիան 2-րդ համաշխարհային պատերազմից հետո:

4-րդ Հանրապետություն

4

1. Ժամանակավոր վարչակարգ: 4-րդ Հանրապետության սահմանադրա-իրավական ձևավորումը 4
2. Քաղաքական օրգագումը 50-ական թթ-ին: 4-րդ Հանրապետության սահմանադրափական ճգնաժամը 13
3. Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական օրգագումը 40-50-ական թթ-ի երկրորդ կեսին 21
4. Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում: Ալֆիրյան ճգնաժամը և գեներալ դը Գոլի իշխանություն գլուխ գալը 25

Գլուխ երկրորդ

Գոլիզմը և 5-րդ Հանրապետության կազմավորումը

32

1. Գոլիզմի քաղաքական փիլիսոփայությունը: 5-րդ Հանրապետության սահմանադրափական կառուցվածքը 32
2. Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական օրգագումը դը Գոլի կառավարման ժամանակաշրջանում 39
3. Դրգույան Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը 41
4. 1968թ-ի «կարմիր մայիսը» և դը Գոլի հրաժարականը 45
5. Ժորժ Պոմախու: Գոլիզմը դը Գոլից հետո 47

Գլուխ երրորդ

Ֆրանսիան 1974-2000 թթ-ի ժամանակաշրջանում

52

1. Ֆրանսիան 1974-1981թթ-ին: Կալերի ժիսկար դ' Էսթեն 52
2. 1981թ-ի նախագահական ընտրությունները: «Զախ էրսպերիմենտ» 58
3. 1986 և 1988թթ-ի ընտրական արշավները: «Համագոյակցության» առաջին փորձը 65
4. Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը 80-ական թթ-ին 73
5. Ֆրանսիայի ներքաղաքական և տնտեսական զարգացումը 90-ական թթ-ին 76
6. Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը 90-ական թթ-ին 85

Գլուխ չորրորդ	
Մեծ Բրիտանիան հետպատերազմյա առաջին տարիներին /1945-1950/: «Սառը պատերազմի» սկիզբը:	93
1. 1945թ-ի «Բրիտանական հեղափոխությունը»: Լեյբորիստների հաղթանակը	93
2. Լեյբորիստների ներքին և արտաքին քաղաքականությունը: «Սառը պատերազմի» սկիզբը	94
Գլուխ հինգերորդ	
Մեծ Բրիտանիան 50-70-ական թթ-ին	100
1. Պահպանողականների կառավարումը/1951-1964թ./: Չերչիլի երկրորդ անգամ իշխանություն գլուխ գալը	100
2. Յարող Վիլսոնի լեյբորիստական կառավարությունը/1964-1970թ./	106
3. Եղվարդ Չիթի պահպանողական կառավարությունը/1970-1974թ/	110
4. Մեծ Բրիտանիան Յարող Վիլսոնի/1974-1976թ./ և Զեյմս Քալագիանի/1976-1979թ/ կառավարման ժամանակաշրջանում	112
5. Մեծ Բրիտանիան և 60-70-ական թթ-ի միջազգային հարաբերությունները	114
Գլուխ վեցերորդ	
Մեծ Բրիտանիան 80-90-ական թթ-ին	116
1. Մ.Թետչերի/1979-1990թ./ և Զ.Մեջորի/1990-1997թ./ կառավարման տարիները	116
2. Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությունը 80- 90-ական թթ-ին	123
3. Էնտոնի Բլերը և «նոր լեյբորիզմը»	125